

ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ
TEHMINÉ MARTOYAN

«ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ»
ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

"THE CHRONICLE OF THE CARMELITES" AS A HISTORICAL SOURCE
OF THE 17th AND THE 18th CENTURIES OF IRAN



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ

«ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ»
ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄԷ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆ

«Լիմուշ» հրատարակչություն

2011

833646 947.925 + 327(479.25) ✓

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

TEHMINE MARTOYAN

**"THE CHRONICLE OF THE CARMELITES"
AS A HISTORICAL SOURCE OF THE
17TH AND THE 18TH CENTURIES OF IRAN**

1100099

THE BOOK IS RECOMMENDED FOR PUBLICATION BY THE SCIENTIFIC
COUNCIL OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES, NATIONAL
ACADEMY OF SCIENCES, REPUBLIC OF ARMENIA

YEREVAN

"Limush" publishing house

2011



ՀՏԳ- 941(479.25):327(479.25)
ԳՄԳ- 83.3(2Հ)+66.4(2Հ)
Մ 396

Խմբագիր՝ Վ. Ա. Բայրուրդյան
պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Մարտոյան Թեհմինե Ռոբիկի

Մ 396 «Կարմեյլանների տարեգրությունը»՝ որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր»/ Թ. Ռ. Մարտոյան: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ; Խմբ.՝ Վ. Ա. Բայրուրդյան.- Եր.: Լիմուշ, 2011.- 143 էջ:

Աշխատության մեջ քննարկվում են 17-18-րդ դարերում պատմաքաղաքական, տնտեսական նոր ձևավորումներով հանդես եկող կաթոլիկ առաքելությունների շարքում Կարմեյլանների գործունեության բուն պատճառները, նրանց գործավարության հեռահար նպատակներն ու հետևանքները:

Կարմեյլանների գործունեությունը որոշակի ազդեցություն է ունեցել ոչ միայն ժամանակի Իրանի արտաքին և ներքին համակարգման վրա, այլև ընդգրկել է իրանական միջավայրում գոյատևող և գործող ազգային տարբեր փոքրամասնությունների և հատկապես հայկական տարրը:

Աշխատությունը հասցեագրված է արևելագետներին, միջազգայնագետներին, պատմաբաններին, ինչպես նաև ըմբեցող լայն շրջաններին:

ՀՏԳ- 941(479.25):327(479.25)
ԳՄԳ- 83.3(2Հ)+66.4(2Հ)

ISBN 978-9939-64-090-7

© Թեհմինե Մարտոյան, 2011

ՆԱԻՐՈՒՄ ԵՎ ՊԵՊԻԿԻՍ Ա ՏՆՏԻԿՆԻ՝
ՄԵՃՅԱԿԸ Ա ՆՁՅԸ ԱՊՁՁՈՂԱՆՆԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՈՂՁՈՒՅՆ ԲԱՐԵՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Իրանի՝ հազարամյակներ ընդգրկող պատմության մեջ ուշ միջնադարը և մասնավորապես 17-18-րդ դարերը հանդիսանում են առավել բուռն իրադարձություններով հագեցած ժամանակաշրջաններից մեկը, որը նշանավորվեց մոր հիմքերի վրա զարգացում ապրող աշխարհատարածքային, ռազմաքաղաքական անցողարձերով, Եվրոպա-Արևելք քաղաքական, տնտեսական հարաբերությունների վերաիմաստավորումներով:

Պատմագիտական ոլորտում այս ժամանակաշրջանին են նվիրվել բազմաթիվ ու բազմաբնույթ գիտական հիմնարար ուսումնասիրություններ, որոնցում արժարժվել են Իրանի տվյալ ժամանակահատվածին վերաբերող պատմական, քաղաքական, տնտեսական, հասարակական, կրոնական, մշակութային և այլ իրողություններ: Դրանց թվում քննարկման մասնակի խնդիրներից է եղել և եվրոպական (կաթոլիկ) աշխարհի, մասնավորապես Հռոմի ու Իրանի միջև իրականացվող փոխառնչությունների ոլորտի բացահայտման հիմնահարցը:

17-18-րդ դարերում կաթոլիկ տարրեր առաքելությունների (Դոմինիկյաններ, Ավգուստինյաններ (Օգոստոսյաններ), Ճիզվիտներ (Հիսուսյաններ) և այլն) ակտիվ այցերն ու արձատավորումն Իրանում և նրանց կողմից իրականացվող «աշխատանքները» նպատակաուղղված էին նպաստելու Սեֆյան պետության եվրոպամետ քաղաքականության կողմնորոշմանը: Այդ դեպքում շահական կառավարությունը ստանում էր Եվրոպայի և Հռոմի աջակցությունը Օսմանյան կայսրության ռազմական վտանգի դեմ, սակայն և կորցնում իր դիրքերը միջազգային առևտրի ոլորտում, որի հիմնական իրականացողներն իրանահայ առևտրական ընկերություններն էին և կամ խոշոր դրամազլխի տեր անհատները: Կաթոլիկ քարոզչական առաքելությունների կողմից տարվող գործընթացի առավել ակտիվ ջատագովներից էին հատկապես Կարմելյան միաբանները, որոնց վարած «քաղաքականության» հիմքում դրված առաջնահերթ խնդիրն Իրանում կաթոլիկության տարածումն էր: Դրա հետևանքով իրանահայ համայնքում կրոլանար լուսավորչական եկեղեցու դիրքը, կամրապնդվեր

մեծահարուստ հայ խոջաների եվրոպամենտ կողմնորոշումը, իսկ նրանց ձեռքերում կենտրոնացած հզոր դրամաապրանքաշրջանառությունը կուղղորդվեր դեպի Եվրոպա: Այս առումով որոշակի հնչեղություն է ստանում ««Կարմեյլանների տարեգրությունը»՝ որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր» աշխատությունը, որը փորձ է հնարավորինս առավել ամփոփ ներկայացնելու 17-18-րդ դարերում պատմաքաղաքական, տնտեսական նոր ձևավորումներով հանդես եկող կաթոլիկ առաքելությունների և նրանց շարքում հատկապես Կարմեյլանների գործունեության բուն պատճառները, գործընթացն ու նրանց ակտիվ գործավարույթների հեռահար նպատակներն ու հետևանքները: Գաղտնիք չէ, որ նրանց գործունեությունը որոշակի ազդեցություն է ունեցել ոչ միայն ժամանակի Իրանի արտաքին և ներքին համակարգման վրա, այլև ընդգրկել է իրանական միջավայրում գոյատևող և գործող ազգային տարբեր փոքրամասնությունների և հատկապես հայկական տարրը: Առաջադրված խնդրի ուսումնասիրության համար հիմնավոր տեղեկություններ են պարունակում Կարմեյլանների գործունեությանը վերաբերող օրագրային գրառումները, Վատիկան ուղղված նամակ-հաշվետվություններն ու վերլուծական դիտարկումները և այլ փաստագրություններ: Դրանց համալրումը աղբյուրագիտական հարակից տեղեկություններով և մասնագիտական քննարկումներով հնարավորություն են ընձեռնում վերագնահատելու 17-18-րդ դարերի Իրանի պատմագրության դեռևս լիարժեք չլուսաբանված որոշ հարցադրումներ, ինչպես և մոլորվի անդրադառնալու շրջանառվող որոշ տեսակետների, որոնք կարող են մեծապես նպաստել և հայ ժողովրդի պատմության այս ժամանակահատվածի համալրմանը:

Աշխատությունը, ըստ էության, աղբյուրագիտական-քննական հետազոտության փորձ է, որի համար հիմնադրյուր է ծառայել «A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, Vol. I-II, London, 1939» (Կարմեյլանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում) 1939թ. Լոնդոնում հրատարակված փաստաթղթերի երկհատոր ժողովածուն, որում տեղ գտած փաստագրական նյութը

ենթարկվել է որոշակի պատմագիտական համադրության և վերլուծության¹:

Այս հիմնանյութի համալրումը եվրոպացի ուղեգիրների գրառումներում սեղ գտած հիշատակություններով և կաթոլիկ քարոզիչներին առնչվող Իրանի արքունական հրովարտակներով

¹ «Կարմեյլանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում» ամանուն հեղինակի աշխատությունը բաղկացած է չորս մասից: Առաջին մասում հեղինակը ներկայացնում է ներածական պատմական ակնարկ մինչև 1585թ.: անդրադառնալով Կարմեյլանների ծագման, զարգացման պատմությանը, իրանական առաքելության նախապատրաստմանն ու իրականացմանը, տարբեր առաքելությունների հաստատմանն Իրանում, թուրքական սպառնալիքին, քրիստոնյա ինքնիշխանների միավորմանն ընդդեմ Օսմանյան կայսրության և այլն: Աշխատության մեջ ժամանակագրական կարգը, քաջառությանը առանձին դեպքերի, պահպանված չէ, սակայն նյութերի մեծ մասը խմբավորված է: Օրինակ՝ առանձին վերնագրեր, որոնք ներառված են առաջին գլխում, նվիրված են Սեֆյան շահերի գահակալություններին (շահ Աբբաս Ա-ի, շահ Սաֆիի, շահ Աբբաս Բ-ի, շահ Մուլեյմանի և այլն): Բացի մեմանտոյա մասնակի համակարգումից միևնույն խնդրին վերաբերող փաստերը սփռված են գրեթե ողջ աշխատության մեջ: Աշխատության երկրորդ մասում անանուն հեղինակն անդրադառնում է դեպի Իրան և Հնդկաստան կատարված առաքելությունների դեկավարմանն ու ֆինանսավորմանը: Երրորդ մասը վերաբերում է 1600-1775թթ. Իրանում հաստատված և գործունեություն ծավալած Կարմեյլան կրոնավորների կենսագրական գրառումներին, իսկ աշխատության վերջին՝ չորրորդ մասը հեղինակը նվիրել է Կարմեյլանների քարոզչական կայանների գործունեությանն առանձին-առանձին (Սպահան, Հորմուզ, Շիրազ, Նոր Ջուղա, Խարբ և այլն):

Թեև աշխատության ժամանակագրական սահմանները հանդիսանում են 17-18-րդ դարերը, սակայն հանդիպում ենք նաև ավելի վաղ շրջանի տեղեկությունների: Եվ քանի որ սույն աշխատությունը ընդգրկում է տվյալների լայն շրջանակ, ուստի այն կարելի է դիտել նաև որպես սկզբնաղբյուր ինչպես Հայաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության պատմության համար:

«Կարմեյլանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում» աշխատությունն ունի նաև հավելվածներ, որոնք արժեքավոր սկզբնաղբյուր են: Օրինակ՝ Հռոմի պապերին հղած պարսից շահերի պարսկերեն նամակների բնօրինակները, Հռոմի պապերի նամակները՝ ուղղված պարսից շահերին, այլ նամակներ, պարսից շահերի, Կարմեյլան միաբանության հիմնադիրների, առաջնորդների, կարդինալների, պապերի նկարները և այլն:

Ուսումնասիրվող սկզբնաղբյուրը բազմակողմանի հետազոտության արժեքի առարկա է, քանի որ այն, բացի Իրանի պատմության զանազան հարցերից, միաժամանակ տեղեկացնում է նաև այլ երկրների պատմության մասին, հաղորդում շատ տվյալներ, որոնք քաջակալում են միևնույն դարաշրջանի հայ և օտար պատմիչների երկերում:

առավել ամբողջական են դարձնում ուսումնասիրության առարկա հանդիսացող նյութը:

Միևնույն ժամանակ Հայաստանում, ինչպես նաև Իրանում կաթոլիկ քարոզիչների գործունեության ուսումնասիրության համար առավել հարուստ տեղեկություններ պարունակող աղբյուրների թվին են պատկանում ժամանակագիր Առաքել Դավրիժեցու (1595-1669) «Պատմությունը», Գ. Դարանաղցու, Խաչատուր Ջուղայեցու աշխատությունները, Սիմեոն Երևանցու, Ղ. Ալիշանի և Մ. Օրմանյանի հայագիտական բարձրարժեք ուսումնասիրությունները, որոնք կարևորագույն աղբյուրագիտական նշանակություն ունեցող աշխատություններ են:

Կաթոլիկ աշխարհ-Իրան-հայեր պատմաքաղաքական համակցման որոշ խնդիրների պարզաբանման համար կարևոր պատմագիտական նշանակություն ունեն Մ. Թաղիադյանի, Մ. Ուղուրյանի, Հ. Տեր-Հովհանյանցի, Ս. Տեր-Ավետիսյանի, Լեոյի և այլոց կողմից կատարված հիմնարար ուսումնասիրությունները: Ատենախոսության մեջ արժարժվող հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են պրոֆ. Վ. Բայբորոդյանի՝ Իրանի 17-18-րդ դարերի պատմության բազմաբնույթ հարցադրումներին նվիրած գիտական հիմնարար ուսումնասիրություններն ու աշխատությունները:

Ներկայացված աշխատության հարցադրումների մեկնաբանման համար զգալի նպաստ են բերել Մ. Ջուլայանի, Ա. Աբրահամյանի, Տ. Աբգարյանցի, Հ. Փափագյանի, Ա. Հովհաննիսյանի, Վ. Հակոբյանի, Հ. Աճնյանի, Վ. Դուկասյանի, Ա. Չամհնյանի, Լ. Մինասյանի, Լ. Դանեղյանի, Շ. Խաչիկյանի և այլոց աշխատություններն ու հոդվածները, որոնք ծանրակշիռ ներդրում են 17-18-րդ դարերի Իրանի և իրանահայ գաղթօջախի պատմությանն առնչվող խնդիրների լուսաբանման հարցում, ըստ որում՝ ակադեմիկոս Մ. Ջուլայանը եվրոպացի հեղինակների առանձին վկայություններին նվիրել է ծավալուն մենագրություն: Արժեքավոր են նաև օտար հեղինակների մի շարք աշխատություններ: Վերը նշված աշխատությունների մեջ ներկայացված հարցադրումների քննարկման ընթացքում դիտարկվել են և պարսից պատմագիրների ու պատմաբանների՝ Իսբանդար-բեկ Թորքեմանի, Նասրուլլա

Ֆալսաֆիի, Լոթֆալլա Հոնարֆարի, Աբդուլագիմ Ռեզայիի, Մարիամ Միրահմադիի և այլոց ուսումնասիրություններում արտահայտված տեսակետները:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի անձնակազմին և բոլոր նրանց, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստել են այս աշխատության լույս ընծայմանը:

Գիտության բնագավառում հաստատուն քայլեր կատարելու համար սկսնակին անհրաժեշտ են այնպիսի ղեկավարներ, ովքեր իրենց մասնագիտական հմտության հետ միասին կտիրապետեն նաև մարդկային հարաբերությունների գաղտնիքներին: Այս առնչությամբ հատկապես երախտապարտ եմ իմ գիտական ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արևելագետ, պատմաբան, միջազգայնագետ, դիվանագետ, ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վահան Առաքելի Բայբուրդյանին՝ գիտական իմ գործունեության առաջին քայլերին փտահություն հաղորդելու, դեսպի գիտություն տանող ճանապարհը պատրաստակամորեն և համբերատարությամբ կիսելու համար: Շնորհակալ եմ իմ առաջընթացին նպաստող խստության, ուժերիս նկատմամբ հավատի և անկեղծ գնահատանքի համար:

Թեհմինե Մարտյան

ՄԵՖՅԱՆ ԻՐԱՆԸ ՇԱՀ ԱՔԲԱՍ Ա-Ի ՕՐՈՔ

**Մեֆյան շահ Աքբաս Ա-ի ներքին ու արտաքին
քաղաքականությունը: Իրանա-եվրոպական բանակցային
գործընթացն ու կաթոլիկ քարոզչությունը:**

Մերձարևելյան աշխարհատարածքի առավել հզոր պետական միավորի՝ Իրանի պատմաքաղաքական ընթացակարգում խոշորագույն պետականությունների շարունակականը կազմող Մեֆյան տոհմի գահակալությամբ (1502-1722 թթ.) հիմնավորվեց նոր համակարգ, որի ամենանշանակալից ձեռքբերումներն առնչվում են Իրանի մեծագույն տիրակալներից մեկի՝ շահ Աքբաս Ա-ի անվան ու նրա գահակալության տարիների (1587-1629թթ.) հետ:

Շահ Աքբաս Ա-ի ձգտումները՝ վերադասավորելու քաղաքական ու տնտեսական գերիշխանության նժարը հոգուտ Իրանի, հանգեցնում են ռազմական նոր ընդհարումների Օսմանյան կայսրության հետ, որի մասնակի լուծումը եղավ Կոստանդնուպոլսում կնքված զինադադարի պայմանագիրը: Իրանի և Օսմանյան կայսրության միջև ռազմա-քաղաքական և տնտեսական առավել սրված առճակատման պայմաններում (1587թ. Բաղդադի մոտ՝ «Կռունկների հովիտ» կոչված վայրում, Ֆերիադ փաշան ծանր պարտության է մատնում պարսիկներին) երիտասարդ և հեռատես քաղաքագետ շահը դիմում է թուրքական կողմին հաշտության առաջարկով, որը կնքվում է 1590թ. մարտի 21-ին: Իրանն Օսմանյան կայսրությանն է զիջում Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Շիրվանը, ողջ Ատրպատականը՝ բացառությամբ Արդեբիլի, Թալիշի և Լորեսթանի մի մասի²: Համաձայն Կոստանդնուպոլսի պայմանագրի՝ շահը պարտավորվում էր օսմանցիներին վճարել տարեկան 200 բեռ մետաքս, չմիջամտել

²Չուլայան Մ. Ա., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գ-իքր Ա., քաղաքական պատմություն, Ե., 1990, էջ 133, Բայրուրյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005, էջ 313, Աճառյան Հր., Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Ե., 2004, էջ 301:

թուրք- ուսական հարաբերություններին, այսինքն՝ չխոչընդոտել թուրքերի հիմնավորմանը Կասպից ծովի հյուսիսարևմտյան ափերին: Ավելին՝ Մուրադ Գ-ի պահանջով պայմանագրի մեջ մտցվեց մի կետ, համաձայն որի՝ Իրանում արքունի աղոթքի ժամանակ («խութբա») թուրքերի պաշտելի առաջին երեք «քարեպաշտ» խալիֆները չպետք է գոլվքի ենթարկվեին³ :

Այս մասնակի զինադադարը հնարավորություն էր տալիս շահ Աբբաս Ա-ին զբաղվել երկրի քայքայված տնտեսության կայունացման և անբապնդման հարցերով, ստեղծել կառավարման կենտրոնացված համակարգ, հզոր և մարտունակ բանակ, ճնշել և վերացնել ընդվզումները, որոշ չափով ընդլայնել պետության սահմանները⁴: Շահ Աբբաս Ա-ի կողմից ստեղծվում է տասնհինգհազարանոց հեծելազոր՝ «դուլարներ» (ծառա, սարուկ)՝ մահմեդականացված հայ և վրացի երիտասարդների հիմնատարրով, որոնց հրամանատարներից («դուլար-աղասի») են եղել հայազգի Դարչխա խանը, բեգլարբեգ Յուսուֆ խանը և իրանական արքունիքի առավել ակնառու ղեմերից մեկը՝ Ալլահվերդի խանը⁵: Սակայն Իրանի համար առաջնային էին մնում երկրի արտաքին քաղաքականության և տնտեսության հրատապ լուծում պահանջող հարցերը:

Ռազմական և վարչական ապարատը վերակառուցելու հետ մեկտեղ Աբբաս Ա-ն ձեռնամուխ եղավ երկրի արևելյան շրջաններից ուզբեկներին վռնդելուն, ներքին ապստամբություններն ու տեղական ավատատերերի միջավատական երկպառակությունները ճնշելուն, երկրի կենտրոնացմանն ու տնտեսության անբապնդմանը⁶: Այսօրինակ ծայրահեղ լարված իրավիճակում Իրանի համար առաջնային նշանակություն էր ստանում նաև մայրաքաղաքի հարցը: Շահ Աբբաս Ա-ն մայրաքաղաքը Դազվին քաղաքից տեղափոխում է երկրի կենտրոնական, առավել ապահով և վերահսկվող մաս՝ 1598թ.

³ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011, էջ 261,

⁴ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 313-314:

⁵ Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996 (այսուհետև՝ Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը ...), էջ 32-35, Wilson T., The Persian Gulf, L., 1959, p. 131-132.

⁶ Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը ..., էջ 33:

⁷ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 314:

Սյահահանը հռչակելով Սեֆյան պետության նոր մայրաքաղաք: Ըստ Աբբաս Ա-ի կանխատեսման՝ Սյահահանը, գտնվելով պարսկական գերիշխող տարրով բնակեցված Յազդ, Քաշան և Շիրազ խոշոր առևտրա-արհեստագործական կենտրոնների հանգուցակետում, պետք է վերածվեր ռազմա-ստրատեգիական, քաղաքական և հատկապես տնտեսական բարձր կարգավիճակ ունեցող կենտրոնի, որտեղով պետք է անցնեին հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք զնացող առևտրական քարավանները⁷: Մտահոլացումների իրականացման համար մայրաքաղաքին անհրաժեշտ էր տարածքային ընդլայնում, կառուցապատում, բարեկարգում, բնակվելու և առևտրով զբաղվելու համար պայմանների ստեղծում և բազմազան բարեփոխումներ, որոնց իրականացման համար անհրաժեշտ էին բանիմաց ու բազմաշնորհ արհեստավորներ ու գործարար առևտրականներ: Այս խնդիրների լուծումն անմիջականորեն պայմանավորված էր Իրանի քաղաքական և հատկապես տնտեսական հնարավորությունների զգալի նվազմամբ՝ Օսմանյան կայսրության հետ ընթացող պատերազմի պատճառով, որի տրամաբանական հետևանքն էր իրանական գանձարանի սնանկացումը:

Արևելյան տարածաշրջանի երկու խոշոր պետությունների՝ Իրանի և Օսմանյան կայսրության միջև ընթացող անընդմեջ ռազմական խոշորածավալ ընդհարումների բուն նպատակը ոչ միայն գերիշխող դիրքի գրավումն էր, այլև առևտրական խոշոր տարանցիկ ուղիներին, առավելապես «մետաքսի ճանապարհին» տիրելը: Օսմանյան կայսրության աշխարհաքաղաքական և տնտեսական գերիշխանության նկրտումները թեև ունեին ընդհանրություններ Սեֆյան Իրանի նույնօրինակ ձգտումների հետ, սակայն և որոշակի տարբերակմամբ, այսինքն, եթե Օսմանյան կայսրությունն ուներ Եվրոպան գրավելու հեռահար ծրագիր և գործում էր տարած հաղթանակների վառ հուշերով, ապա Իրանում նորաստեղծ Սեֆյան պետության գահակալ շահ Աբբաս Ա-ն իր նպատակին հասնելու համար ակտիվ քայլեր էր ձեռնարկում ընդհանուր թշնամու դեմ՝ եվրոպական գերտերությունների հետ դաշնակցային մերձեցման համար:

⁷Քայսրության Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը ..., էջ 34:

16-րդ դարի 90-ական թվականներից արդեն շահ Աբբաս Ա-ն դեսպանություններ է ուղարկում Եվրոպա: Նա հաստով ուշադրություն էր դարձնում հատկապես այն երկրներին, որոնք իսկապես գտնվում էին թուրքերի և Գրիմի խանի ներխուժման վտանգի սպառնալիքի ներքո կամ էլ թուրքերի տիրապետության հետևանքով Արևելք-Արևմուտք առևտրական ճանապարհների վրա տուժած երկրներին⁸: Գաղտնիք չէ մահ այն փաստը, որ շահ Աբբաս Ա-ն իրանա-եվրոպական բանակցությունների ժամանակ սկսում է օգտագործել հատկապես հայ բանագնացներին⁹: Այսպես, օրինակ, 1597թ. որպես Էջմիածնի նվիրակ, բայց իրականում որպես շահի դիվանագիտական համձնակատար, Եվրոպա է ուղարկվում Հակոբ Մարգարյան Համդեցին: Նրա առաքելությունը խիստ զաղտնի էր, սակայն հայտնի չէ, թե ինչպիսի վազորություններով էր նա օժտված: 1597թ. հունիսի 22-ին և 23-ին Վենետիկի իշխանություններին պարզ է դառնում, որ վերջինս Եվրոպա է մեկնել շահ Աբբաս Ա-ի հրահանգով, եղել է մահ վրաց Ալեքսանդր և Սիմոն իշխանների մոտ և Հռոմի պապին ու «առ դեսպան կայսերը ի Հռոմ» նամակներ ունի հանձնելու: Հետաքրքրական է մահ այն փաստը, որ հայ բանագնացը «թրեր» ուներ մահ վրաց պատրիարքից, բայց միևնույն ժամանակ ոչինչ չի ասվում այդ «թրերի» բովանդակության մասին¹⁰:

Շուտով շահ Աբբաս Ա-ն համոզվում է, որ Եվրոպա ուղարկված դեսպանությունները չեն կարող արդյունավետ լինել, ուստի սկսում է պատերազմի նոր նախապատրաստություններ տեսնել Օսմանյան կայսրության դեմ: Դեսպանական այս առաքելության մասին իրանցի պատմաբան Ն. Ֆախաֆին նկատում է, որ այն նպատակատուղված էր բանակցությունների միջոցով

⁸ مرساله فلسفی، زندگانی شاه عباس اول، جلد 1-2، تهران، 1371، ص. 30.

⁹ Բայրությունյան Վ. Ա., Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերին (16-17-րդ դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1984, N 9 (501), էջ 43-52, Բայրությունյան Վ., Նոր Ջուղայի վաճառակնությունը և արևմտաեվրոպական կապիտալի տնտեսական և քաղաքական Իրանում, ՊԲՀ, Ե., 1966, N0 3 (34), էջ 217, Դանելյան Լ. Գ., Առաքել Դավիթեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978, էջ 162-163, Зулалая М. К., Армения в первой половине XVI в., М., 1971, стр. 33.

¹⁰ Ալիշան Ղ., Հայ-Վենետիկյան Յարբնությունը Հայոց և Վենետիկի Ի ԺԳ-Դ և Ի ԺԵ-Զ դարս, Վենետիկ, 1896 (այսուհետև՝ Ալիշան Ղ., Հայ-Վենետիկ...) էջ 353-354:

միավորելու եվրոպական պետություններին իրանական կողմի հետ ընդդեմ Օսմանյան կայսրության և առևտրական պայմանագրի կնքման՝ իրանական կողմի վերահսկողությամբ իրականացվող մետաքսի կենտրոնացված վաճառքի համար նույն Եվրոպայում¹¹:

Դեսպանության վարած եռանդուն ջանքերի ձախողումը բնական էր, քանի որ 17-րդ դարի սկզբին Իրանը լիարժեքորեն ընդգրկված չէր Եվրոպայի առևտրատնտեսական շահերի շրջանակների մեջ: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ շահն ուղղակի ստիպված էր դիմել հայ վաճառականության ծառայություններին¹²:

Միևնույն ժամանակ եվրոպական պետությունները և մասնավորապես ավստրիական կառավարությունը բանակցություններ էին վարում Մոսկովյան պետության հետ հակաօսմանյան կռաւիցիա ստեղծելու նպատակով, որտեղ ռուսական կայսրությունը իրանական կողմին ներգրավելու համար պետք է միջնորդի դեր ստանձներ¹³:

Իր հերթին նմանօրինակ քայլեր էր ձեռնարկում և Վատիկանը՝ փորձելով համոզել Ռուսաստանին մասնակցելու քրիստոնյա պետությունների կողմից կազմավորվող հակաթուրքական դաշինքին¹⁴:

Այդուհանդերձ, Վատիկանի և Ավստրիական պետության համառ ջանքերը անարդյունավետ էին և չհասան տրամաբանական ավարտի¹⁵: Այս պարագայում առավել հետաքրքրական հնչելություն է ստանում իրանական կողմի դիրքորոշումը հատկապես ռուսական պետության նկատմամբ: Այդ մասին են վկայում շահ Աբբաս Ա-ի կողմից Մոսկովիա ուղարկվող մի քանի դեսպանությունները և

¹¹ نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، جلد ۱-۲، ص. ۳۰

Рудных С., Иран. М., 1940, стр. 8-9, շահ Աբբասի Ա-ի ռազմական քարտեզադրումների մասին տե՛ս Armajani Yahya, Middle East, Past and Present, Prentice-Hall, Inc., Englewood Cliffs, 1970, p. 166, 182.

¹² Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004, p. 46.

¹³ Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Ե., 1961, էջ 184, William S. Haas, Iran, New York, 1946, p. 27.

¹⁴ Նաջարյան Հ., նշվ. աշխ., էջ 184:

¹⁵ Նույն տեղում, էջ 184-185:

Ռուսաստանից Իրան ժամանող դեսպանական խմբերը, որոնց քննարկման առարկան ռուսական կողմի ռազմական օժանդակության հարցն էր ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության¹⁶:

16-րդ դարի 80-ական թվականների վերջերին բարելավեցին ռուս-իրանական հարաբերությունները, որոնք հակաթուրքական դաշինք ստեղծելու հարցում առավել իրատեսական էին: Ավելին՝ այս երկու երկրների միջև սկսվում են հաստատվել կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ: 1603թ. օգոստոսի 28-ին ռուս արքա Բորիս Գողունովը (1598-1605) շահ Աբբաս Ա-ի կողմից դեսպան է ընդունում Շիրազի մարզպետ Լաչին բեկին¹⁷: Լաչին բեկի դեսպանությունը հետապնդում էր նպատակներ, որոնցից մեկը վերաբերում էր հակաթուրքական դաշինքին: Սակայն, Պ. Բուշևի խորին համոզմամբ, - դաշինք չէր կնքվել: Եվ, ինչպես նա իրավացիորեն նկատում է, «... շահ Աբբասի նման ուժեղ կամքի տեր մարդը՝ լի էներգիայով, չէր տառապում անվճարականությանը ու անվստահությանը դեպի իր ստեղծած կայսրությունն ու մասնավորապես բանակը: Ռուստի շահ Աբբասը, 1603թ. սկսելով պատերազմը, այնքան էլ չէր կարևորում արտաքին ռազմական օգնությունը...»¹⁸:

Սակայն «Կարմեյանների տարեգրության» մեջ հանդիպում ենք փաստերի, երբ շահ Աբբաս Ա-ն տարբեր դեսպանների հետ եվրոպական արքունիքներին ուղղած նամակներում մասնավորապես նշում է. «Պարսից շահն իր բարեկամությունն ու բարյացակամությունն է առաջարկում բոլոր քրիստոնյա արքաներին: Այս բարեկամությանը ատելություն առաջացնենք ընդհանուր թշնամու՝ թուրքի նկատմամբ, որի դեմ Նորին Մեծությունը (շահ Աբբաս Ա-ն և Թ. Մ.) շուտով պատերազմ կսկսի, եթե միայն համոզված լինի, որ պատերազմի ողջ ծանրությունն իր վրա չի կրի»¹⁹:

¹⁶Նաջարյան Հ., նշվ. աշխ., էջ 195-196:

¹⁷Бушев П.П., История посольств и дипломатических отношений русского и иранского государств в 1586-1612гг., М., 1976, с. 381.

¹⁸Նույն տեղում:

¹⁹A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, L., 1939, p. 27, 72-73 (այստեղև՝ "A Chronicle of the Carmelites").

Քաղաքական նման «հաճոյախոսութեանը» Հռոմի պապ Կղեմէս VIII-ը (1592-1605) պատասխանում էր նույն կերպ. «Թեպետ երբևէ չենք տեսել, այնուհանդերձ, բազմիցս լսել ենք Ձեր հերոսութեան, արքայալայել մեծահոգութեան և Աստու շրայլած բազում շնորհների, այդ թվում՝ քրիստոնյաների նկատմամբ Ձեր բարյացակամութեան և հարգանքի, ինչպես նաև՝ Ձեր թագավորությունում եկեղեցիներ կառուցելու և քահանաներ փնտրելու մասին»²⁰: 1592թ. սեպտեմբերի 30-ին Կղեմէս VIII պապը շահին հրավիրում է միանալու քրիստոնյաների լիգային՝ ընդդէմ օսմանյան սուլթանի, ում բնութագրում է որպէս «... մարդ՝ բոլորից ամենահիմար ... և բոլոր լավ (ամկասկած նկատի ունենալով կաթոլիկ աշխարհը և Թ.Մ.) մարդկանց թշնամի»²¹:

Այստեղ կարևորվում է հատկապէս այն հանգամանքը, որ շահ Աբբաս Ա-ն, առաջարկելով դաշնակցային համախմբում եվրոպական (կաթոլիկ) պետություններին, պատրաստակամութիւն էր հայտնում նաև «եվրոպական առևտրականների ու քարոզիչների առջև բացելու Իրանի հյուրընկալ դռները՝ հատկացնելով նրանց ամեն տեսակի պաշտպանություն, առանց որևէ խտրութեան նրանց և տեղացիների միջև»²²: Այս առնչությամբ հետաքրքրական է Իրանում և հայերի միջավայրում երկար տարիներ ապրած և պատմական բնույթի երկասիրություն թողած Կապուչինյան քարոզիչ Հայր Ռաֆայել դյու Մանի (Ժակ Դյուտերտր) այն դիտարկումը, որտեղ նա մասնավորապէս նշում է. «... Պարսկաստանն իրեն ճանաչել է տալիս օտարերկրացիների մոտ՝ շնորհիվ նրանց նկատմամբ Շահ Աբբաս Առաջինի լավ վերաբերմունքի. նա (Աբբաս Ա-ն և Թ. Մ.) ամեն գնով ուզում է ֆրանկների (եվրոպացիների կամ կաթոլիկների և Թ. Մ.) հետ դաշնակցել»²³:

Այս իրողության հետ է դյու Մանը կապում Կարմելյան հայրերի ժամանումն ու հիմնավորումն Իրանում²⁴: Շահ Աբբաս Ա-ն, հասնելով որոշակի հաջողությունների երկրի ռազմաքաղաքական

²⁰ «A Chronicle of the Carmelites», p. 84-85.

²¹ Նույն տեղում, էջ 69:

²² Նույն տեղում, էջ 71, տե՛ս նաև՝ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմության, գիրք երկրորդ, Ե., 1959, էջ 112:

²³ Ջուլյայան Մ. Կ., նշվ. աշխ., էջ 294-295:

²⁴ Նույն տեղում:

կայունացման հարցերում, ակնկալելով Եվրոպայի հետ հետագա հարաբերությունների խորացում և սերտացում, 1599թ. կատարում է անձնախաղեպ քայլ՝ հայտարարելով Իրանում քրիստոնեության դավանման ազատության մասին: Տեղեկացնելով այդ մասին Կղեմնե VIII պապին՝ նա առաջարկում է Իրան ուղարկել մշտական ներկայացուցչություն²⁵: Օգտվելով պատեհ առիթից և առաջարկից՝ պապը 1604թ. Սպահան է ուղարկում Փոլ Սայմընին՝ բնկոտն Կարմեյան քահանաներից կազմված խմբով, որին տրված հրահանգում ենթադրվում էր գործերի շոտափույթ ավարտ և ետդարձ, որը, սակայն, իրականացնում է միայն քառասուն տարի անց²⁶:

Աշխարհաքաղաքական նոր հարցադրումներից բխող խնդիրների լուծմանը կարող էր նպաստել հատկապես եվրոպական պետությունների հետ հարաբերությունների ակտիվացումն ու աջակցության ապահովումը, հետևաբար Սեֆյան տիրակալին անհրաժեշտ էին փորձառու, քանիմաց, համաշխարհային շուկայական տարածքներին ու գործավարությանը քաջամտությամբ, ուժեղ լավ գիտնականներին մաս Եվրոպան, իսկ նույն եվրոպացիները ճանաչեին նրանց: Այդպիսիք արդեն իսկ գտնվում էին հենառես շահ Աբբաս Ա-ի տեսադաշտում. Հայաստանի՝ մասնավորապես Իրանի սահմանակից Երևանի, Գողթն, Նախիջևան և Երևզակ գավառների բնակչությունը և տարածքի կենտրոնը հանդիսացող Ջուղա ավանը՝ հայտնի վաճառականությամբ և արհեստավորների կենտրոնացմամբ: Ահա այս հայ խոջայական դասն էլ պետք է ծառայեր շահի հեռագնա նպատակների իրականացմանը:

Հայաստանի այս հատվածը մշտապես գտնվում էր պարսից տիրակալի ուշադրության կենտրոնում ոչ միայն որպես հարստություն ունեցող քաղաք, այլև, ըստ ավստրիացի դիվանագետ Անտոնիո դե Գուվեայի, «... բնակեցված էր երկրամասի ամենահարուստ հայ վաճառականներով և տարանցիկ առևտրի հանգուցակետ էր ... »²⁷:

²⁵ "A Chronicle of the Carmelites", v. 1, p. 66.

²⁶ Նույն տեղում, էջ 107:

²⁷ Ջուղայան Մ. Կ., նշվ. աշխ., էջ 138:

«Շահ Աբբասի միակ նպատակն էր իր թագաւորութիւնը հարստացնել, և գրում է Հ. Քյուրդյանը, և ան համոզուած էր, որ վաճառականութիւնն ատոր միակ միջոցն է, ուստի իր ուշադրութիւնը ամենաարժէքատու մետաքսի առեստորին դարձուց, ինչպէս նաեւ Հայոց իբր այդ առեստորին յարմարագոյն անձերը: Ան գաղափար չունէր իր միւս հպատակներու կարողութեանց մասին, գիտնալով, որ անոնք առեստրական հանճար չունէին...»²⁸:

Իրանում անգլիական ներկայացուցիչ Աբրուր Էդվարդսը, ով գրադվում էր շուկաների ուսումնասիրմամբ, համոզված էր, որ «գլխավոր դերն ամբողջ առևտրում կատարում են հայերը, որոնց ձեռքում է կենտրոնացված գրեթե ողջ առևտուրը...»²⁹:

Հայերի (նորջողայեցիներին Հոլանդիայում անվանում էին «քրիստոնյա պարսիկներ») մասնակցությունը Լևանտյան առևտրին զարկ տրվեց հատկապես 17-րդ դարի սկզբներին, այն պարզ պատճառով, որ մետաքսի պահանջարկը շեշտակիորեն աճել էր եվրոպական շուկաներում³⁰: Ինչպես վկայում է գերմանացի արևելագետ Ադամ Օլեարիուսը, վերը հիշատակված ժամանակահատվածում Իրանում շուրջ 20 հազար հակ (ամեն մի հակը մոտավորապես 276 ֆունտ ստերլինգ արժէր) հում մետաքս էին հավաքում³¹ (երկրի ներսում օգտագործվում էր ընդամենը հազար հակ, մնացածն արտահանվում էր):

Սակայն գտնվելով Օսմանյան կայսրության անմիջական վերահսկողության տակ՝ հայերի կողմից իրականացվող առևտրի և

²⁸ Քիլրոսեան, Յ., Նյութեր հայ վաճառականութեան պատմութեան համար, Հում մետաքսի վաճառականութիւնը եւ հայերը, առանձնատիպ, էջ 23:

²⁹ Тер-Аветисян С. В., Город Джура, материалы по истории торговых сношений джурльфинских купцов XV-XVII вв., Тбилиси, 1937, стр. 24.

³⁰ Շահ Աբբաս Ա-ին հարկավոր էր հենարան՝ խոշոր մեծաքանակ առևտրով զբաղվող վաճառականների մի դաս, որը սերտորեն կապված լինէր արաաբին շուկայի հետ և որին ցանկացած ժամանակ կարէն լինէր օգտագործել միջնորդի դերում եվրոպական երկրների հետ Իրանի քաղաքական և տնտեսական հարաբերությունները զարգացնելու համար: Ուստի պատահական չէ, որ ոչ միայն շահ Աբբաս Ա-ն, այլև նրա ժառանգորդները գերադասում էին եվրոպայում հում մետաքսը վաճառել անմիջականորեն հայ վաճառականների միջոցով (Քայրուրդյան Վ. Ա., Հայերի և Լևանտյան առևտուրը XVII դարում, Պատմա-քանադատական հանդես, Ե., 1985, N2 (109), էջ 110):

³¹ Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 гг., составленное секретарем посольства Адамом Олеарием, М., 1870, стр. 791.

հատկապես մետաքսի առևտրից ստացվող շահույթի զգալի մասը կուտակվում էր օսմանյան գանձարանում: Պատահական չէ, որ հարյուրամյակներ տևած թուրք-իրանական պատերազմների հիմնական պատճառներից մեկը հենց առևտրական շահերն էին, մասնավորապես՝ մետաքսի առևտրից ստացվող շահույթներին տիրանալու անհագուրդ ձգտումն ու Անդրկովկասի և Իրանի մետաքսաբեր շրջաններին տիրապետելը: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ պարսիկների կողմից մետաքսի հանձնման դադարեցումը տեղիք էր տալիս թուրք-իրանական մոր պատերազմի: Այդ նույն պատերազմների ժամանակ հակառակորդին մետաքսի վաճառքից ստացվող հասույթներից զրկելու համար թուրքերը կտտորում էին մետաքսի արտադրությամբ զբաղվող շրջանների բնակչությանը, կտրատում բքի ծառերը³²:

Այսպիսով՝ առևտրի, մասնավորապես այս ոլորտի վերահսկումը և գանձվող շահույթի ուղղորդումը դեպի Իրան և շահական գանձարան կենսական նշանակություն ունեցող խնդիր էր շահ Աբբաս Ա-ի համար: Նպատակ, որին հասնելու համար Աբբաս Ա-ն դրսևորում էր իր դիվանագիտական կարողությունները՝ քայլ առ քայլ հայ մեծահարուստ առևտրականների՝ խոջաների հետ ստեղծելով «դրացի» և «բարեկամական» հարաբերություններ: Այս «բարեհաճ» վերաբերմունքի արտահայտություններից էին և շահի «մտերմիկ» հյուրագնացությունները սահմանամերձ Ջուղա ավան: Շահ Աբբաս Ա-ի «մտերմիկ» հարաբերություններից հայերը ակնկալում էին քաղաքական և հատկապես ռազմական հովանավորություն օսմանցիների կեղևումներից ազատագրվելու համար:

Իրանական հովանավորչությանն էին ապավինում և հայ հոգևոր որոշ այրեր (Մելիքսեթ կաթողիկոսը, Հավուց թառի Մանվել և Գեղարդավանքի Աստվածատուր եպիսկոպոսները և այլք), ովքեր ևս գնում են Աբբաս Ա-ի մոտ: Շահը նրանց ընդունում էր մեծարանքներով, քանի որ հայ հոգևորականների այս քայլը Աբբաս Ա-ին հուշում էր հայոց եկեղեցական կյանքի պառակտվածության մասին, որից նա կարող էր օգուտ քաղել: Եվ, իրոք, շահը հայ կրոնավորների՝ որպես ականատեսների պոռթկումային բողոքներից

³²Քայրուղյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը ... էջ 79-80:

իր համար քաղում էր հույժ կարևոր տեղեկություններ՝ օսմանյան քանակի և Հայաստանում տիրող իրավիճակի մասին:

Պատմաքաղաքական այս իրավիճակում Իրանի տնտեսական կյանքի ակտիվացումը շահ Աբբաս Ա-ն կապում էր նաև հայկական գործոնի հետ. հայտնի է, որ հայերն, իրենց հերթին, մասնավոր նախաձեռնություն էին ցուցաբերում այս հարցին: Ջուղայեցի վաճառականը խոշոր միջնորդ էր արևելյան շուկա և մասնավորապես Իրան եվրոպական ապրանքատեսականու (զինագործական իրեր, ժամացույցներ, ջահեր, հախճապակյա սպասք, ֆրանսիական և հատկապես վենետիկյան գործվածքներ ու ապակյա իրեր, հայելիներ) ներկրման գործում, ինչպես և Ռուսաստանի հետ առևտրական հիմնական կապ պահպանողն էր, որտեղից բերվում էին մորթեղեն, ձկնուկր, զինագործական իրեր, ձիերի զրահածածկեր և այլն: Ջուղայեցի խոշոր առևտրականները տարբերվում էին արևելյան մյուս վաճառականներից իրենց կրթվածությամբ, արևելյան ու եվրոպական լեզուների և անգամ քարթառների իմացությամբ, ունեին ազատ գործավարելու կարողություններ և այլևայլ հատկանիշներ, որոնք և լիարժեք քավարարում էին շահ Աբբաս Ա-ի նպատակների իրականացմանը: Ավելին՝ պարսիկներն «իրենց ապրանքները բոլոր ժողովուրդներից առավել վստահում էին հատկապես հայերին, ովքեր նրանց ներկայացուցիչներն էին ամբողջ աշխարհում»³³:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Նոր Ջուղան ուներ նաև զարգացած մտավորականություն՝ ուսուցիչներ, գրիչներ, նկարիչներ, աշուղներ, քարգմանիչներ և այլն: Վերջիններս, տիրապետելով եվրոպական և արևելյան լեզուների, գիտեին նաև ռուսերեն: Նրանց հատուկ աշխատանքի էին հրավիրում Մոսկովյան պետությունում, հատկապես՝ դեսպանական ատյանում: Նրանք վայելում էին ռուս ցարի անձնական վստահությունը, մասնակցում դիվանագիտական բարձրաստիճան առաքելությունների որպես քարգմանիչներ («տոլմաչ»), ներգրավվում առևտրական

³³Чулков М.В., Историческое описание Российской коммерции при всех портах и границах от древнейших времен до ныне настоящего и всех преимущественных узаконений по оной Государя Императора Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Ек. Великой, СПб., 1785, т. II, кн. II, с. 46.

գործարքների մեջ որպես գնողներ («կուպչինա») և այլն³⁴: Ըստ 17-րդ դարի պատմագիր Միմեոն Լեհացու՝ ջուղահայերը եղել են «Իմաստունք, փարթամք, գեղեցկատեսիլ» և «մեծ վաճառականք, որ մարդ ամաչէր երեսլին հայիլ»³⁵:

Ջուղայեցիներին էին վստահվում նաև կարևոր դիվանագիտական հանձնարարություններ: Ի. Պետրուշևսկին իրավացիորեն նշում է, որ «...Սեֆյանները հաճույքով օգտվում էին քրիստոնյա դիվանագիտական գործակալների՝ վաճառականների ու հոգևորականների ծառայություններից»³⁶: Ջուղահայ վաճառականների այսօրինակ գործունեության օրինակներից է 15-րդ դ. 70-ական թթ. խոջա Միրաբի դիվանագիտական առաքելությունը (որոշ աղբյուրներում՝ Մորախ), ով Ռուզուն-Հասանի հանձնարարականով մեկնել էր Հռոմ³⁷:

Այս երևույթը ստացավ լայն կիրառում հատկապես 16-րդ դարում, երբ «առևտրական ու դեսպանական այցելությունները զուգորդվեցին, և առևտրականը հաճախ սկսեց դեսպանի դեր խաղալ, իսկ դեսպանը՝ զբաղվել առևտրով»³⁸:

Պատմաքաղաքական և հատկապես առևտրատնտեսական այս հենքի վրա առավել կարևոր էին Վենետիկյան պետության հետ հայերի բազմաբնույթ առևտրական հարաբերությունները, որոնք անհրաժեշտ նախապայման էին Աբբաս Ա-ի համար Եվրոպայի հետ քաղաքական բանակցությունների գործընթացում: Անհրաժեշտ է նշել, որ հայ-վենետիկյան համագործակցության առաջին հիշատակությունները վերաբերում են 13-րդ դ., երբ 1243թ.

³⁴Ստեփանյան Ա., Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, Իրանահայ գաղթօջախի 17-18-րդ դդ. արհեստագործության պատմությունից, Ե., 2000, էջ 53-54:

³⁵Միմեոն դպրի Լեհացիոյ Ուղեգրութիւն Տարեգրութիւն եւ Յիշատակարանք. Ուսումնասիրեց եւ իրատարակեց Հ.Ներսիս Վ. Ալիևնան, Վիեննա, 1936, էջ 319:

³⁶Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в 16в.- начале 19 в., Л., 1949, стр.182, Байбуртян В., Армянская колония Новой Джульфы в XVII веке, Е., 1969, стр. 28-41, Байбуртян В., Посредническая роль поводжульфитских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII в., "Краткие сообщения Института Народов Азии АН СССР", 1964, N 77, стр. 84-100 և այլն:

³⁷Библиотека иностранных писателей о России, т. I, СПб., 1836, с. 28.

³⁸Фехнер М.В., Торговля Русского Государства со странами Востока в XVI веке, М., 1956, с.11, Յ. Տր-Յովհաննանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱպսխան, Նոր Ջուղա, Հ. Ա, 1880, էջ 48:

կատարված գրառման համաձայն՝ «Ջերմեռանդ ու ծերունի հայ իր կտակաւ գումար մի դրամոց թողած էր, յառաջագոյն իսկ քան զՄ.Ծիանի (Վենետիկի Դոժը-Թ.Մ.) որպէս զի տուն մի գնուի ու եկեղեցիակ մի շինուի ի փողոցին Լապտերաց... ի դիրութիւն՝ և նպաստ ազգայացն, որ Պարսկաստանի հեռաւոր կողմերէն կուգան»³⁹:

Եկողները մեծամասամբ ջուղայեցիներն էին, որոնց հաճախակի այցելությունների շնորհիվ տեղում կազմավորվում են հայաբնակ թաղամասեր, ինչպես, օրինակ, «ջուղայեցիների» թաղամասը՝ «Casa dell' Hospital de Mercanti in Ruga Gajuffa» իջևանատուն-հյուրանոցով, և ընդհանուր հայկականը «Casa degli Armeni»՝ հայկական փողոցի վրա գտնվող Սր. Խաչ եկեղեցիով⁴⁰: Հիմնվում են նաև հայկական վանքեր, ինչպես օրինակ, 1308թ. Պաղոնայում Դավիթ Կիլիկիացի վարդապետի կողմից, 1307-1309 թթ. Ջենովայում Մարտիրոս Սեավելունցի վարդապետի կողմից, որը կրում էր Սր. Բարդուղիմեոսի անունը⁴¹: 14-15-րդ դարերում տեղում ձևավորված բարենպաստ հայկական մթնոլորտը խթանեց արդեն 17-րդ դարում հայերի ամենաակտիվ հարաբերությունների ձևավորմանը Վենետիկյան պետության հետ: Դրա վառ վկայություններից էր դեռ 14-րդ դարում հայ վաճառականներին շնորհված հատուկ թույլտվությունը՝ քաղաքի Սր. Մարկոսի կենտրոնական հրապարակում ունենալու վաճառատներ հյուսվածքի և գորգերի առևտրի համար⁴²: Նմանօրինակ փաստ արձանագրված է նաև 1390թ. Բելգիայում, երբ ջուղայեցիներին գորգավաճառության համար վաճառատներ ունենալու թույլտվություն է տրվել Բրյուզզե (Բրյուժ) քաղաքի Սր. Դոնատ եկեղեցուն հարող հրապարակում⁴³:

Վենետիկի, Լիվոռնոյի, Տրիեստի պետական պահոցներում պահվող բազմաբնույթ և մեծաքանակ առևտրական պայմանագրերը, նոտարական վավերագրերն ու կտակները, կենցաղային, դատական գործերին ու առևտրական գործառնություններին վերաբերող վավերագրերը, զեկուցագրերը և քազմաքիվ այլ փաստաթղթեր

³⁹Ալիշան Ղ., Հայ-Վենետ ... էջ 147:

⁴⁰Նույն տեղում, էջ 145, 387:

⁴¹Մաղաքիա Մրք. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ., ԿԹ, 1914, սյուն 2120:

⁴²Ալիշան Ղ., Հայ-Վենետ ... էջ 147:

⁴³Ալիշան Ղ., Սիսական, տեղագրութիւն Սիսնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 461:

վկայում են ջողայեցիների աշխույժ գործունեության մասին այդ նշանավոր քաղաքներում (ի միջի այլոց, հիշատակություն կա նաև Ալբան անունով հայի մասին, ով 1484թ. ղեկավարել է Վենետիկյան նավատորմի 3-րդ խումբը թուրքական ռազմածովային ուժերի հետ ճակատամարտի ժամանակ)⁴⁴:

Այնուամենայնիվ, հում մետաքսի առևտրից ստացվող շահույթի առյուծի բաժինը շարունակում էր վերահսկել Օսմանյան կայսրությունը, փաստ, որին Իրանը խիստ զգայուն էր արձագանքում:

Պատմաքաղաքական այսպիսի իրադրության պայմաններում 1603թ. սեպտեմբերի 14-ին Իրանը, օգտվելով Օսմանյան կայսրության համար ստեղծված անբարենպաստ արտաքին և ներքաղաքական իրավիճակներից, վերսկսեց պատերազմական գործողությունները՝ առաջին հարվածը հասցնելով Ատրպատականի կենտրոն Թավրիզ քաղաքին, միաժամանակ գորքեր ուղարկելով Օսմանյան կայսրության ամենախոշոր հենակետ՝ Երևանի բերդ: Իրանա-օսմանյան պատերազմի վայրագությունները գրաված տարածքներում հիմնականում թելադրված էին պատերազմական իրավիճակից բխող հանգամանքներով:

Ապավինելով պատեհ առիթի՝ Արքաս Ա-ն պարսկական հատուկ զորախմբերի միջոցով Նախիջևանի հայաբնակ գյուղերի և հատկապես Ջողայի բնակչությանը ենթարկեց բռնագաղթի: 1605 թ. Հայաստանին և Իրանին սահմանակից գավառների, այդ թվում և Ջուղա քաղաքի բնակչությունը հապճեպ տեղահանվեց ու իրանական հատուկ զորախմբերի ուղեկցությամբ տեղափոխվեց Իրան: Հայ գաղթականներին բաժանելով խմբերի՝ բնակեցրեց Քաշան, Ղազվին, Գիլան, Էնզելի, Դարբանդ և այլ գավառներում, իսկ հիմնական զանգվածը՝ մայրաքաղաք Սպահանի Շամսապատ թաղամասում և մերձակա Թորսկան, Թաղալա, Լնջան, Ալինջան, Գանդիման, Ջղախոռ, Փերիա, Բուրվառ, Քեղազ, Քեմարա, Գեփլա, Ղարաղան և այլ գյուղերում (մոտ երկու տասնյակից ավելի ավաններ ու գյուղեր)⁴⁵:

Պատմագրության մեջ բազմիցս բնդգծվել է Արքաս Ա-ի առանձնակի ուշադրությունը ջողայեցիների նկատմամբ, որոնց նա հատկացնում է Սպահանի մոտով հոսող Ջայանդեհուղ գետի

⁴⁴ Ալիշան Ղ., Հայ-Վենետ ... էջ 391:

⁴⁵ Տեր-Յովհաննես Զ., նշվ. աշխ., էջ 32-33, Աճառյան Հր., նշվ. աշխ., էջ 305:

մերձափնյա բերրի, այգեստաններով առատ հողատարածքը, որտեղ դեռևս 11-12-րդ դարերում եղել էր հայկական իջևանատուն⁴⁶:

Հայկական տարրի՝ իրանական հողում բազմադարյա բնակության մասին են վկայում ավելի քան 180 հայկական եկեղեցիների վերաբերյալ հիշատակումները⁴⁷: Իտալացի ուղեգիր, դիվանագետ Պիետրո դելլա Վալլեն հիշատակում է, որ շահը «...նրանց տրամադրում է ոչ միայն հողակտորներ ու անասուններ, այլև վարկ՝ համոզված լինելով, որ վերջիններս չեն կարող վճարել իրենց պարտքը և, ի վերջո, իսլամանալու են»⁴⁸:

Եվ, իրոք, հատկապես գյուղացիությունն ընկնում է ծանր կացության մեջ և կանգնում ձուլման վտանգի առջև: Երբ Իրանում հաստատված կաթոլիկ քարոզիչները պարտերի վճարման դիմաց առաջարկում են հայերին կաթոլիկություն ընդունել, դելլա Վալլեի հավաստմամբ շահը հայտարարում է, որ «փոխանակ ֆրանկներ դառնալու ինքը կուզենար, որ հայերը մահմեդականություն ընդունեին»⁴⁹: Պատմության մեջ աննախադեպ այդ գաղթի ժամանակակցի և ժամանակագրի՝ Առաքել Դավրիժեցու՝ հայերի բռնագաղթի սարսափազդու նկարագրի մեջ ևս նկատվում են Սեֆյան տիրակալի որոշակի անհատական վերաբերմունքի փաստումներ⁵⁰:

Հ. Քյուրտյանը միանգամայն ճիշտ է մեկնաբանում Ջուղայի գաղթը. «Երբ Շահ Աբբաս,– գրում է Հ. Քյուրտյանը,– բռնի գաղթի կ'ենթարկեր այս շրջանի (Ջուղայի-Թ.Մ.) հայութիւնը, բնական է, որ անոր բուն արժեքին եւ կարողութեան գիտակցութիւնը ունէր: Բուն երկրէն բռնի տանելով այս մեծապէս ժրաջան, արտադրող, մշակոյթով բարձր հայութիւնը՝ այն զարգացուց Խորասանի տափաստանները, Գիլանի եւ Մազանդերանի վատառողջ եւ հեռաւոր գավառները, զարդարեց Սպահանը, Ղազվինը, Շիրազը, Քւէջանը, ի

⁴⁶ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Հայերեն Ձեռագրերի ԺԷ դրի հիշատակարաններ (1601-1620), Կ. Ա, Ե., 1974, էջ 620-621:

⁴⁷ Միմասյան Լ. Գ., Իրանի հայկական եկեղեցիները, Ն. Ջ., 1983, էջ 18:

⁴⁸ Ջուլայան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, էջ 153, Ջուլայան Մ., Հայոց պատմության հարցերը իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալլեի աշխատություններում, Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Ենդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Ե., 2005, էջ 51:

⁴⁹ Ջուլայան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 153:

⁵⁰ Դավրիժեցի Ա., Գիրք պատմութեանց, Ե., 1990:

զին Երեւանի, Ջուղայի, Նախիջեւանի: Այս բռնագաղթը ոչ միայն զարկ տուաւ Պարսկական աննշան առետուրին, այլ եւ արտադրութեանց: Այսպիսով միութեամբ սպառած Պարսկաստանին վերածնունդի պատճառ եղաւ...»⁵¹:

Գաղթօջախն ուներ իր թեմական կենտրոնը, սակայն շարունակում էր պահպանել հոգևոր կապը մայր հայրենիքում գտնվող Էջմիածնի հետ: Այս հանգամանքը Մեֆյան տիրակալի համար ուներ կարևոր նշանակություն, քանի որ շաղկապված էր 16-րդ դարի երկրորդ կեսից և 17-րդ դարի սկզբին Իրան ակտիվ ներթափանցող կաթոլիկ գործոնի հետ:

1604թ. Սպահան ժամանող տարբեր քարոզչական խմբերի հետ (Դոմինիկյաններ, Ավգուստինյաններ, Դիզվիտներ և այլն) եկավ նաև Կարմելյան քահանաների մի խումբ, որոնց հետ Աբբաս Ա-ն խաղարկել էր նաև Էջմիածնի հարցը⁵²: Նա գիտակցում էր, որ Էջմիածնի կամ նմանօրինակ մայր վանքի հիմնադրումը Սպահանում կհանդիսանա քրիստոնյա աշխարհի համար իրանական կողմի ելք ոչ «բարեկամության», այլ արտաքնապես «հանդուրժողականության» արտահայտում:

Խոշորածավալ այս մտահղացման իրականացումն, ըստ էության, շահ Աբբաս Ա-ի քաղաքական և առավելապես տնտեսական խնդիրների իրականացման բաղկացուցիչներից էր: Օսմանյան կայսրության հետ առճակատման հարցում նա ակտիվ բանակցություններ էր վարում եվրոպական պետությունների և մասնավորապես Վատիկանի հետ՝ որոշակի շեշտադրում տալով հայկական գործոնին: Հայերը, ինչպես «Կիրակոս և Աւետ Խաչկեան Հայ պաշտօնատարացն Պարսից Տէրութեան. որք դեսպան առաքեցան առ Տէրութիւնս Եւրոպացոց և Օսմանցոց», համաձայն շահ Աբբաս Ա-ի հստակ հրովարտակի «պատուէք և առաջարկութիւնք վասն ՚ի կատար հասուցանելոյ զայնոսիկ յՕսմանեան սահմանս՝ ՚ի Հնդկաստան՝ ՚ի Ֆռանգստան՝ (թերևս ՚ի Գաղղիա) յԱնգղիայ՝ և ՚ի Հոլանդիայ, պարտ և արժան է զի յամենայն

⁵¹Քիչրտեան Յ., Նիւրբեր հայ վաճառականութեան պատմութեան համար, Հուն մետաքսի վաճառականութիւնը եւ հայերը, էջ 28:

⁵²Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ., սյուն 2710:

քաղաքս՝ որ ինչ օգնականութիւն հարկատրեսցի...հոգ տանել և մեծարել գնոսա, զի մի դիպեսցի մոցա վնաս ինչ»⁵³:

Եվրոպական պետությունների քաղաքական և տնտեսական նկրտումների ակտիվացման փորձերն իրականացան Իրանում կաթոլիկ տարբեր միաբանությունների արմատավորմամբ: Իրենց «աշխատանքների» առաջնային «մեկնարկը» իրանահայ համայնքն էր. նրանք նպատակ ունեին թուլացնել տեղի հայ լուսավորչական եկեղեցու դիրքերը և դեպի Եվրոպա ուղղորդել մեծահարուստ հայ խոջաների հզոր դրամաշրջանառությունը: Մեֆյան պետությունը հայտնվել էր քաղաքական երկակի կողմնորոշման առջև. կա՛մ պետք է թույլ տար կաթոլիկության քարոզչությունը և ունենար Եվրոպայի ու Հռոմի հովանավորչությունն օսմանյան վտանգի դեմ՝ մասնակիորեն կորցնելով հայկական խոշոր առևտրից ստացվող հսկայական շահույթը, կա՛մ արգելեր քարոհիչների գործունեությունը՝ գրկվելով Եվրոպայի հովանավորչությունից: Իրանը դրանով իսկ կթուլացներ երկրի կայունացող դիրքերը միջազգային հարաբերություններում: Այս դեպքում ևս շահ Աբբաս Ա-ն կարողացավ հաստատել խոշոր դիվանագետ լինելու իր ունակությունը, երբ Էջմիածնի վանքի տեղափոխման հարցը նորից խաղարկվեց, սակայն նոր երանգավորմամբ: 1607թ. շահի հրովարտակ-ուլերձի համաձայն «... Բահանայք՝ Հոգևորականք՝ ծերք ժողովրդեան՝ գլխատրք՝ և ժողովրդականք Հայոց բնակեալք յարքայանիստ քաղաքն Սպահան ...: Որոց գիտելի լիցի թէ որովհետև ընդ մէջ մեծի թագաւորութեան մերոյ և ընդ մէջ Տէրութեանց Քրիստոնէից մանաւանդ ընդ համբաւատենչ Հռովմայ Պապ արքային և վեհափառ Թագաւորին Սպանիոյ կայ բարեկամական մտերմութիւն, և ընդ մէջ մեր և ազգի Հայոց գոյ սերտ միատրութիւն սիրոյ ... ունիմք զհաղորդակցութիւն սիրոյ ընդ Պապին Հռովմայ, և զի յամենայն սահմանաց քրիստոնէից ՚ի սահմանս Տէրութեան մերոյ լիցի երթևեկ, և քանզի արքայանիստն Սպահան է մայրաքաղաք մեծահամբաւ թագաւորութեանն մերոյ, և յամենայն ազգաց և յազանց գտանին անդ, վասնորոյ կամիմ սակս ազգի Հայոց յասացեալ արքայանիստ քաղաքին՝ զեկեղեցի մի մեծ,

⁵³Տէր-Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայոյ որ յԱսպահան, հ. Ա, էջ 48:

վառաւոր, քարձրակառոյց, վայելչագարդ կառուցանել. որ եղիցի տեղի աղօթից յաղագս նոյն ժողովրդեան. զի հասարակութիւնն Հայոց ըստ սովորութեան և ըստ օրինաց իրեանց աղօթեսցեն անդ ...: Պապն Հռովմայ, զի զմինն՝ ի Քահանայից կամ՝ ի հոգևորականաց քրիստոնէից առաքեսցէ յարքայանիստն Սպահան, զի նա աղօթեսցէ յասացեալ եկեղեցւոջն այնմիկ՝ վասն ուսանելոյ ժողովրդեանն, զի և մեզ լիցի մասն և բաժին յաղօթից անտի: Որովիտես քանի քարինք սուրբ կային յԷջմիածին Երևանայ, որոյ շինութիւնն աւերակ է ըստ մեծի մասին՝... և Քահանայ տեղոյն ևս գոսկերս սրբոց որք թաղեալ կային անդ՝ արտաքս հանեալ անտի վաճառեալ էր այլազգեաց ... վասնորոյ զնոյն քարինս արտաքս քերեալ անտի հրամայեցաք առաքել ի Սպահան, զի ի շինութեան մեծահոչակ Եկեղեցւոյն ...: Եւ ամենեքեան ի միասին Հայք, Եպարքոսն (վեզիր) և Մահրալիքեզն (արքայազնի դաստիարակը և Թ. Մ.) միաբան խորհրդով առեալ զներհուն ճարտարապետս տարցեն ընդ ... Բաղժրէշկի ի տեղին գոր վասն եկեղեցւոյ նշանակեցաք, և անդ ձգեսցեն զյատակագիծն մեծահոչակ եկեղեցւոյն...»⁵⁴:

Ակնհայտ է՝ շահը ներկայանում է Իրանում բոլոր քրիստոնյաներին հովանավորող «Հայր»՝ կառուցելով ընդհանրական աղոթատեղ-կենտրոն, որի հովանու ներքո «քարեկամութեան և եղբայրության» մտքով պետք է միավորվեն հայկական (յիսարկե Իրան), իսպանական (ակնկալվում էր և միջնորդավորված Եվրոպան) և հատկապես պարսկական (Հռոմ և կաթոլիկ աշխարհ) հզոր գործոնները: Այսպիսով՝ սա հոգևոր միավորման ձեռնարկում էր, որով շահ Աբբաս Ա-ն «տիեզերական» հնչեղության ծառայություն էր մատուցում Եվրոպային՝ ի դեմ Հռոմի:

17-րդ դարի առաջին տասնամյակում՝ իրանական և օսմանյան արշավանքներից հետո, Հայաստանում ստեղծված քաղաքական և տնտեսական ժանրագույն իրավիճակը, հոգևոր օջախների թուլացումն ու ոչնչացման եզրին կանգնած լինելը, Էջմիածնի աղքատ վիճակը, միևնույն ժամանակ կաթողիկոսական արքոնի համար ընթացող պայքարը պարարտ հող էին ստեղծում կաթոլիկ քարոզիչների անվերահսկելի գործունեության համար, որոնք «եկին ի Ֆռանկաց աշխարհէն... յաշխարհս Հայոց, և մտին ի գաւառն

⁵⁴Տրք-Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր-Ջուղայու որ յԱպահան, հ. Ա, էջ 51-53:

Արարատու, և սկսան շրջիլ ի վանօրայս Հայոց...⁵⁵, իսկ «...պարզամիտ ազգն Հայոց, ոչ գիտէին, թէ զինչ դիտաւորութեամբ շրջին նորա», և վկայում է պատմիչը⁵⁶:

Օսմանցիներից հայկականը «փրկող» կաթոլիկ քարոզիչներն ունեին կանխամտածված գործելակերպ՝ մշակված ծրագրով և նախնական պատրաստվածությամբ, որի մասին է վկայում նրանց մոտ գտնվող լատիներեն լեզվով «... զիքք մի որպէս զաշխարհացոյց, որ ... անվրէպ ցուցանէր, թէ ուրանօր իցեն գերեզմանք և դամբարանք սրբոցն՝ որք կան...ի վանօրայս Հայոց»-ը⁵⁷: Այսինքն՝ ըստ նախօրոք կազմված ուղեցույցի՝ նրանց հանձնարարված էր գտնել և թալանել հայկական սրբավայրերում պահվող նյութական արժեքները և հատկապես սրբերի մասունքները: Ամենայն հավանականությամբ այս տեղեկությունները հավաքել էին կաթոլիկ քարոզիչները որոշակի ժամանակահատվածում, եթե նկատի ունենանք, որ Հայաստանում նրանց գործունեության առաջին քայլերի մասին հիշատակումները վերաբերում են դեռևս 14-15-րդ դարերին⁵⁸, երբ Հայաստան, ապա և Իրան են գալիս Դոմինիկյան կամ Ծիզվիտ միախոնքների առաջին ներկայացուցիչները և որոնց կարող էին օժանդակել նաև կաթոլիկությամբ հարող հայ եկեղեցական (ունիթորականությանը հարող) գործիչներ⁵⁹:

Երևույթի ի հայտ գալը, թերևս, անմիջականորեն շաղկապված էր տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական ծայրահեղ սրված իրավիճակի հետ (արաբական, օսմանյան, մոնղոլական արշավանքները և այլն), երբ հայ լուսավորչական եկեղեցու որոշ ներկայացուցիչներ արդեն իսկ սկսում էին ապավինել եվրոպական պետությունների և մասնավորապես Հռոմի հովանավորությանն ու օժանդակությանը: Դրանով իսկ ստեղծվում էր պարարտ հող կաթոլիկ եկեղեցու և՛ ֆինանսական, և՛ գաղափարական ակտիվ ու հզոր ներթափանցման համար Հայաստան՝ այն օգտագործելով Եվրոպայի կողմից Իրանում իրականացվող գաղափարական, քաղաքական ու տնտեսական տարածապաշտության համար:

⁵⁵Դարիժեցի Ա., Գիքք պատմութեանց, էջ 167-169:

⁵⁶Նույն տեղում, էջ 167:

⁵⁷Նույն տեղում:

⁵⁸Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ., սյուն 1196:

⁵⁹Նույն տեղում, էջ 2156-2157:

Կարմեյան միաբանությունն ու նրա հետաքրքրություններն Իրանի նկատմամբ: Իրան ներթափանցման սկիզբը

Հռոմի պապ Կղեմես VIII-ը (1536-1605) վաղուց էր մտադիր Հիսուսյաններին Իրան ուղարկել, թեև Հռոմին ավելի շատ հետաքրքրում էր շահի ունեցած վերաբերմունքը քրիստոնեական կրոնի նկատմամբ: Ահա թե ինչու մախքան Կարմեյանների մուտքն Իրան Հիսուսյան հայերի Ֆրանցիսկո դա Կոստան և Դիեգո Միրանդան 1601թ. փետրվարին Կղեմես VIII-ի որոշմամբ ուղևորվեցին Իրան: 1601թ. մայիսի 2-ի պապի նամակում նշվում էր այն մասին, որ «կարճ ժամանակահատվածում իրենք Իրան կուղարկեն քահանաների, ճշմարտության բժիշկների, փրկության ուսուցիչների...»⁶⁰:

Հայտնի է, որ Արևելքում դեգերող կաթոլիկ քարոզիչները տեղեկություն էին հաղորդում եվրոպական կաթոլիկ միապետներին Իրանի տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին, օրինակ՝ օտարերկյա պետությունների հետ Իրանի ունեցած հարաբերությունների, պարսից արքունիքի մասին և այլն⁶¹:

Կարմեյան միաբանությունը հիմնադրվել է Բարսող անունով խաչակիր քահանայի կողմից 12-րդ դարի երկրորդ կեսին Պաղեստինում՝ Կարմեյ լեռան վրա գտնվող Էլիասի (Էլիջահ) անունը կրող քարայրում (Jebel Mar Elyas)⁶²: Միաբանության անվանումը ծագել է Կարմեյ լեռան անունից, որը Իսրայելում դեռևս Ջ. ա. 878-850 թթ. Ասար թագավորի օրոք սրբացվել և դարձել էր ճգնավորների հավաքատեղի: Մոտ 1209թ. Մուրք Ալբերտ հայրապետը (1206-1214թթ.) Կարմեյ լեռան մի խումբ ճգնավորների միավորում է համայնքի մեջ, ներկայացնում տասնվեց հողվածից կազմված

⁶⁰ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 84-86.

⁶¹ تصورات فلسفي، زندگانی شاه عباس اول، جلد ۳، تهران، ۱۳۷۱، ص. ۹۲.

⁶² Encyclopaedia Britannica, v. IV, Chicago, London, Toronto, 1961, p. 888, The Cambridge Medieval history, v. VI, Cambridge, 1936, p. 757, Советский энциклопедический словарь, М., 1988, стр. 549, Charles L. Souvay, The Catholic Encyclopedia, v. V, p. 1-3, <http://www.newadvent.org/cathen/05381b.htm>, Waddington R.G., History of the Church from the earliest ages to the reformation, London, Baldwin and Cradock, Paternoster Row, MDCCCXXXIII, p. 393.

«հավատի կանոնադրություն»⁶³, որը 1226թ. վավերացնում է Ինոկենտիոս IV պապը: Սակայն հակառակորդները՝ առավել աշխարհիկ կողմնորոշման հարողները, 16-րդ դ. վերջին ստեղծում են «Բոկոսան» (Discalced) Կարմելյաններ» միավորումը, որով «Les Grands Carmes» միասնական միաբանությունը տրոհվում է՝ վերստին միավորվելով միայն 19-րդ դ. 70-ական թթ.⁶⁴: Հետագայում միաբանությունը արժանանում է կաթոլիկ եկեղեցու հակառակորդների պարսավանքին և քննադատությանը⁶⁵:

Կարմելյան միաբաններին Իրան ուղարկելու որոշումը կայացրել է Հռոմի պապ Կղեմես VIII-ը: Առաքելության իրականացման նախաձեռնողներից էին Հայր Փոլ Սայմընը (Fr. Paul Simon of Jesus Mary), Հայր Ջոն Թադեոսը (Fr. John of S. Elisacus), Հայր Վինսենթը (Fr. Vincent of S. Francis) և եղբայր Ջոնը (John of the Assumption from Umbria): Խմբի հիմնգործող և աշխարհիկ անդամը արագոնացի Ֆրանցիսկո Ռիոդոլիդե էր (Francisco Riodolid de Peralta), ով երկար տարիներ ծառայել էր Ֆլանդրիայում (Flanders)⁶⁶:

Վերջինիս մասին Փոլ Սայմընը հիշատակում է. «Այս իսպանացի ջենտլմենին Հռոմի պապ Կղեմես VIII-ն ուղարկել էր Իրան, որպեսզի իմանար, թե արդյոք նպատակահարմար է ռազմական ինժեներներ կամ այլ բնույթի ռազմական գործիչներ ուղարկելը, ինչպես որ շահն էր խնդրել պապից թուրքերի դեմ լավ

⁶³ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 5. The Carmelite Order, The Catholic Encyclopedia, v. III, <http://www.newadvent.org/cathen/03354a.htm>, Moriones P. I., Theresian Carmel, Pages of history, R., 1978, p. 2, <http://www.oed.pcn.net/histo-1.htm>.

⁶⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 8. «Կարմելյանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում» աշխատության մեջ հեղինակը նկատի ունի բացառապես «Բոկոսան» Կարմելյաններին: Կարմելյանների մասին տե՛ս նաև՝ Մարտոյան Թ., Կարմելյան միաբանության ներքափանցումն Իրան, Մեթափոր և Սիջին Արևելյի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Ե., 2004, էջ 418-429:

⁶⁵ Семенова Л. А. Орден кармелитов как оружие проникновения европейцев в Иран, Ближний и Средний Восток, сборник статей, М., 1962, с. 94, Apostolic Presentation, St. Joseph OCD (Բոկոսան Կարմելյան միաբանության լատիներեն հասվածում) Community, Clayton, Missouri, June 20, 2001, <http://www.ourgardenofcarmel.org/stlocds.html>, ինչպես նաև История религии (под общ. редакцией Яблокова И. Н.), М., 2004, стр. 315, История средних веков.

Ранее новое время. (под ред. Карпова С. П.), т. II, М., 2003, стр. 146.

⁶⁶ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 105.

գինվորներ մարգելու համար»⁶⁷: Ուղևորությունը մասամբ պետք է հովանավորեր Բարոն դե Կակուրին⁶⁸: Նրանք երաշխավորական նամակներ ունեին պապից՝ ուղղված Գերմանական կայսր Ռուդոլֆ II-ին, Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ III-ին, Մոսկովիայի մեծ դուքս Ֆեոդորին և պարսից շահ Աբբաս Ա-ին:

1604թ. հունիսի 30-ի նամակում Կղեմես VIII-ը գրում է շահին. «...Ջանի որ մենք շատ ենք ցանկանում Ձեր վստահությանն արժանի մարդկանց ուղարկել ի հավաստումն մեր բարյացակամության, Կարմելյան միաբաններից ընտրել ենք երեք բարեպաշտ և ուսյալ քահանաների՝ Փոլ Սայմընին⁶⁹, Ջոն Թադդեուսին, Վինսենթին, որոնց ուղարկում ենք իրենց ընկերակիցների հետ: Մեր նամակները նրանք կհանձնեն Ձեզ և կշնորհավորեն մեր անունից այն բանի համար, որ բազում և մեծ հաղթանակներով փառավորել եք Ձեր անունը աշխարհով մեկ...»⁷⁰:

Շահ Աբբասի Ա-ի համար առաջնային նշանակություն ուներ հզոր և մարտունակ բանակի ստեղծումը, որը շահն իրականացնում էր եվրոպական մասնագետների մասնակցությամբ: Այս նպատակով 1598թ. Իրան են հրավիրվում անգլիացի Էմբրնի և Ռոբերտ Շըրլի եղբայրները⁷¹, որպես «լոխագործողության կապի սպաներ»՝ իրականացնելու «ցանկալի համագործակցությունը»:

Ովքե՞ր էին Շըրլի եղբայրները, որո՞նք էին նրանց ժամանելու հանգամանքները, քայլերը, որ ուղղակի կամ անուղղակի

⁶⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 105.

⁶⁸ Ֆրենսիս Կիմինին հայտնի էր Բարոն դե Կակուրի անվամբ: Նա տարեկան երեք հազար դուկատ էր տրամադրել Կարմելյաններին, իսկ հետագայում այդ գումարը նվազեցրել է՝ հասցնելով մինչև չորս հարյուրի ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 757-758):

⁶⁹ Փոլ Սայմընը, ըստ էության, Կարմելյան ներկայացուցչության առաջնորդն էր, սակայն ոչ միշտ է այդ փաստը հիշատակվում «Կարմելյանների տարեգրությունում»: Այն երևում է հատկապես Կղեմես VIII-ի և Պողոս V-ի՝ նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքից, ինչպես նաև նրան վստահված աշխատանքներից: Դա է ապացուցում նաև ինքը՝ Փոլ Սայմընը. «...Պապը հրամայեց ինձ՝ մյուսներից (Կարմելյաններից) ավագին և իր ղեապաններից կրտսերին...» ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 128):

⁷⁰ Նույն տեղում, էջ 105-106:

⁷¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 70., Байбуртян В., Армянская колония Новой Джульфы в XVII веке, стр. 27.

նամակագրության ձևով գրառված են «Կարմեյանների տարեգրությունում»:

Իրանում հաստատված պորտուգալացի ճանապարհորդ Ֆրանցիսկո դա Կոստան (ավելի ուշ կպարզվի, որ նա որպես պատվիրակ ժամանել էր Հոռմից) տեղեկություններ է հաղորդում Շըրլի եղբայրների մասին. «Էմբընի Շըրլին Մուսեբսի կոնսության ասպետ և բազուխու զանձապահ Թոմաս Շըրլիի երկրորդ որդին է, ում մայրը կաթոլիկուհի էր»⁷²: Դա Կոստան հաղորդում է նաև, որ «Ռոբերտի հայրն ու եղբայրը հերետիկոսներ են, բայց նա միշտ էլ զսպվածություն և անտարբերություն է ցուցաբերել այդ հարցում, իսկ 1598թ. Վենետիկում հարել է կաթոլիկությանը»⁷³:

1609թ. դա Կոստան հաղորդում է. «Դոն Ռոբերտ Շըրլին, ում պարսից արքան 1599թ. մարտ կամ ապրիլ ամսին իր եղբայր դոն Էմբընիի հետ Ձերդ Սրբության մոտ է ուղարկում որպես դեսպան՝ վաճառականի հազուստով, ժամանեց Իրան հենց այն ժամանակ, երբ շահը ցանկանում էր դեսպաններ ուղարկել քրիստոնյա արքաների մոտ, որոնց կուղեկցեին ճանապարհներին քաջածանոթ անձինք, որպեսզի նրանք չմոլորվեին, ինչը պատահել էր երկու տարի առաջ (1597թ.): Երբ նրանք ժամանեցին Իրան քսանհոգանոց շրախմբով, որի կազմում կային նաև հայեր, հաստատվեցին արքայական մայրաքաղաք Ղազվինում: Շահի հրամանով նրանց դիմավորեցին մեծ շուքով քաղաքից երեք մղոն հեռավորության վրա»⁷⁴:

Հայտնի է, որ Եվրոպայում մահմեդականների նկատմամբ դրսևորած անվստահությունը, ավելին՝ թշնամանքը, դժվարացնում էր երկրի ներսում և դրանից դուրս նրանց տեղաշարժերը: Այս կացությունից դուրս գալու համար էլ շահ Աբբաս Ա-ն իր մոտ ծառայության անցած Էմբընի Շըրլիին է հանձնարարում (շահը նրան անվանում էր «միրզա Անտոնիո») մեկնել Եվրոպա Հռոմի պապ Կղեննես VIII-ի և քրիստոնյա արքաների մոտ, որպեսզի վերջիններիս

⁷² "A Chronicle of the Carmelites", v. I, p. 70.

⁷³ Կոսյն տեղում:

⁷⁴ Երև նրանք Իրան են ժամանել 1599թ., ապա դեռևս 1598թ. մայրաքաղաք Ղազվինից տեղափոխվել էր Սպահան, ուրեմն սա անճշտություն է. կամ պետք է լինի արքայական մայրաքաղաք Սպահան կամ պարզապես Ղազվին քաղաք: Ըստ մեզ, ճիշտ տարբերակը արքայական մայրաքաղաք Սպահանն է, քանի որ նրանք ժամանում են մայրաքաղաք, իսկ այնտեղ նրանց դիմավորում են շահի արքունիքից:

հայտարարի եվրոպական վաճառականների համար Իրանի սահմանների բաց լինելու մասին, ինչպես նաև բանակցություններ վարի առևտրական պայմանագրեր կնքելու և այլ հարցերի շուրջ: Շահի կարգադրությամբ Շըրվին պետք է հասներ այն բանին, որ եվրոպական տարբեր ազգերի վաճառականներին ներգրավել իրանական առևտրի մեջ, բացի այդ՝ նա պետք է Իրանի և եվրոպական պետությունների միջև հակաբուրքական դաշինքի կնքման հարցում ջանքեր գործադրեր⁷⁵: Դեսպանության կազմի մեջ ընդգրկված էր նաև արքունիքին մոտ կանգնած Հուսեյն (Հասան) Ալի բեկ Բայաթը, ով ձևականորեն նշանակված էր դեսպանության ղեկավարի պաշտոնում: Դեսպանությունը Եվրոպա ուղևորվեց 1599թ. մայիսին⁷⁶ (իրենց ժամանումից մեկ կամ երկու ամիս հետո):

Շահն իր դեսպան Էնթընի Շըրվին տվել էր տասնույթ կետից բաղկացած հրահանգներ՝ Հռոմի պապ Կղեմես VIII-ի և քրիստոնյա արքաների հետ բանակցություններ վարելու վերաբերյալ: Հարկ ենք համարում ներկայացնել դրանցից մի քանիսը, որոնք տեղ են գտել «Կարմեյականների տարեգրությունում»:

Պարսից շահն առաջարկում էր իր բարեկամությունն ու բարյացակամությունը բոլոր քրիստոնյա արքաներին՝ ելնելով վերջիններիս հաճոյանալու, ինչպես նաև՝ ընդհանուր թշնամու նկատմամբ ունեցած ատելությունից:

Համաձայն առաջին կետի՝ պարսից շահը պատրաստ էր պատերազմել, եթե միայն համոզված լինի, որ ողջ ծանրությունը միայն իր ուսերին չի ընկնի: Երկրորդ կետում նշվում էր, որ որպես երաշխիք այդ ամենի՝ Նորին Մեծությունը (շահ Աբբաս Ա-ն - Թ.Մ.) մեծագույն լրջությամբ պահանջում է, որ բոլոր արքաները, միապետերը, ինչպիսիքն էլ որ լինեն, պետք է համաձայնեն չեղյալ հայտարարելու բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, որ

⁷⁵ Բայրության Վ., Համաշխարհային ատևուրդ և իրանահայությունը ... , էջ 49:

⁷⁶ Նույն տեղում, Курбанова Ч., О роли кармелитов в установлении дипломатических отношений сефевидского государства с западными странами в период правления шаха Аббаса I, Известия Академии наук Азербайджанской ССР, Серия истории, философии и права, Баку, 1974, стр. 30-38.

ունեցել են բուրքերի հետ, և իրենց ամբողջ ուժը ներդնեն ձեռնարկվող պատերազմում:

15-րդ կեսում նշվում էր, որ շահն ազատորեն բացում է իր երկրի դռները բոլոր քրիստոնյաների առջև, ուստի նրանք կարող են մտնել, հաստատվել և մնալ այնտեղ և, այդ ամենից անկախ, անվտանգություն և ամեն տեսակ ապահովություն երաշխավորելով՝ նրանց տալիս է լայն արտոնություններ՝ անձի, գույքի, առևտրի և այլ գործերի անձեռնմխելիություն, իրենց կրոնը դավանելու և ցանկացած վայրում, ուր արդեն հիմնվել են, հաստատվելու հնարավորություն՝ առանց որևէ խոչընդոտի, նեղության և անհանգստության:

Համաձայն 16-րդ կեսի՝ տերության ողջ սահմաններում բնակվող շահին ենթակա բոլոր քրիստոնյաներին համադաշնության ամբողջական և փոխադարձ վստահության համար կոչ էր արվում ճանաչել և հնազանդվել Համընդհանուր եկեղեցուն, ինչպես դա անում են բոլոր քրիստոնյաները⁷⁷:

«Կարմեյանների տարեգրության» հեղինակն այս առնչությամբ նշում է, որ «պարտադիր չէ արևելագետ լինել հասկանալու համար, որ վերը հիշատակված կետերը ոչ թե պարսից շահի, այլ Շըրլիի պայմաններն էին: Երբ ինչ-որ մեկը խորհում է մնանատիպ արտոնություններ տրամադրել քրիստոնեությանը, ավելին՝ հոժարակամ ընդունում բոլոր արևելյան հերձվածողներին, հայերին և ուրիշներին հռոմեական հպատակությանը ենթարկելու հարկադրական առաջարկը, այն էլ հետագա իրադարձությունների լույսի ներքո... Այդ հողավածները որքանով Շըրլիին, նույնքան էլ շահ Աբբաս Ա-ին են պատկանում»⁷⁸:

Ռ. Շըրլիի՝ պարսից շահ Աբբաս Ա-ի անունից Հռոմ հղած մեկ այլ մամակում մասնավորապես արժարժվում է «ընդհանուր թշնամու» դեմ պայքարի գաղափարը. «...Անչափ շնորհակալ ենք, Չերդ Մեծություն, մնան լավ առաջարկի համար: Խոստանում ենք ընդունել Կարմեյան հայերին: Ինչ վերաբերում է միասնական պայքարին, ապա օսմանցին ժամանակ չի ունենա դիմադրելու մնան անսպասելի և անդարձանելի ցավին: Եվ քանի որ պարսից շահը լավ տեղեկացված է, որ ոչ ոք չի կարող վնասել Օսմանյան կայսրությանը

⁷⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 72-73.

⁷⁸ Նույն տեղում, էջ 73:

ավելի, քան նորին Կաթողիկ Մեծությունը, ուստի խնդրում է, օգտագործելով Չեր հեղինակությունը և համոզմունքը, առաջարկել և ոգեշնչել Իսպանիայի թագավորին արշավանք ձեռնարկել դեպի Կիպրոս, քանի որ այն ունի ձմեռելու բոլոր հարմարությունները, այնուհետև գրոհել Սիրիայի ու Հալեայի վրա և միանալով պարսկական բանակին՝ իրարանցում առաջացնել օսմանցիների շրջանում: Խնդրում ենք նաև չեղյալ հայտարարել Օսմանյան կայսրության հետ կնքած բոլոր համաձայնագրերը և այդպիսով գործադրել բոլոր ուժերն ընդդեմ թշնամու»⁷⁹:

Ռոբերտ Շըրլին, իր հերթին, հարկ է համարում 1609թ. Կոնստանտնուպոլիսի հաջորդին՝ Պողոս V պապին (1605-1621), տեղեկացնել շահի հետ համագործակցելու անհրաժեշտության մասին. «Սուրբ Հայր, Չերը Մեծությունն արդեն գիտի երկու հզոր կայսրությունների՝ Իրանի և Օսմանյան կայսրության մեծ ու վաղեմի թշնամության մասին և թե ինչքան կարևոր է քրիստոնեության համար Օսմանյան կայսրության անկումը... Երկար տարիներ աշխատելով պարսից շահի մոտ՝ ես, եղբայրս և ուրիշ կաթողիկ քրիստոնյաներ, տարբեր ապացույցներ վկայակոչելով, առաջ ենք քաշել քրիստոնյա արքաների հետ բարեկամության և համագործակցության կարևորագույն գաղափարը: Այն հարցին, թե որքանով արդյունավետ կլինի այս միությունը, համոզմունք ենք հայտնել, որ, անտարկելիորեն, խոստումնալից կլինի: Իսկ ինչ վերաբերում է քրիստոնեությանը, ապա պարսից շահը բնույթով մեղմ է և շատ բարյացակամ քրիստոնյաների նկատմամբ մասնավորապես այն բանից հետո, երբ կնության առավ վրաց թագավորներից մեկի՝ Միմոն խանի դստերը»⁸⁰:

Մըր Էնթրենի Շըրլին նախքան Իսպանիա մեկնելը որոշ ժամանակ մնում է Իտալիայում: Սակայն նա շարունակական նամակագրական կապ ուներ պարսից շահ Աբբաս Ա-ի հետ՝ համոզմունք հայտնելով, որ Իտալիայում իր մնալը Աբբաս Ա-ի շահերից է բխում և շարունակ հուսադրում էր, որ կվերադառնա⁸¹:

«Կարմենյանների տարեգրությունում» բացահայտորեն չի նշվում Էնթրենի Շըրլիի՝ այս կամ այն միաբանությանը

⁷⁹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 152-153.

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ Նույն տեղում, էջ 78:

պատկանելության մասին, սակայն 1601թ. մայիսի 17-ի՝ շահ Աբբասին ուղղված պապի նամակում հանդիպում ենք Կղեմես VIII-ի՝ Շըրլիի նկատմամբ ունեցած վերաբերմունքին, որը հիմք է տալիս ենթադրելու, որ Էնթրենին Հռոմի պապի կողմից սիրված ու վստահելի անձ էր, քանի որ այդ նամակում հանդիպում ենք «մեր սիրեցյալ որդի ասպետ (ընդգծումը մերն է- Թ. Մ.) Էնթրենի Շըրլի» և հենց նույն նամակում տեղ գտած «ժողակալոր անձ՝ Հուսեյն Ալի բեկ» արտահայտություններին⁸²:

Կղեմես VIII-ը առանձնահատուկ վերաբերմունք էր դրսևորում հատկապես կաթոլիկների նկատմամբ, ովքեր պետք է համազործակցեին իրանական արքունիքի առաջին գորահրամանատար, հայազգի Ալլահվերդի խանի հետ⁸³:

Հարկ է նշել, որ դեսպանության կազմի մեջ ընդգրկված տասնութ պարսիկներից գրեթե ոչ ոք չվերադարձավ Իրան, իսկ երեք քարտուղարները՝ Ալի Դուլի խանը, Բոնայեղ բեկը և Օրուջ բեկը, դավանափոխ լինելով, մնացին Իսպանիայում՝ ընդունելով համապատասխանաբար Դոն Ֆիլիպ, Դոն Դիեգո, Դոն Ժուան անունները: Մի շարք ծառայողներ մնացին Հռոմում և ընդունեցին Հիսուսյանների դավանանքը⁸⁴: Պարսից շահ Աբբաս Ա-ին՝ Կղեմես VIII-ի հղած նամակում (1601թ.) պապը փորձում է բացատրել, թե ինչու Հուսեյն Ալի բեկի շքախմբից ոմանք չվերադարձան. «... Բարեհաճորեն հարգված անձնավորություն Հուսեյն Ալի բեկի երեք ընկերակիցները քրիստոնյա դառնալու ցանկություն են հայտնում՝ սուրբ մկրտությանը վերածնվելու: Քանի որ նրանք չափահաս մարդիկ են, առանց ուժի սպառնալիքի գործադրման կամ վախի ազդեցության՝ իրենց կամքով, ցանկություն են հայտնում մկրտվելու և ընդունելու քրիստոնեություն, իսկ մենք պարտավորվում ենք բացել կյանքի դարպասը բոլոր նրանց առջև, ովքեր փնտրում են հավերժական փրկություն... Խնդրում ենք անակնկալի չգալ, եթե այդ երեք մարդիկ Հուսեյն Ալի բեկի հետ Իրան չվերադառնան: Մենք գիտենք Ձեր մեծահոգության ու բարյացակամության մասին, որ Դուք տաժում եք

⁸² "A Chronicle of the Carmelites", v. I, p. 78-79.

⁸³ Wilson T., The Persian Gulf, p.131-132, **Беляев Е. А.**, Иран в средние века, М., 1941, с. 17, 57-58. **من. ۱۳۷۷، تهران، دکتر عبدالحمید توائی، روا بط سیاسی ایران و اروپا در عصر صفوی، تهران، ۱۳۷۷.**

⁸⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 79.

մեր նկատմամբ, և մենք էլ մեր հերթին մեր հարգանքն ենք ցուցաբերում Ձեր նկատմամբ...»⁸⁵:

Հռոմ հղած իր զեկուցագրում Հայր Փոլ Սայնընը, անդրադառնալով հակասումանյան դաշինքին, հայտնում է իր կարծիքը. «... Այն ամենը, ինչ կարող եմ տեղեկացնել, այն է, որ պարսից թագավորը շատ հզոր է. այլևս ոչ մի կարիք չկա, որ քրիստոնյա արքաներն օգնեն նրան... և ի գորու է միայնակ կործանելու օսմանցիներին: Եթե Չերդ Մեծությունը և քրիստոնյա արքաները ցանկանում են նրա հետ ընկերանալ, ապա այդ ընկերությունը երկկողմ բավարարում կստանա»⁸⁶:

Հայր Փոլը փորձում է վերլուծել ու հեռատեսորեն նկատել, թե «ինչպե՞ս կարող է օսմանցին կանգնել պարսից շահի և Հռոմի պապի միջև: Ավելին՝ այդ շրջանի բոլոր քրիստոնյաները՝ հայերը, հույները և ուրիշներ օգնություն են խնդրում և պատրաստ են միանալու մեզ, եթե միայն իրենց հետևում քրիստոնյաներից բաղկացած փոքրիկ բանակ տեսնեն: Հայոց պատրիարքը, շատ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ թախանծում են ինձ, որ Չերդ սրբությունը չլքի իրենց և չկորցնեն միասնական պայքարի այս հնարավորությունը: Չենք կորցնի նաև Աստծու ընձեռած նման լավ հնարավորությունը՝ սրբազան վայրերը վերագրավելու համար»⁸⁷:

Չնայած Կղեմես VIII պապի, Իսպանիայի թագավոր Ֆիլիպի III-ի, Գերմանիայի կայսր Ռուդոլֆ II-ի, Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ III-ի խոստումներին՝ սատարել Իրանին Օսմանյան կայսրության դեմ ռազմական գործողությունների ձեռնարկմամբ, այդուհանդերձ, շահ Աբբաս Ա-ն խոստացած ոչ մի օգնություն չստացավ, որը և հանգեցրեց եվրոպական պետությունների հետ իրանական կողմի հարաբերությունների սառեցմանը և մասամբ էլ լարվածության առաջացմանը: Այս սրված իրավիճակն ամնիջականորեն անդրադարձավ և Իրանում գտնվող միաբանությունների ներկայացուցիչների վրա, որի մասին է վկայում մասնավորապես Ջոն Թադդեուսի մամակը (1609թ. մայիսի 14-ի)՝ ուղղված իր ընկերակից Հայր Վինսենթին: Նամակում Թադդեուսը

⁸⁵ "A Chronicle of the Carmelites", v. I, p.79.

⁸⁶ Նույն տեղում, էջ 98-99:

⁸⁷ Նույն տեղում, էջ 99:

պատկանելության մասին, սակայն 1601թ. մայիսի 17-ի՝ շահ Աբբասին ուղղված պապի մամակում հանդիպում ենք Կղեմես VIII-ի՝ Շըրլիի նկատմամբ ունեցած վերաբերմունքին, որը հիմք է տալիս ենթադրելու, որ Էնթընին Հռոմի պապի կողմից սիրված ու վստահելի անձ էր, քանի որ այդ մամակում հանդիպում ենք «**մեք սիրեցյալ որդի ասպետ** (ընդգծումը մերն է- Թ. Մ.) Էնթընի Շըրլի» և հենց նույն մամակում տեղ գտած «**ռոչակավոր անձ՝ Հուսեյն Ալի բեկ**» արտահայտություններին⁸²:

Կղեմես VIII-ը առանձնահատուկ վերաբերմունք էր դրսևորում հատկապես կաթոլիկների նկատմամբ, ովքեր պետք է համագործակցեին իրանական արքունիքի առաջին գորահրամանատար, հայազգի Ալլահվերդի խանի հետ⁸³:

Հարկ է նշել, որ դեսպանության կազմի մեջ ընդգրկված տասներեք պարսիկներից գրեթե ոչ որ չվերադարձավ Իրան, իսկ երեք քարտուղարները՝ Ալի Դուլի խանը, Բոնայեղ բեկը և Օրուջ բեկը, դավանափոխ լինելով, մնացին Իսպանիայում՝ ընդունելով համապատասխանաբար Դոն Ֆիլիպ, Դոն Դիեգո, Դոն Շուան անունները: Սի շարք ծառայողներ մնացին Հռոմում և ընդունեցին Հիսուսյանների դավանանքը⁸⁴: Պարսից շահ Աբբաս Ա-ին՝ Կղեմես VIII-ի հղած մամակում (1601թ.) պապը փորձում է բացատրել, քե ինչու Հուսեյն Ալի բեկի շքախմբից ոմանք չվերադարձան. «... Բարեհաճորեն հարգված անձնավորություն Հուսեյն Ալի բեկի երևք ընկերակիցները քրիստոնյա դառնալու ցանկություն են հայտնում՝ սուրբ մկրտությամբ վերածնվելու: Քանի որ նրանք չափահաս մարդիկ են, առանց ուժի սպառնալիքի գործադրման կամ վախի ազդեցության՝ իրենց կամքով, ցանկություն են հայտնում մկրտվելու և ընդունելու քրիստոնեություն, իսկ մենք պարտավորվում ենք բացել կյանքի դարպասը բոլոր նրանց առջև, ովքեր փնտրում են հավերժական փրկություն... Խնդրում ենք անակնկալի չզալ, եթե այդ երեք մարդիկ Հուսեյն Ալի բեկի հետ Իրան չվերադառնան: Մենք գիտենք Չեր մեծահոգության ու բարյացակամության մասին, որ Դուք տաժում եք

⁸² "A Chronicle of the Carmelites", v. I, p. 78-79.

⁸³ Wilson T., The Persian Gulf, p.131-132, **Беляев Е. А.**, Иран в средние века, М., 1941, с. 17, 57-58. **مهراڻ، ۱۳۷۲، ص. ۵۶-۵۷**

⁸⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 79.

մեր նկատմամբ, և մենք էլ մեր հերթին մեր հարգանքն ենք ցուցաբերում Ձեր նկատմամբ...»⁸⁵:

Հռոմ հղած իր զեկուցագրում Հայր Փոլ Սայմընը, անդրադառնալով հակաօսմանյան դաշինքին, հայտնում է իր կարծիքը. «... Այն ամենը, ինչ կարող եմ տեղեկացնել, այն է, որ պարսից թագավորը շատ հզոր է. այլևս ոչ մի կարիք չկա, որ քրիստոնյա արքաներն օգնեն նրան... և ի գորու է միայնակ կործանելու օսմանցիներին: Եթե Ձերդ Մեծությունը և քրիստոնյա արքաները ցանկանում են նրա հետ ընկերանալ, ապա այդ ընկերությունը երկկողմ բավարարում կստանա»⁸⁶:

Հայր Փոլը փորձում է վերլուծել ու հեռատեսորեն նկատել, թե «ինչպե՞ս կարող է օսմանցին կանգնել պարսից շահի և Հռոմի պապի միջև: Ավելին՝ այդ շրջանի բոլոր քրիստոնյաները՝ հայերը, հույները և ուրիշներ օգնություն են խնդրում և պատրաստ են միանալու մեզ, եթե միայն իրենց հետևում քրիստոնյաներից բաղկացած փոքրիկ բանակ տեսնեն: Հայոց պատրիարքը, շատ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ թախանձում են ինձ, որ Ձերդ սրբությունը չլքի իրենց և չկորցնեն միասնական պայքարի այս հնարավորությունը: Չենք կորցնի մահ Աստծու ընձեռած մման լավ հնարավորությունը՝ սրբազան վայրերը վերագրավելու համար»⁸⁷:

Չնայած Կղեմես VIII պապի, Իսպանիայի թագավոր Ֆիլիպի III-ի, Գերմանիայի կայսր Ռուդոլֆ II-ի, Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ III-ի խոստումներին՝ սատարել Իրանին Օսմանյան կայսրության դեմ ռազմական գործողությունների ձեռնարկմամբ, այդուհանդերձ, շահ Աբբաս Ա-ն խոստացած ոչ մի օգնություն չստացավ, որը և հանգեցրեց եվրոպական պետությունների հետ իրանական կողմի հարաբերությունների սառեցմանը և մասամբ էլ լարվածության առաջացմանը: Այս սրված իրավիճակն անմիջականորեն անդրադարձավ և Իրանում գտնվող միաբանությունների ներկայացուցիչների վրա, որի մասին է վկայում մասնավորապես Ջոն Թադդեուսի մամակը (1609թ. մայիսի 14-ի)՝ ուղղված իր ընկերակից Հայր Վինսենթին: Նամակում Թադդեուսը

⁸⁵ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 79.

⁸⁶ Նույն տեղում, էջ 98-99:

⁸⁷ Նույն տեղում, էջ 99:

հաղորդում էր, որ շահ Աբբաս Ա-ն Սպահանում բնակվող Ավգուստինյան միաբանությանը պատկանող եպիսկոպոսներից մեկի միջոցով տեղեկացրել էր այլ միաբանների, որ եթե Իսպանիայի Ֆիլիպ III թագավորը 1609թ. հապաղի և չկսի պատերազմ Օսմանյան կայսրության դեմ, ապա նրանք (Ավգուստինյանները - Թ.Մ.) ստիպված կլինեն վերադառնալ իրենց երկիրը, քանի որ շահն այլևս նրանց կարիքը չի գա⁸⁸:

1610թ. օսմանյան բանակի՝ դեպի Թավրիզ առաջխաղացման ընթացքում շահ Աբբաս Ա-ն Մոսկովիա, Լեհաստան և Հռոմ ուղարկած դեսպանությունների միջոցով նորից որոշում է դիմել վերոհիշյալ եվրոպական պետություններին՝ ռազմական օժանդակության ակնկալիքով՝ այս անգամ փորձելով նրանց շահագրգռել տնտեսական «քարտի խաղացմամբ»՝ առաջարկելով արևելյան և պարսկական գորգերի, տարբեր սպրանքների և հատկապես հում մետաքսի առևտուրը Եվրոպա իրականացնել Ռուսաստանի և Լեհաստանի տարանցիկ ուղիներով, որպեսզի Օսմանյան կայսրությունը գրկվի առևտրական ճանապարհներից և այդ գործարքներից ստացվող շահույթներից: Եվրոպայի համար այսօրինակ «գրավիչ» առաջարկը ներկայացնողը Հայր Ջ. Թադդեոսն էր, ով շահի հրահանգով 1611 թ. պետք է ներկայանար ռուսական ցարին, Լեհաստանի թագավորին և Հռոմի պապին: Սակայն այս դեսպանությունն անհաջողության մատնվեց, երբ այն Ռուսաստան հասնելուն պես ձերբակալվեց և բանտարկվեց Աստրախանում: Իսկ հետագայում՝ 1614թ., նրանց փոխանակումն այս անգամ Իրանում ձերբակալված ռուսական դեսպանության հետ չշտկեց վիճակը, քանի որ շահի հավատարմագրերն ու նամակները, որոնք գտնվում էին Ջ. Թադդեոսի մոտ, բռնագրավվել և ոչնչացվել էին⁸⁹:

«Կարմեյանների տարեգրությունում» նշվում է, որ բանակցային այս ակտիվ գործընթացում շահ Աբբաս Ա-ն ևս մեկ անգամ օգտվում է Ռ. Շրլլիի ծառայություններից՝ 1622թ. նրան ուղարկելով Եվրոպա և Հռոմի պապի մոտ: Դեսպանին տրված նամակում Աբբաս Ա-ն նշում էր. «Ինքնիշխան պապը խոստացել է

⁸⁸ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 169.

⁸⁹ Երկն տեղում, էջ 144, 194-197:

օգնել օսմանցու դեմ պատերազմում: Եթե պահպանի իր խոստումը, ամենաընդունելի բանը կլինի, չնայած որ ես պատրաստ եմ պատերազմական գործողություններ սկսել... Չեզ մոտ եմ ուղարկում իմ շատ սիրելի և երկար տարիների հավատարիմ ծառային՝ Ռ. Շըրլիին, որպես արտակարգ դեսպան...»⁹⁰:

Ըստ էության, օգտվելով Իրանի ծայրաստիճան կախյալ վիճակից և եվրոպական պետությունների ռազմական դաշինքը գործածելով ընդդեմ Օսմանյան կայսրության լայնածավալ սպառնալիքի՝ Հոմը, ի դեմս Կարմելյանների, կարողացավ ոչ միայն ստանձնել քանակցային առաջատարությունը, այլև կաթոլիկ միսիոներների դեսպանական առաքելություններն օգտագործել՝ Իրանում նրանց հիմնվելու և հետագայում քարոզչական խոշոր կենտրոններ ստեղծելու հեռահար նպատակի իրականացման համար: Եվրոպան, օգտագործելով Վատիկանի կողմից ընձեռնված հնարավորությունը, փորձում էր «խաղաղ» ճանապարհով տիրանալ Արևելքին: Այդ գործընթացն իրականացնող հիմնական ուժը, ըստ Մ. Շեյնմանի, կաթոլիկ առաքելություններն էին, որոնք վերածվել էին հզոր «զենքի» «անսխալական» պապերի գաղութարարական քաղաքականության իրականացման ճանապարհին⁹¹, իսկ «Կրոնական շղարշով ծալոված պապության քաղաքական

⁹⁰ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 131-132, 151-152.

Ռ. Շըրլիի առաջին առաքելությունն Իտալիա իրականացվել է 1609թ., որի մասին մա գրում է. «Պարսից շահը որպես իր դեսպան ուղարկեց Էնրլանի Շըրլիին՝ իմ նորրորդ, Կղեմես VIII պապի մոտ, այնուհետև ինձ՝ Ռոբերտ Շըրլիս...» ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 76):

«Կարմելյանների տարեգրությունում» տեղ գտած փաստաթղթերը՝ կապված 1609 և 1622 թվականների այցելությունների հետ մինևույն բովանդակությունն ունեն: Ռ. Շըրլիի 1609թ. առաքելությունը փաստ է, իսկ 1622թ. շահ Աբբասը ոչ մի պատճառ չունեք դաշինք փնտրելու Իսպանիայի թագավորի հետ, քանի որ վերջինիս հետ պատերազմի մեջ էր Հորմուզի շուրջ ընդդեմ օսմանցիների: Ավելի հավանական է, որ առաջին փաստաթղթի վավերագրումը սխալմամբ կատարվել է պատճենահանի կողմից և երկու փաստաթղթերն էլ պատկանում են հենց նույն՝ 1609թ. Ռ. Շըրլիի առաջին այցելությանը Հոմ, քանի որ Ռ. Շըրլիի 1622թ. Հոմի պապ Գրիգորիոս XV-ին ներկայացրած փաստաթղթի տեքստի բովանդակությունը նույնն է, ինչ 1609թ. Հոմի պապ Պողոս V-ին ներկայացրածը ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 76):

⁹¹ Шейман М. М., Ватикан и католицизм на службе международной реакции, М., 1954, с.14.

նպատակները միշտ էլ հանդիսացել են իրենց գործունեության հիմնական լծակը»⁹²:

Արևելքի տարածաշրջան կաթոլիկ միաբանների ներթափանցման առնչությամբ Ա. Չամինյանը հայտնում է այն միտքը, որ «Կաթոլիկ եկեղեցու առաքելները հեղեղեցին ամբողջ Արևելքն ու նոր աշխարհը և կաթոլիկ եկեղեցու հօստը բազմացրին այն կորստի փոխանակ, որ մա Բողոքականության տարածմամբ Արևմուտքում ունեցաւ»⁹³:

Իրան ժամանող և հիմնավորվող միաբանությունները, ինչպես Պորտուգալիայից Ավգուստինյանները (նրանք առաջին կաթոլիկ կրոնավորներն էին, որոնք 1602թ. հաստատվել էին Սպահանում), Ֆրանսիայից՝ Կապուչինյան և Հիսուսյան միաբանները և ուրիշներ, յուրաքանչյուրը, իր երկրի շահերից ելնելով, հիմնավորվում էր Իրանի այս կամ այն ռազմավարական կամ տնտեսական առանցքային նշանակություն ունեցող կենտրոններում, ինչպես Սպահանում, մույնպես և Բանդար-Աբբասում, Շիրազում, Թավրիզում, Համադանում և այլուր⁹⁴:

Կղեմես VIII պապի կողմից շահ Աբբասի մոտ Կարմելյան միաբաններին ուղարկելը այն հիմնաբարն էր, որով կայանում էր հակաօսմանյան եվրոպական ռազմա-քաղաքական դաշնակցության մերժեցումը Իրանի հետ, ինչպես և Սեֆյան տիրակալի հեռանկարային քաղաքականության իրականացումը հակաօսմանյան կոալիցիայի ստեղծման գործում՝ ելնելով նաև տնտեսական շահութաբերության հեռանկարից, որը հետագայում կդառնա երկկողմանի շահարկման հիմնական դրույթը: Միևնույն ժամանակ Կղեմես VIII պապը Կարմելյաններին տվել էր ներքին հանձնարարական՝ գրավել Սեֆյան տիրակալի վստահությունը և այն օգտագործել՝ առավել արագ առաջնային դիրքեր զբաղեցնելու կաթոլիկ առաքելությունների մրցավազքում: Այս նպատակի իրականացումը կարելի է համարել մասամբ հաջողված. բավական է հիշատակել Հայր Փոլ Սայմընի ուղեբժը Հռոմ այն մասին, որ Սպահանում գտնվող Ավգուստինյանները, իրենց եկեղեցում զանգ

⁹² Лозинский С. Г., История Папства, М., 1986, с. 40.

⁹³ Չամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, Բ մաս, Ն. Նախիջևան, 1909, էջ 91:

⁹⁴ Missionary researches in Armenia, London, 1834, p. 355.

دکتر مریم میراحمدی، دین و دولت در عصر صفوی، تهران، ۱۳۶۹، ص ۷۴

տեղադրելով, առաջացրել են շահ Աբբաս Ա-ի աննկարագրելի գայրույթը, և շահը որոշում է կայացրել՝ Ավգուստինյան բոլոր հայրերին արտաքսել երկրից⁹⁵: Միջադեպը հարթում են Կարմելյանները, որոնք միջնորդում են շահի մոտ Ավգուստինյանների համար, իսկ Կղեմես VIII պապի ուղերձով սպահանաբնակ Ավգուստինյան միաբանության Հայրեր Անտոնիո դե Գուվեային, Քրիստոֆերին և Ջերոմին խորհուրդ է տրվում հաստատել համագործակցություն Կարմելյան ներկայացուցչության հետ⁹⁶:

Ըստ էության, Իրանում գտնվող բոլոր ուղղվածության միաբանությունների գործունեությունը իրականացվում էր մեկ հենքի վրա և հետապնդում էր մեկ նպատակ՝ Եվրոպայի (Հռոմի) շահերի գործնական իրականացումն Իրանում՝ անկախ այն բանից, թե քարոզիչները որ պետության ներկայացուցիչներ են, ինչպես, օրինակ, պորտուգալացիները, որոնք ոչ միայն ներկայանում էին որպես Ավգուստինյան միաբաններ, այլև ակտիվ զբաղվում էին դիվանագիտական բանակցություններով իրանական կողմի հետ Հորմուզում և Գոալում՝ Պորտուգալիայի քաղաքական և առևտրական հիմնավորման ու զերիշխանության համար⁹⁷:

Կղեմես VIII-ին հաջորդած Պողոս V պապը նամակ է հղում պարսից շահին՝ խնդրելով փնտրել Աստծու սիրեցյալ զավակներին, ովքեր ուշացել էին՝ կապված ճանապարհային որոշ դժվարությունների հետ: Նրանց մասին հիշատակելիս Փոլ Սայմընը նշում է. «... Մենք ափ իջանք Շիրվան կոչվող վայրում, և մեր նավին մոտեցան հայ առևտրականներ, որոնց մենք ճանաչում էինք Մոսկովիայից...: Նրանք առաջարկեցին հանդես գալ որպես քարգմանիչներ: Եվ քանի որ մենք չէինք տիրապետում օսմաներենին, սխալ կլիներ շնորհ շահել հայ առևտրականներին, բացի այդ՝ նրանք կօգնեին մեզ հայկական եկեղեցիների միավորման հարցում: Ուստի նրանցից մեկին նամակով հանդերձ ուղարկեցինք պարսից շահի մոտ՝ տեղյակ պահելով մեր ուշացման պատճառների մասին...»⁹⁸:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ նրանք վստահեցին այդ վաճառականներին: Թեև պատասխանը բացակայում է

⁹⁵"A Chronicle of the Carmelites", v. I, p. 10.

⁹⁶Նույն տեղում, էջ 106:

⁹⁷Նույն տեղում, էջ 96:

⁹⁸Նույն տեղում, էջ 8:

«Կարմելյանների տարեգրության» մեջ, այնուամենայնիվ, պարզ է, որ նրանք արքունիքին մոտ կանգնած և շահի վստահությունը ձեռք բերած վաճառականներ էին:

Շահի կողմից Կարմելյանների նկատմամբ ևս դրսևորվում էր որոշակի անհատականացված մոտեցում, որը պայմանավորված էր քրիստոնյա աշխարհի հետ (ի դեմ Հռոմի) մերձեցնելու նկատառումներով: Միևնույն ժամանակ, այս մերձեցման մեջ շահը կանխազգում էր Իրանում բնակվող քրիստոնյաներից (հայկական տարրը) ակնկալվող քաղաքական և հատկապես տնտեսական գործավարույթների ուղղվածության փոփոխում դեպի Եվրոպա: Սակայն Կարմելյան միաբաններից տեղեկանալով նրանց այցի չեզոք նպատակների մասին՝ շահը նրանց ընդունում է՝ խոստանալով կենտրոն հիմնելու համար հնարավորություն ընձեռնել⁹⁹: Կարմելյաններին հաջողվում է խուսափել լարվածության ստեղծումից. Աբբաս Ա-ի մեհմանդարը (օտարերկրացիների հարցերով զբաղվող խորհրդատու) զգուշացրել էր նրա մոտ չքննարկել հայերի հետ կապված որևէ հարց շահի անակնկալ գայրույթից խուսափելու նպատակով¹⁰⁰:

Այստեղ հարց է ծագում, թե ինչու շահը կարող էր անակնկալ գայրանալ, եթե շոշափվեին հայերի հետ կապված ինչ-ինչ հարցեր: Գուցե շահն, այնուամենայնիվ, փորձում էր ճշտել նրանց առաքելության իրական նպատակները, ուստի և զգայուն էր հայերին վերաբերող ցանկացած արտահայտության նկատմամբ: Շահն իրավունք ուներ մտածելու, որ Կարմելյանների իրական նպատակներից կարող էր լինել նաև Իրանի և հատկապես շահի համար անփոխարինելի հպատակներին կաթոլիկացնելը, իսկ դրա հետևանքները շահը շատ լավ էր հասկանում: Ուստի Կարմելյան Հայր Փոլ Մայմընը բավականին մեծ զգուշավորություն էր ցուցաբերում միաբանության իրական նպատակները վարպետորեն քողարկելու հարցում:

⁹⁹ "A Chronicle of the Carmelites", v. 1, p. 123.

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 124:

«Կարմելյանների տարեգրությունում» տեղ գտած Հռոմի պապ Պողոս V-ի՝ շահ Աբբասին հղած «վերբալ հայտագիրն»¹⁰¹ իր մեջ ներառում է Հռոմի ցուցումները: Նշենք, որ կա երկու տարբերակ, որոնցից մեկը պահպանվել է 18-րդ դարի Կարմելյան տարեգիր Հայր Էզբիուսի (Fr. Eusebius ab Omn. Sanctis) «Առաքելությունների պատմություն» մատյանում, իսկ երկրորդը՝ իսպաներեն լեզվով գրված մի աշխատության մեջ (Persia of Fr. Florencio del hino Jesus, 1929), որոնք իրարից գրեթե չեն տարբերվում:

«Լերբալ հայտագրում» նշված է, որ քրիստոնյաների ինքնիշխան միապետը շահ Աբբասի մոտ է ուղարկում Բոկոտն Կարմելյաններ Փոլ Սայյընին և իր ընկերակիցներին՝ մեծ հեռանկարներով: Առաջին տարբերակում կետ առ կետ նշվում է նրանց համագործակցության նպատակների մասին, որոնցից ցանկանում ենք առանձնացնել հատկապես կարևորները: Օրինակ՝ վեցերորդ կետում, որն ավելի շատ հարկադրանք և սպառնալիք է ենթադրում, նշված է. «... Պողոս V-ը խնդրում է Նորին Մեծություն շահ Աբբաս Ա-ին բոլոր քրիստոնյաներին, անկախ նրանից, թե իր հպատակներն են և իր թագավորությունում են ծնվել, համարել օտարերկրացիներ, իսկ նրանց հանդեպ, ովքեր ժամանել են տարբեր վայրերից և կամ ճամբարներում տեղակայված ռազմագերիներ են, բարյացակամ վերաբերմունք ցուցաբերել և շքույլատրել ցանկացած բռնություն կամ վնաս քրիստոնեական հավատքն ուրանալու համար, հակառակ դեպքում նմանատիպ վերաբերմունքի կարժամանան քրիստոնյա աշխարհով ճանապարհորդող կամ օսմանցիների կողմից գերված շահի հպատակները»¹⁰²:

Պողոս V պապի վերոհիշյալ տողերը կարելի է գնահատել որպես խիստ զգուշացումից մինչև անթաքույց սպառնալիք: Բավականին մեծ համարձակություն էր պետք տվյալ պահին Իրանի

¹⁰¹Վերբալ (լատիներեն՝ verbalis - բանավոր) հայտագիրը դիվանագիտության մեջ ամենատարածված թղթակցությունն է: Վերբալ հայտագրի ձևով կարելի է կազմել նաև կառավարությունների միջև միջազգային կարևոր խնդիրների վերաբերյալ թղթակցությունները:

Այն ունի իր կազմման որոշակի ձևը, որի պահպանումը պարտադիր պայման է և ուղարկվում է սուրիանդալի միջոցով (Չալլմյան Ն., Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ, Ե., 2003, էջ 66-68):

¹⁰²«A Chronicle of the Carmelites», v. I, p. 128.

մեծագոր շահին այդպես գրելու համար, թեկուզև այն պարզ պատճառով, որ Իրանում հաստատվելու և իրենց գործունեությունն իրականացնելու գործընթացը կարող էր կասեցվել և անգամ դադարեցվել: Մակայն, միևնույն ժամանակ, պապի նման դիրքորոշումը կարելի է բացատրել նրանով, որ Պողոս V-ը ոչ թե սոսկ զգուշացնում էր հնարավոր բարդություններից խուսափելու համար, այլ այն պատճառով, որ պարսից աշխարհում արդեն իսկ նկատվում էր քրիստոնյաների նկատմամբ նմանատիպ անբարյացակամ և դաժան վերաբերմունք:

Համաձայն յոթերորդ կետի՝ պապն ու Ռուդոլֆ II կայսրը խնդրում են, որ շահը Ռոբերտ Շըրլիին Իտալիա վերադառնալու թույլտվություն տա՝ պատճառաբանելով, որ նրա հայրն է այդպես ցանկանում¹⁰³:

Պապի՝ Ռոբերտ Շըրլիին վերադարձնելու խնդրանք-պահանջը, բնականաբար, պայմանավորված չէր կարող լինել միայն այն հանգամանքով, որ ծեր հայրն էր այդպես ցանկանում: Այստեղ կան նաև քաղաքական դրդապատճառներ և այդ մասին ներկայացված է հետևյալ նամակում. «Շըրլի վերադարձն օգտակար կլինի նրանով, որ ի վիճակի կլինի ճշգրիտ տեղեկատվություն տալու Նորին Մեծությանը (Հռոմի պապ Պողոս V-ին- Թ. Մ.) այս երկրի (Իրանի- Թ. Մ.) գործերի մասին, և մենք հույս ենք հայտնում, որ Դուք ավելի բան վստահ եք նրա հավատարմությանը, որն արդեն իսկ ապացուցվել է Ձեր արքունիքում ծառայելու ժամանակ...»¹⁰⁴:

Վեցերորդ կետի առանձնացումը մեր կողմից պատահական չէր, որովհետև այդ կետի բովանդակությունը լսելով՝ շահ Աբբասը պատասխանեց. «Դուք վկա եք այն սիրուն, որ ես տածում եմ քրիստոնյաների նկատմամբ... Մակայն Հորմուզի կապիտանը կողոպտել էր իմ վաճառականներին, մահմեդական տղաներին հարկադրաբար քրիստոնեացրել և ուրիշ վնասներ հասցրել»¹⁰⁵:

Շահ Աբբասը խնդրում էր Հռոմի պապին, որ նման բաներ այլևս չկրկնվեն: Բացի այդ՝ շահը որոշ հարցեր ուղղեց Հայր Փոլ Սայնընին, մասնավորապես, արդյո՞ք պապը հրամայել է

¹⁰³ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 128.

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 129:

Ավգուստինյան հայրերին կաթոլիկացնել հայերին, չէ՞ որ նրանք արդեն ավելի քան հազար տարի է, ինչ ունեն իրենց հավատքը: Փոլ Սայմընը պատասխանում է, որ պապն այդպիսի հրամաններ չի տվել, որովհետև հայերի հինավուրց հավատքը նույնն է, ինչ իրենցը¹⁰⁶: Շահին հուզող հաջորդ հարցը հետևյալն էր. «Եթե պորտուգալացի հայրերը, այսինքն՝ Ավգուստինյանները, ինձ մի բան ասեն, իսկ ձեր հայրերը, ովքեր մնում են այստեղ՝ Կարմեյանները, մեկ այլ բան, ո՞ր մեկին պետք է հավատամ»¹⁰⁷:

Փոլ Սայմընը պատասխանում է. «Ես հուսով եմ, որ Աստված բոլլ չի տա, որ մեր և Ավգուստինյան հայրերը տարակարծություններ ունենան: Սակայն եթե նման բան սյատահի, ապա Նորին Սեծությունը (շահ Աբբասը-Թ. Մ.) կգործի համաձայն իր խորաթափանցության, ինչպես նաև՝ հենվելով այդ միաբանությունների նամակների վրա»¹⁰⁸: Շահ Աբբասը, շրջվելով դեպի իր ազնվականները, պատասխանում է. «Ես նախապատվությունը տալիս եմ պապի հայրերին» (Կարմեյաններին - Թ. Մ.)¹⁰⁹:

Հարկ է նշել, որ Փոլ Սայմընն ուներ հատուկ հանձնարարություն՝ գրավոր ներկայացնել միաբանության առաջխաղացման հնարավոր մանրամասները և շանել այնպես, ինչպես դա արել են Իրան ժամանած շատ-շատերը՝ հեռանալ վերադառնալու խոստումներով: Կարմեյան Հայր Փոլ Սայմընն Իրանում անցկացրած վեց ամսվա իր դիտարկումներում հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում երկրի սովորույթների, շահ Աբբաս Ա-ի անձի մասին և այլն: «Պարսից շահի գլխավոր զորահրամանատար Ալլահվերդի խանը, և գրում է նա, և խնջույքներից մեկի ժամանակ, որին ներկա էին նաև քուրդ դեսպանները, սեղանին դրել էր ոսկյա երեք հազար ամանեղեն (այդ մասին Փոլ Սայմընը տեղեկանում է այնտեղ ներկա գտնվող մի քանի օսմանցուց): Գրեթե բոլորը գինի էին խմում, ուտում էին հատակին փռված քանկարժև գորգերին նստած... Նրանք շատ մեծ մզկիթներ ունեն, ուր գնում են իրենց աղոթքն առ Աստված հղելու և բոլլ ևն տալիս յուրաքանչյուր ազգի

¹⁰⁶ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 129.

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Նույն տեղում:

ներկայացուցչի մզկիթ մտնել: Երեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան, աղոթում են: Սկզբում ընկալում են, այնուհետև փռում են իրենց գորգը հատակին և ողջ նվիրվածությամբ աղոթք հղում Աստծուն և Ալլիին»¹¹⁰: Փոլ Սայմընն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է շահ Աբբաս Ա-ին՝ նրա տարիքը, հասակը, դիմագծերը, նախասիրությունները և այլն¹¹¹:

Հետաքրքրական է նաև հետևյալ գրառումը. «Շահ Աբբաս Ա-ն քաղաքավարի է մարդկանց հետ, միևնույն ժամանակ՝ շատ լուրջ: Երբ անցնում է հասարակական փողոցներով, ուտում է այն, ինչ վաճառում են, ազատորեն շփվում է ցածր խավի մարդկանց հետ, ստիպում է իր ենթականերին նստել, մինչ ինքը կանգնած է... Նա կարծում է, որ այդպիսին պետք է լինի թագավորը և ոչ թե Իսպանիայի կամ ուրիշ քրիստոնյա թագավորների նման, ովքեր որևէ հաճույք չեն ստանում կառավարելուց... Որքան բարություն է ցուցաբերում շահն իր ենթակաների նկատմամբ, այնքան ավելի շատ են վախենում նրանից, քանի որ վերջինս անսպասելիորեն կարող է թոցնել նրանց գլուխները... Շահ Աբբասն ունի չորս խորհրդատու՝ Ալլահվերդի խանը՝ իր գորավարը, Աթա բեկը՝ իր վեզիրը, Ղուրջի բաշին և մեկը, ով իր ուսուցիչն ու «կառավարողը» (անունը չի հիշատակվում) կարող է լինել»¹¹²:

Կարմեյանները շահ Աբբաս Ա-ի հետ առաջին իսկ հանդիպումից հետո նամակ են հղում Վատիկան՝ արտահայտելով իրենց տպավորությունները: Սակայն կային բաներ, որոնց մասին գրելն ու այն ուղարկելը նպատակահարմար չէր թվում պապի առաքյալներին: Փոլ Սայմընն իր նամակում իրազեկում է. «Մեզանից մեկը պետք է վերադառնա և զեկուցի Նորին Մեծությանն ու վանահայրերին մեր առաքելության վերաբերյալ, քանի որ չենք կարող ամբողջական զեկույցները նամակների միջոցով ներկայացնել: Բավական է մեր գրառումները պարսից շահի ձեռքն ընկնեն, և նա կհասկանա, թե որոնք են Իրան ժամանելու մեր իրական պատճառները»¹¹³:

¹¹⁰ «A Chronicle of the Carmelites», v. I, p.155-157.

¹¹¹ Նույն տեղում, էջ 158:

¹¹² Նույն տեղում, էջ 158-159:

¹¹³ Նույն տեղում, էջ 123:

1608թ. հունվարի 3-ին՝ շահի հետ կայացած հանդիպումից կարճ ժամանակ անց, Սպահանում Կարմեյան հայերին տրամադրվում է հարմարավետ մի շինություն ¹¹⁴:

Հայր Փոլ Սայմընը, ինչպես բազմիցս նշվում է «Կարմեյանների տարեգրությունում», պետք է վերադառնար Հոռն, ինչն իրականացնում է 1608թ., ապա պապի ցուցումով մեկնում է Իսպանիա: 1609թ. սեպտեմբերի վերջին Ռ. Շըրլին վերադառնում է Հոռն և իր գործերի նախնական քննարկումներից հետո ուղևորվում Իսպանիա՝ ներկայացնելու իր հավատարմագրերը Ֆիլիպ III-ին ¹¹⁵: «Կարմեյանների տարեգրությունում» Ռ. Շըրլին ներկայացված է այսպես. «... Ռոբերտ Շըրլին հասարակության մեջ ապրում էր որպես կաթոլիկ, հաճախում եկեղեցիներ և քրիստոնյային բնորոշ բոլոր հատկություններով ներկայանում: Նա գնեց մահմեդական մի ստրկուհու Չերքեզիայից: Կարմեյան Հայր Փոլ Սայմընը կնքեց նրա կնոջը և զադոնի ամուսնացրեց... Հայր Էգիուսի ու Կարմեյան այլ հեղինակների հավաստմամբ՝ որպես արդյունք Կարմեյանների հետ հարաբերության (1607թ. նոյեմբերի 14-ին և 1608թ. հունվարի վերջին՝ Ղազվինում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ), նրանց (Կարմեյանների) հետ կրոնական հարցեր քննարկելու և իր սարսափներից հրաժարվելու համար Հայր Ջոն Թադդեուսը նրան կաթոլիկ եկեղեցի բերեց, և հենց այդ ժամանակ էլ Սամսոնյան կրոնափոխ եղավ: 1608թ. փետրվարի 2-ին նրանք ամուսնացան սրբագործման տոնի ժամանակ, և հենց նույն օրն էլ նորապսակները ճանապարհվեցին Եվրոպա» ¹¹⁶:

Ջոն Թադդեուսի՝ «Կարմեյան հայրերի կողմից քրիստոնյաներին մկրտելու» ձեռագիր հուշամատյանում գրանցված առաջին անունը Ռ. Շըրլիի կնոջ անունն է՝ Դոնիա Թերեզիա (Սամսոնյան վերցրել էր Կարմեյան միաբանության սուրբ Բարեփոխչի անունը): Սակայն ոչ մի հիշատակություն չկա Ռ. Շըրլիի պայմանական մկրտություն ստանալու կամ եկեղեցի ընդգրկվելու մասին: Սա, իհարկե, հիմք է տալիս ենթադրելու, որ Ռ. Շըրլին արդեն

¹¹⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 147-148.

¹¹⁵ Նույն տեղում, էջ 142:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 143- 144:

իսկ հարել էր կաթոլիկությանը նախքան Կարմեյանների ժամանումը, այսինքն՝ 1607թ. դեկտեմբեր ամիսը¹¹⁷:

Հայր Ջոն Թադդեուսը՝ Կարմեյանների գլխավոր քարգնամիչը, շահի պաշտոնական պատասխան-մամակի քարգնամությունն ուղարկում է Հռոմ, որտեղ մասնավորապես նշված էր. «... Ալլահի և Մեծն Ալլի անունով՝ Հռոմի պապին: Չերդ Մեծություն... Հայր Սայմընը և մյուս երկու հայրերն արդեն ժամանել են այստեղ՝ և՛ բանավոր, և՛ գրավոր տեսքով տեղեկացնելով Չերդ Մեծության ցանկության մասին՝ պատերազմել օսմանցիների՝ մեր «ընդհանուր թշնամու» դեմ... : Ապագայում ես ոչ միայն այս ամենագարշելի ժողովրդի ախոյանն ու անփոխարինելի թշնամին կլինեմ, այլև ամենադաժան դահիճն ու կործանարարը»¹¹⁸:

Փոլ Սայմընը, 1608թ. փետրվարի 26-ին դուրս գալով Սպահանից, իր ընկերակիցներից պահանջում է, որ վերջիններս փորձեն շահից ձեռք բերել Կարմեյանների գործերին չմիջամտելու և երկրում ազատորեն շրջելու բույլություն հրաման: 1615թ. սեպտեմբերին տրված Աքբաս Ա-ի ֆարմաններից (հրաման) մեկը վերաբերում է Կարմեյան հայրերի բնակությանն Իրանում: Աքբայական այս ֆարմանում հիշատակվում է, որ հարգարժան Ջուան և Ռեդեմպտո հայրերը ազատ են՝ հաստատվելու իրենց նախընտրած վայրում՝ միաժամանակ խոստանալով նրանց պատիվ և հարգանք¹¹⁹:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ Կարմեյան միաբանների առաջին իսկ քայլերն Իրանում պսակվեցին որոշակի հաջողություններով: Դրանք, ըստ էության, նպատակաուղղված էին ստեղծելու փոխշփման եզրեր Եվրոպայի (ի դեմ Հռոմի) և Իրանի միջև հեռանկարային երկկողմ ակնկալիքներով. Կղեմես VIII պապը Կարմեյան միաբանության իրանական առաքելությունը բառիս երկակի իմաստով իրականացրեց: Եթե Կարմեյանները մտադիր էին քարոզչությանը զբաղվել, ապա ինքնիշխան պապը գլխավորապես օգտագործում էր նրանց որպես գործակալներ իր քաղաքական նպատակների՝ օսմանյան սպառնալիքի համար՝ զարգացնելով

¹¹⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 145.

¹¹⁸ Նույն տեղում, էջ 135, 143:

¹¹⁹ نصرالله فلسفي، زندگانی شاه عباس اول، جلد ۳، تهران، ۱۳۷۱، ص. ۱۱۴۲-۱۱۴۳.

բարեկամական հարաբերություններ, ապահովելով ուղղակի և հուսալի հաղորդակցություններ և բանակցություններ պարսից արքունիքի հետ: Փաստորեն՝ Իրան ժամանող առաքյալները պետք է գործեին պապի կարգադրություններով: Կարմեյանները երկակի դեր էին ստանձնել՝ համապատասխանաբար երանգավորելով իրենց աշխատանքներն ու դրանց արդյունքները: Այդ դերը գերակշռում էր հատկապես Իրանում անցկացրած իրենց առաջին քսանհինգ տարիների ընթացքում, քանի որ հետագայում իրենց կարգավիճակը փոխվում է:

Այսպիսով՝ եվրոպական պետությունները ձգտում էին առաջին հերթին վերականգնել Եվրոպան Արևելքի հետ կապող միջազգային առևտրական ուղին: Բացի այդ՝ եվրոպական պետությունները և մասնավորապես Հռոմը ջանում էին «ընդհանուր թշնամու» դեմ պայքարում ներգրավել իրենց բնական հարևանին՝ Իրանին, որի դերակատարությունը հսկասօմանյան դաշինքում անչափ կարևոր էր: Իսկ կաթոլիկ քարոզիչների միջոցով դեպի Իրան ներթափանցելն ու այնտեղ հաստատվելն ավելի քան հարմար էր Իրանի մասին հսկայական տեղեկատվություն ձեռք բերելու համար: Իրանը, հանձին շահ Աբբաս Ա-ի, մի շարք միջոցառումներով և հովանավորչական քաղաքականությամբ ընդարձակեց երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին առևտուրը: Նա ոչ միայն իր սեփական վաճառականներին էր արտոնություններ տալիս և օժանդակում նրանց, այլև բանակցություններ էր վարում եվրոպական մի շարք պետությունների հետ: Չանագան տնտեսական ու այլ արտոնություններով եվրոպական կապիտալը դեպի Իրան գրավելու համար ջանքեր էր գործադրում, թեև այդ քաղաքականությունը որոշ դժվարությունների պատճառով ցանկալի արդյունք այդպես էլ չունեցավ¹²⁰: Իրանն իր արտաքին քաղաքականության բնագավառում Օսմանյան կայսրության դեմ պատերազմի պատրաստվելիս նախապատվություն էր տալիս նաև արտաքին քաղաքականության խաղաղ միջոցին՝ դիվանագիտությանը, ուստի եռանդուն դիվանագիտական գործունեություն էր ծավալում՝ դաշնակիցներ գտնելու և հսկասօմանյան ռազմաքաղաքական կռաւիցիա ստեղծելու համար:

¹²⁰ Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Ե., 1934, էջ 61-62:

ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ

Շահ Աբբաս Ա-ի կառավարման շրջանը՝ ըստ «Կարմելյանների տարեգրության»: Հայր Ջոն Թաղդեոսի գործունեությունը

1607թ. դեկտեմբերի 2-ին Իրան ժամանած առաջին Կարմելյան քարոզիչներ Հայր Փոլը (Fr. Paul of Jesus Mary), Հայր Ջոն Թաղդեոսը (Fr. John of S. Elisaeus) և Հայր Վինսենթն (Fr. Vincent of S. Francis) անմիջապես հաստատվում են մայրաքաղաք Սպահանում, որը և դառնում է Կարմելյանների կենտրոնատեղին¹²¹:

Իրանցի պատմաբան Լոթֆալլահ Հոնարֆարի դիպուկ արտահայտությամբ Սպահանը շուրջ մեկ ու կես դար հանդիսացավ Սեֆյան արքայատոհմի մայրաքաղաքը՝ ստանալով «Իսլամական

¹²¹ "A Chronicle of the Carmelites", v. II, p. 1029.

Սպահանում քարոզիչներին տրամադրված շինությունն այնքան էլ չէր գոհացնում Կարմելյաններին, որովհետև այն հարմար չէր եկեղեցի կամ մատու կառուցելու համար: 1608թ. հունվարի 7-ին շահ Աբբաս Ա-ի և Հայր Փոլ Սալմրնի միջև տեղի ունեցած առանձնագրույցի արդյունքում (սովորաբար շահն Իրան ժամանած քարոզիչների հետ պարտադիր հանդիպում էր ունենում՝ նրանց ժամանելու պատակը պարզելու, ինչպես նաև տարաբնույթ հարցերի քննարկման համար) շահը հրամայում է քավականին մեծ այգեստան ունեցող ավելի մեծ տարածք տրամադրել նրանց ("A Chronicle of the Carmelites", v. II, p. 1029, 1035.) Դա ավելին էր, քան կարող էին հուսալ Կարմելյանները: Այդ է վկայում հետագայում Իրան ժամանած Հայր Ֆաուստինը. «Հավատացե՛ք, որ Եվրոպայում ունեցած մեր մեծաթիվ մենաստաններից և ոչ մեկը կիսով չափ նույնիսկ հավասար չէ սրան», իսկ Հայր Ջոն Թաղդեոսը հաղորդում է. «Անգ տրամադրված Տունն ավելի մեծ է, քան Ավգուստինյան հայրերինը: Սակայն մեր աղոթատունն ավելի փոքր է Ավգուստինյան հայրերի աղոթատնից, մինչդեռ մենք շատ ավելի նկարներ ու զարդեր ունենք Հռոմից քերված... Ինչ վերաբերում է մեծությանը, ապա այն քավականին հարմար է, քանի որ շատ կրոնավորներ կարող են ապրել, քացի այդ՝ ունի մեծ նախասրահ, որը կարող է ծառայել որպես եկեղեցի»: Կարմելյանները Սպահանի մենաստանը զբաղեցրին 1609 թ. հունիսի 24-ից մինչև 1757թ. ("A Chronicle of the Carmelites", v. I p. 166, v. II, p. 1029): Բացի Սպահանից Կարմելյանները հաստատվեցին նաև Հորմուզում (1609թ. հունվար), Շիրազում (1623թ.), Բասրայում (1624թ.), Բանդար-Աբբասում (1668թ.), Քանգուն (1670թ.), Նոր Ջուղայում (1683թ.) Համադանում (1684 թ.), Խարքում (1756թ.), Բուշեիրում (1765թ.):

աշխարհի աստղ» անվանումը¹²²: Հաստատվելով Սպահանում՝ Կարմեյանները խորացնում էին պարսկերենի իրենց գիտելիքները, ուսումնասիրում Ղուրանը, հարաբերություններ հաստատում Սպահանում հաստատված եվրոպացի քրիստոնյաների հետ:

«Կարմեյանների տարեգրության» վկայությամբ Իրանի բնակչությունը բացասաբար էր տրամադրված եվրոպացի քարոզիչների նկատմամբ: Հայր Ջոն Թադդեուսը հաղորդում է, որ իրենց առաջին խնդիրն էր հաղթահարել ժողովրդի անվստահությունը. «...Նախ և առաջ հարկավոր էր համախմբվել և կանխել հասարակ ժողովրդի՝ մեզ ուղղած մեղադրանքները: Նրանք մեզ անվանում էին «բոկոտն» (իրանցիները, հավանաբար, Կարմեյաններին այսպես էին անվանում ոչ թե այն բանի համար, որ իրենք իսկապես համարվում են «Բոկոտն» Կարմեյաններ, այլ պարզապես վիրավորելու համար), «անճոռնի», «անշնորհք», «դերվիշ» ֆրանկներ և այլն»¹²³: Քարոզիչների «անցանկալի հյուր» լինելը, հավանաբար, շփոթություն առաջացրեց նաև իրենց՝ Կարմեյանների մեջ՝ սկիզբ դնելով տարակարծությունների և ստեղծելով անվստահություն իրենց առաքելության հաջողության նկատմամբ: Կարմեյաններին շփոթեցնում էր նաև դրամական միջոցների սահմանափակ լինելը, մրցակցությունը մյուս առաքելությունների (օրինակ՝ Ավգուստինյանների) հետ, ովքեր դեմ չէին դուրս մղել նրանց Իրանից: Այսպես՝ Հայր Ջոն Թադդեուսի՝ Հոռն հղած գեկույցում¹²⁴ մասնավորապես նշված է. «... Հայր Փոլ Մայմընը հեռացավ՝ թողնելով մեզ այն ամբողջ գումարը, ինչ ունենք՝ 250 ոսկի սկուդի»¹²⁵: ասելով, որ այն մեզ կբավականացնի շուրջ երկու տարի, իսկ մնացածն իր հետ վերցրեց իր ճամփորդության համար: Այս երկրում ծախսերը շատ են, ամեն ինչ՝ թանկ. ինչքան էլ փորձենք խնայել, այնուամենայնիվ, չգիտենք՝ այն կբավականացնի արդյոք մեկ ու կես տարի: Այստեղ ոչ մի հույս չկա ինչ-որ մեկից գումար հայթայթելու:

¹²² دکتر لطف‌الله هنرفر، آشنایی با شهر تاریخی اصفهان، اصفهان، ۱۳۷۳، ص. ۲۰، شش

¹²³ تاریخ ایران (از مدفو به تا دوران معاصر)، ج. ۲، ص. ۱۱

¹²⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 163.

¹²⁵ Թեև գեկույցն անթվակիր է, սակայն բովանդակությունից պարզ է դառնում, որ այն գրվել է 1608թ. մայիսից մինչև 1609թ. հունվարն ընկած ժամանակահատվածում:

¹²⁵ Ալկույի (սկուդոյ) - 16-18-րդ դարերում գործածվող իտալական ոսկեդրամ:

Ավգուստինյան հայրերը Իսպանիայի թագավորից գումար են ստացել, ի համալրումն դրա՝ նրանք ունեն մաս պատարագի համար նախատեսված գումար, որը ստանում են Հորմուզի իրենց հայրերից, բացի այդ՝ Գոայի արքեպիսկոպոսը գումար է ուղարկում որպես ողորմություն հայերին հանձնելու համար: Ավգուստինյաններն ասել են, որ անհրաժեշտության դեպքում օգտագործում են այն: Ոչ մի կարիք չկա մտածելու, որ այս հայրերը մեզ կաջակցեն, որովհետև մենք տեղեկացանք, ինչպես մաս նրանք են ասել, որ ուրախ կլինեն, որ մենք հեռանանք Իրանից, որովհետև դրամական միջոցների պակասություն ունենք»¹²⁶:

Գումար կարելի էր հայրայքել միայն շահից: Սակայն իրավիճակը փոխվել էր: Շահը հաղթել էր օսմանցիներին, ուստի նրանից որևէ բան ակնկալել Կարմելյաններն այլևս չէին կարող: Հայր Ջոն Թադդեոսը, բացառելով նրանից որևէ աջակցություն, հաղորդում է. «... Շահն ամբողջ սրտով մահմեդական է: Այն ամենն ինչ արել է նախկինում, բացահայտ կեղծիք է եղել: Այժմ, երբ շատ հաղթանակներ է տարել օսմանցիների դեմ, մագաչափ անգամ չի հետաքրքրվում քրիստոնյա արքաներով, ավելին, հասարակայնորեն ծաղրումանակի է ենթարկում նրանց օսմանցիների դեմ պատերազմ չմղելու համար և եթե մղեին էլ... Դուք մի կարծեք, թե շահը մեզ եկեղեցի կամ իր ենթականերին քրիստոնեացնելու թույլտվություն կտա, ընդհակառակը, հնարավորության դեպքում նա միշտ փորձում է մահմեդականացնել քրիստոնյա հայերին, ֆրանկներին և այլոց»¹²⁷:

Վերոհիշյալ նամակում Հայր Ջոն Թադդեոսը Իրանի մասին տարաբնույթ հետաքրքիր և մանրամասն տեղեկություններ է հաղորդում, որը համարում է իր առաքելության գործառնությունից մեկը: Այսպես՝ Թադդեոսը վկայում է, որ «օսմաներեն խոսում և հասկանում են շահն ու պաշտոնատար շատ անձինք, զինվորները: Հասարակ ժողովուրդը խոսում է պարսկերեն, բոլոր փաստաթղթերն ու հաղորդակցությունները պարսկերենով են...»¹²⁸: Թադդեոսի այս հաղորդումն առաջին հայացքից զարմանք է առաջացնում, թե ինչ կապ կա և կամ կարող է ունենալ օսմաներենի գործածությունը:

¹²⁶ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 163.

¹²⁷ Նույն տեղում, էջ 164:

¹²⁸ Նույն տեղում, էջ 165:

Մակայն Թադդեոսն այդ փաստը հետևյալ կերպ է բացատրում. «... Եթե արտոնագիր ունես պատարագն օսմանը նմանով կամ պարսկերենով անցկացնելու, ապա բոլորը կհասկանան, և շատերը, հետաքրքրությունից դրդված, ցանկություն կհայտեն լսելու...»¹²⁹:

Կարմեյանները որոշակի դժվարությունների էին հանդիպում նաև հաղորդակցության հաստատման հարցում: Նրանց նամակներից շատերը տեղ չէին հասնում: Այսպես՝ Հայր Ջոն Թադդեոսը, հաճախակի զեկույցներ հղելով Հոմս՝ Իրանում տեղի ունեցող իրադարձությունների, ինչպես նաև՝ իրենց գործունեության վերաբերյալ, հարկ է համարում միաժամանակ նշել. «Շատ մեծ դժվարություն կա. թեև քազում նամակներ ենք հղել, այնուամենայնիվ, չենք կարող երաշխավորել, որ տասը նամակից մեկը Հոմս է հասնում, չենք կարող երաշխավորել, որ տասը նամակից մեկը Հոմս է հասնում, և նրանք ամենաչնչին վտանգի դեպքում չեն հայերն են գնում, և նրանք ամենաչնչին վտանգի դեպքում չեն տատանվի դեմ նետել նամակները: Իսկ եթե հատուկ մարդ տառակենք Հալեպի հյուպատոսի մոտ, առնվազն 60 սկուդի պետք է վճարենք, իսկ մենք չունենք այդ գումարը»¹³⁰:

Առաջին հայացքից թվում է, թե Կարմեյանների գործունեության միակ նպատակը Իրանի մասին տեղեկություններ հաղորդելն էր, քանի որ հասարակության մեջ այն տպավորություն էր ստեղծվել, թե Կարմեյանները գտնվում են Իրանում միայն պապի և շահի միջև նամակագրություն իրականացնելու համար: Այս առիթով Հայր Ջ. Թադդեոսը հերքել է իրենց (Կարմեյանների)՝ որպես բացառապես պապի ներկայացուցիչներ լինելը. «Որոշ տգետ ու լպիրշ անձանց աչքերը բացելու համար հայտարարում են, որ հիմարություն է և խելագարություն է կարծել, թե մեր միաբանությունն Իրանում է միայն պապի և շահի միջև նամակագրության համար»¹³¹: Մինչդեռ միայն պապի և շահի միջև նամակագրության տարածումն էր, որի նրանց նպատակներից առաջինը կաթոլիկության տարածումն էր, որի ուղղությամբ նրանց գործադրած ջանքերը դեռ արդյունք չէին տալիս: «Մինչ այժմ, և գրում է Ջ. Թադդեոսը, և շատ փոքր հաջողություններ ունենք (խոսքը վերաբերում է կաթոլիկացնելուն - Թ. Մ.), քանի որ մահմեդականները և հայերը (Ավգոստինյաններն էլ են այդպես

¹²⁹ "A Chronicle of the Carmelites", v. 1, p. 165.

¹³⁰ Նույն տեղում:

¹³¹ Նույն տեղում, էջ 268:

ասում) ոչ մի ուշադրություն չեն դարձնի պապին մինչև որոշակի օգուտ չունենան: Կարծում ենք, որ մեծ արդյունք կգրանցենք միայն այն դեպքում, երբ հայ, վրացի, պարսիկ տղաների համար քոլեջ բացենք: Եթե դաստիարակենք նրանց մեր սովորույթներով, սովորեցնենք ղեկավարման մեր դրույթները և ապագայում Իտալիա ուղարկենք որպես թարգմանիչներ, ապա պարսից շահը չի արգելի այսօրինակ աշխատանքը»¹³²:

Այսպիսով՝ Կարմեյլանները, Իրանի մասին տեղեկություններ հաղորդելուց զատ, պետք է ջանքեր գործադրեին նաև բոլոր հնարավոր ձևերով կաթոլիկություն տարածել: Կարմեյլանները տեղյակ էին Իրանում տարածված այն սովորույթին, երբ ծառան ընդունում էր իր տիրոջ կրոնը: Եվ հուսով էին կաթոլիկություն տարածելով «առատ հունձք» կատարել այդ սովորույթի հիման վրա: Այդ է վկայում Ջ. Թադդեուսի նամակներից մեկը, որտեղ անթաքույց նշվում է. «... Մենք չենք կասկածում, որ այստեղ սովորություն է, որ ծառան իր տիրոջ կրոնն ընդունի, ուստի շատ հոգիներ Սատանայի կապարճներից կազատվեն, քանի որ շատերը կդառնան մեր եղբայրները, իսկ մյուսները կհետևեն նրանց»¹³³:

Կարմեյլանների գործունեությունը ղեկավարությունների էր հանդիպում նաև այն պատճառով, որ քիչ էին միաբանության անդամները: Նրանք առնվազն երեսուներեք կրոնավորի կարիք ունեին, քսանմեկը՝ մենաստանը կանոնավոր պահելու, ծեսերի իրականացման, լեզուն սովորելու, գրքեր թարգմանելու, տասներկուսը՝ հայերի ու արաբների մեջ ապրելու և քարոզելու համար: Նրանց նպատակն ազնիվ կյանքի համար օրինակ ծառայելն ու քրիստոնեական բարեպաշտություն սովորեցնելն էր¹³⁴:

Արևելյան այս երկրում, որտեղ շահի քմահաճույթներից էր կախված ամեն ինչ, Կարմեյլան քարոզիչներին ևս բացառություն չէր արվում: Եվ իսկապես, 1608թ. աշնանը շահ Աբբաս Ա-ն, համաձայն իր փոփոխական խառնվածքից բխող քմահաճույթներին, հրամայում է դարուղային¹³⁵ հարյուր հիսուն զինվոր ուղարկել՝ Կարմեյլաններին

¹³² "A Chronicle of the Carmelites", v. I, p. 165.

¹³³ Նույն տեղում, էջ 162, 165:

¹³⁴ Նույն տեղում, էջ 167:

¹³⁵ دَاروَعَه (դարուղե) - այսպես էր կոչվում տվյալ վայրի ոստիկանապետը, ով ակտիվ մասնակցություն ուներ բնակչությունից գանձվող հարկերի իրացման

իրենց բնակավայրից հանելու և Ավգուստինյանների մոտ բնակեցնելու համար: Ավգուստինյանների կողմից մերժում ստանալուց հետո Կարմեյան հայրեր Ջոն Թադդեուսին և Վինսենթին ոչինչ չէր մնում անելու, քան թողնել և հեռանալ հասարակական քարվանսարա: Այս կապակցությամբ Հայր Ջոն (նամակագրության մեջ Հայր Ջոնն իրեն Ժուան է անվանում) Թադդեուսը հաղորդում է. «... Ոչ մի երկրում այսքան շատ փոփոխություններ չեն կատարվում, որքան այստեղ: Երբ ես գնացել էի ճամբար¹³⁶ (պատերազմի ժամանակ-Թ. Մ.) պարսից շահին տեսնելու և բնակության համար արտոնություններ տրամադրելու խնդրանքով (ինչպես իրենք են ասում «Ֆարման»), շահի հրամանով Սպահանի կառավարիչը մեզ բնակավայր տվեց, որը քաղաքի լավագույններից մեկն էր: Սակայն մի քանի օր հետո նա պարտադրեց դուրս գալ, հետո հրամայեց, որ ապրենք մի աղքատ մարդու տանը...»¹³⁷:

Նոր քարոզիչներ ուղարկելու Կարմեյանների խնդրանքը, ի վերջո, կատարվեց: Իրանում հաստատված միաբանները 1609թ. հունիսին Եվրոպայից ստացան իրենց առաջին համալրումը: Իրան ուղարկվեցին Կարմեյան հայրեր Ռեդեմպտը (Redempt of the Cross) և Բենիգնուսը (Benignus of S. Michael)¹³⁸, իսկ 1611թ.՝ հայրեր Բարթոլոմեոսը (Bartholomew Mary of S. Francis)՝ ծագումով նեապոլիտանցի ազնվական և իսպանացի Լուիսը (Louis Francis of the Mother of the God)¹³⁹, 1616թ. վերջին՝ իտալացի կրոնավոր Հայր Դիմասը (Dimas of the Cross)¹⁴⁰: Հնտագայում նրանց թիվն ավելացավ: Նորեկ

գործում: Արքունի դիվանատան դարուղան կոչվում էր «դարուղե-յե դաֆթարխանե» (դաֆթարխանեի դարուղա) կամ «դարուղե-յե դաֆթարդարի» (դաֆթարդարիի դարուղա), որն անմիջապես ենթարկվում էր «մուսրովֆի-ուլ-մամալիքին» (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), Ե., 2005, էջ 190):

¹³⁶Այս ժամանակահատվածում Օսմանյան կայսրության և Իրանի միջև պատերազմ էր մղվում (1603-1612թթ.), որն անհաջող ավարտ ունեցավ Օսմանյան կայսրության համար (Քայքայության Վ., Օսմանյան կայսրության պատմություն, էջ 265):

¹³⁷"A Chronicle of the Carmelites", v. I, p. 167.

¹³⁸Նույն տեղում, էջ 171:

¹³⁹Նույն տեղում, էջ 199:

¹⁴⁰Նույն տեղում, էջ 236: Հայր Դիմասը, ով հետագա քսան տարիների ընթացքում մնում է Իրանում, ծովում է Արևելքի հետ, ավելին, լեզուների (պարսկերեն, ասորերեն, վրացերեն), մասնավորապես հայերենի իմացությունը, թույլ է տալիս

քարոզիչների մոտքն Իրան գաղտնի չէր մնում: Նրանց անմիջապես ներկայացնում էին շահին: Այդ հանդիպումների ժամանակ շահ Աբբաս Ա-ն չէր վարանում դժգոհել պապի և քրիստոնյա թագավորների չիրականացրած խոստումներից: Շահն ամեն վայրկյան կարող էր դուրս վռնդել իր երկրում հաստատված Կարմեյաններին և ընդհանրապես մյուս միաբանությունների ներկայացուցիչներին ևս, ուստի Հայր Ջոն Թադդեոսը հեքթական հանդիպումներից մեկի ժամանակ փորձում է արդարանալ՝ ասելով. «...Ներկայիս պապն (Պողոս V-ը և Թ. Մ.) ակնհայտորեն տարբերվում է նախորդից (Կղեմես VIII-ից և Թ. Մ.): Արդեն չորս ամիս է, ինչ Պողոս V-ը սկսել է բանակցություններ վարել Ձերդ Սեծության հետ... Մենք համոզված ենք, որ պապի մտադրություններն ամենաքննարկյալն են, և նա ջերմորեն ցանկանում է գոհացնել շահին...»¹⁴¹:

Սակայն շահն աներեր էր. նրա կարծիքով քրիստոնյա արքաների անհամաձայնության մեղքն ընկնում է պապի ուսերին, քանի որ վերջինս նրանց գլխավորն է: Շահը զգուշացնում է, որ կսպասի ևս չորս ամիս, և եթե այդ ընթացքում նորություն չլինի, որ քրիստոնյաները զենք են վերցրել օսմանցիների դեմ պայքարելու համար, ապա նա «կխզի կապն այն մարդկանց հետ, ովքեր լոկ բառեր են ասում և ստում»¹⁴²: Հետաքրքրական է հատկապես Կարմեյան հայրերին առնչվող՝ շահ Աբբաս Ա-ի կողմից մի փոքր հեզմակնան հնչեղություն և անգամ թերահավատության երանգով կատարված այն հայտարարությունը, որ «... Եթե քրիստոնյա թագավորները պատերազմ սկսեն օսմանցիների դեմ և նրանցից գրավեն գեթ մի այծ, ապա ես Կարմեյան հայրերին և՛ տեղ կհատկացնեմ, և՛ եկեղեցի, օթևան կտամ, եթե մույնիսկ դա լինի իմ սեփական տունը կամ գլուխը: Եթե նրանք պատերազմ չմղեն չորս ամսվա ընթացքում, ապա այլևս

նրան պատարագ մատուցել հայերենով: Երբեմն նրան առաջարկում էին Ջուդայում հայերի նկեղեցիներում կատարել այդ արարողությունը, քանի որ հայերն օրական մեկ անգամ էին պատարագ մատուցում: Հայր Դիմասը զննուցում է նաև հայերի սիրալիր և հարգալից վերաբերմունքի մասին: Կային նաև մարդիկ, ովքեր խնդրում էին Կարմեյանների օրհնությունը և ավելի մեծ հարգանք ցուցաբերում քարոզիչների, քան իրենց պատրիարքի նկատմամբ ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 236-237):

¹⁴¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 176.

¹⁴² Նույն տեղում:

չեմ վատահի նրանց խոսքերին, ոչ միայն եկեղեցի չեմ տա, այլ նաև ավելի վատ պայմաններ կառաջադրեմ, ավելին՝ օսմանցիները կզրավեն Հիսուս Բրիստոսի գերեզմանը...»¹⁴³:

Հայր Ջոն Թադդեուսը շահ Աբբաս Ա-ի այս և նմանօրինակ սպառնալիքներին պատասխանեց, որ Պողոս V պապն այն հազվագյուտ ընտրված պապերից է, ով դեռ ժամանակ չի ունեցել ցույց տալու Նորին Մեծություն շահին այն, ինչ խոստացել է նամակներում¹⁴⁴:

Շահ Աբբաս Ա-ն 1609թ. սկսեց ռազմական նախապատրաստություններ տեսնել և այդ ընթացքում Պողոս V-ին ուղղեց մի շարք ուղերձներ: 1610թ. արդեն օսմանյան բանակը Մուրադ փաշայի գլխավորությամբ շարժվեց Թավրիզ: Աբբաս Ա-ն նոր առաջարկներով դիմեց Եվրոպայի տիրակալներին միացյալ գործողությունների համար ընդդեմ օսմանցիների՝ այս անգամ որպես իր դեսպան բնտրելով Հայր Ջոն Թադդեուսին: 1611թ. սկզբին պարսից շահը բացատրեց Հայր Ջոնին իր ցանկությունը. նա պետք է գնար Մոսկովիայի ցարի, Լեհաստանի թագավորի և Հռոմի պապի մոտ՝ առաջարկելով նրանց խափանել Օսմանյան կայսրության վրայով արժեքավոր ապրանքների արտահանումը (իրանական գորգեր, մետաքս և այլն) Եվրոպա, և դրանով իսկ օսմանյան կառավարությանն ու առևտրական հասարակությանը զրկել իրանական բարիքներից: Շահը հաշվի էր առել Թադդեուսի՝ լեզուների իմացությունը, երբ այլ թարգմանիչների կարիք չէր լինի. իսկ Կարմեյան Հայրը պետք է տեղեկացներ քրիստոնյա արքաներին շահի ծրագրերի մասին¹⁴⁵: Այս առիթով շահն ասել է. «Իմ տերության բոլոր կարևոր անձինք որպես օրենք պետք է ընդունեն իմ շուրթերից դուրս եկած փոքրագույն ակնարկն անգամ. Իրանում միայն ես եմ հրամաններ արձակում՝ առանց որևէ մեկի կարծիքի անհրաժեշտության»¹⁴⁶: Այնուհետև, բարձրացնելով իր ձայնը, պալատականներին տեղեկացնում է. «Հայր Ջոն Թադդեուսը՝ որպես իմ դեսպան, գնում է Մոսկովիայի ցարի, Լեհաստանի թագավորի և

¹⁴³ "A Chronicle of the Carmelites", v. 1, p.177.

¹⁴⁴ Մույն տեղում:

¹⁴⁵ Մույն տեղում, էջ 194-195:

¹⁴⁶ Մույն տեղում, էջ 195:

պապի մոտ»¹⁴⁷: Հետո, դնելով իր ձեռքը Թաղեուսի ուսին, շարունակում է. «Նրա խոսքն իմ խոսքն է... Նրա խոսքը միշտ էլ ճշմարիտ է եղել, այո-ն՝ այո, ոչ-ը՝ ոչ: Բոլոր ֆրանկներից, ովքեր եկել են իմ արքունիք, այնքան գոհ չեմ եղել, որքան նրանից, ինչպես նաև սպիտակ մորուքով մի պորտուգալացուց (նկատի ունեք Հայր Ջերոնիմո դե Լա Կրուզին- Թ. Մ.)»¹⁴⁸:

Հայր Ջ. Թաղեուսը հարկադրված էր կատարել շահի հանձնարարությունը: Ըստ որոշ տեղեկությունների՝ շահ Աբբաս Ա-ն ցանկանում էր նաև, որ կղզակները վերանորոգեին Ջարգու ամրոցը, որտեղից նա դուրս էր բշել թուրքերին և որը լավ հենարան կարող էր հանդիսանալ նրանցից պաշտպանվելու և քաքնվելու համար¹⁴⁹: Սակայն Թաղեուսին Աստրախանում ձեռքակալում են: Շահի հղած մամակներն ու հավատարմագրերը ոչնչացվում են: Աբբաս Ա-ի սպառնալի միջնորդություններից հետո նա ազատվում է և 1614թ. միայն վերադառնում Սպահան¹⁵⁰:

«Կարմեյանների տարեգրությունում» անընդհատ ընդգծվում է այն փաստը, որ Հռոմի պապի քարոզիչները մշտապես ֆինանսական աջակցության կարիք են ունեցել և յուրաքանչյուր պատեհ առիթի դեպքում այդ մասին հիշեցրել են: Այսպես, օրինակ, 1619թ. Հայր Ջոն Թաղեուսի՝ Սպահանում գումարած քարոզիչների համաժողովին ներկա գտնվող բոլոր հայրերը ստորագրում են մի համաձայնագիր, որտեղ նշվում էր, որ քարոզիչները ֆինանսական լուրջ աջակցության կարիք ունեն¹⁵¹: 1623թ. Պողոս V-ին հաջորդած պապ Գրիգորիոս XV-ը (1621-1623) մամակ է ուղղում պարսից շահին՝ իր նախորդների մաման բարեկամության, միասնության կոչերով¹⁵²:

Սակայն մահմեդականների կողմից հալածանքները, Սպահանում ուր ամիս կրոնավորների ներճամբարումն իրենց բնակավայրերով, Հորմուզի բնակավայրի, Իրանի հարավային ամիս պորտուգալական հենարանի կորուստը, շահի հետ մտերմիկ

¹⁴⁷"A Chronicle of the Carmelites", v. I, p. 195.

¹⁴⁸Նույն տեղում:

¹⁴⁹Նույն տեղում:

¹⁵⁰Նույն տեղում:

¹⁵¹Նույն տեղում, էջ 236:

¹⁵²Նույն տեղում, էջ 268-270:

հարաբերությունների, ուստի և հովանավորության, խնամակալության բացակայությունն անելանելի վիճակի մեջ էին դրել քարոզիչներին:

Միաբանության իրանական առաքելության պատմության մեջ այսչափ զուգադիպություն մեկ տարվա մեջ դեռ չէր եղել: Սպահանի մայր մենաստանը շատ մեծ կարիքների մեջ էր և իր գոյությունը շարունակում էր պարտքերով, փոխստվություններով: Հենց այս ժամանակ է, որ իրանական առաքելության հիմնադիրներից ավագը՝ Հայր Փոլ Սայմընը, ով անձնական հետաքրքրություն ուներ առաքելության առաջխաղացման ու հաջողության նկատմամբ, 1623թ. մայիսի 6-ին ընտրվում է Միաբանության գլխավոր (Praepositus General of Order)¹⁵³:

Հայր Փրոսփերի (Սպահանի մենաստանի վանահայր)՝ 1624թ. հուլիսի 9-ի նամակի բովանդակությունը վկայում է Կարմեյանների նկատմամբ շահի անբարոյց արհամարհանքի մասին. «Երեք տարի է անցել, ինչ շահը չի խոսել մեզ հետ...»¹⁵⁴:

Շահի նման վերաբերմունքը, ինչպես նաև նյութական անբարենպաստ պայմանները ստիպեցին որպես դեսպան Հռոմ ուղարկել Հայր Փրոսփերին՝ Կարմեյաններին հուզող խնդիրների լուծման նպատակով: Նա ճանապարհ ընկավ 1624թ. սեպտեմբերի 12-ին¹⁵⁵:

Իրադարձությունների ընթացքը փոխեց «... լայնախոհ, խելամիտ և միևնույն ժամանակ դաժան ու կասկածամիտ պարսից շահ Աբբաս Ա-ի մահը ... 1629թ. հունվարի 19-ին իր ամենախիստ պալատում 60-ամյա շահը մահացավ դիզենտերիայից ... Ամենագոր շահի մահվան լուրն առաջ բերեց խռովություններ՝ պալատականները մեկ ամիս շարունակ թաքցնում էին այդ լուրը...»¹⁵⁶:

Շահի մահվան լուրը հասավ նաև Հռոմ: Կարմեյան Հայր Դիմասը (Vicar Provincial)՝ Հռոմ հղած իր նամակում գրում է. «... Շահ Աբբաս Ա-ն հեռացավ այս կյանքից: Նախքան մահանալը նա իր վստահելի անձանց հրամայել էր գահը հանձնել Սաֆի Միրզային, ինչն այդպես էլ եղավ: Շահն արդեն իսկ մահացած էր, երբ Սպահանի կառավարիչ Խոսրով Միրզան եկավ հանգստացնելու բնակչությանը,

¹⁵³ A Chronicle of the Carmelites, v. I, p. 274.

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 268:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 273-274:

¹⁵⁶ Բայբերդյան Վ., Իրանի պատմություն, էջ 328:

ովքեր լսել էին շահի մահվան լուրը: Կառավարչի ժամանումից ութ օր անց նրանք սկսեցին արքայական հրապարակում (մեյդան) շեփոր փչել և թմբուկ խփել՝ հայտարարելով, թե իբր հիվանդ շահ Աբբաս Ա-ն գալիս է Սպահան: Բնակչության մի մասն առաջին մի քանի օրը հավատում էր, մյուս մասը՝ կասկածում: Այդպիսով՝ քաղաքում անհանգստություն էր տիրում...»¹⁵⁷:

Դիմասի նամակը Հռոմ հասավ շահ Աբբաս Ա-ի մահից մի քանի ամիս անց միայն: Հռոմի պապ Ուրբան VIII-ը (1623-1644), անտեղյակ այդ փաստին, 1629թ. մարտի 8-ին Աբբաս Ա-ին հղած նամակում բացատրում էր Կարմելյանների առաքելության նպատակների մասին և խնդրում շահին հնարավորություն տալ նրանց մերձենալու՝ հիշեցնելով Հռոմի հետ ունեցած նախկին ջերմ հարաբերությունների մասին¹⁵⁸:

Շահ Աբբաս Ա-ի մահից առաջ՝ 1628թ. նոյեմբերի 11-ին, Սպահանից անհայտ պատճառներով հեռացավ Կարմելյան Հայր Ջոն Թադդեուսը: Ըստ որոշ տեղեկությունների՝ նա մտադրվել էր հեռանալ Սպահանից կա՛մ հայերի հետ կապված գործերի, կա՛մ որպես առաքելության հավատարմատար (պրոկուրատոր): Նա իր հետ վերցրել էր շահ Աբբաս Ա-ի գրած նամակները, որոնք ժամանակին ապահով հասել են Ուրբան VIII-ին, սակայն այդ նամակները «Կարմելյանների տարեգրությունում» բացակայում են: 1633թ. հունվարի 9-ի զեկուցագրում խոսվում է այդ մասին¹⁵⁹:

¹⁵⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 285.

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 288:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 294:

Ուրբան VIII պապը ներկայացնում է նաև այն գրքերի ցուցակը, որոնք իր հետ Իրանից բերել էր Հայր Ջոն Թադդեուսը: Չեռագրերի մեջ կային նաև Ավետարանի բովո՞ք քսաներեք պարսկերեն թարգմանություն, Ղուրան (արաբերեն և պարսկերեն), Ջ. Թադդեուսի Դավրի Սաղմունքի սեփական թարգմանությունը, պարսկերեն մի գիրք, ուր տեղ էին գտել Լկրոպական միապետների և այլ քրիստոնյա արքաների որոշ նամակներ՝ ուղղված պարսից շահ Աբբաս Ա-ին և, համապատասխանաբար, շահ Աբբաս Ա-ի պատասխան-նամակները, ինչպես նաև՝ շահի պաշտոնական հրահանգները, 1608-ից մինչև 1623 և 1627թթ., Կարմելյան միաբանության հայրերի առաքելության տարեգրություններն ու զեկույցները սկզբից մինչև Հայր Ջ. Թադդեուսի հեռանալը (լատիներեն, իտալերեն, իսպաներեն) ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 294):

Երկար և դժվարին ճանապարհորդությունից հետո Հայր Ջոն Թադդեուսը 1629թ. սեպտեմբերի 16-ին ժամանում է Հռոմ և հոկտեմբերի 29-ին ներկայանում է Ուրբան պապին Կաստելգանդոլֆոյում (Castelgandolfo): Նա ներկայացնում է Ջուդայի հայ եպիսկոպոսների հավատարմագրերը, համաձայն որոնց՝ ջուդահայերը նամակներ էին հղել Հռոմ՝ հոգևոր օգնության համար, սակայն պատասխան չէին ստացել: Ջ. Թադդեուսը լիագործվել էր քննարկել՝

ա) հայկական թեմական դպրոցի ստեղծման հարցը,

բ) «Ֆրանկ» վանահոր անհրաժեշտության հարցը,

գ) հայերեն գրականության, այդ թվում՝ Հին և Նոր կտակարանների տպագրության անհրաժեշտության հարցը¹⁶⁰:

Հատկանշական է, որ հայերը խնդրել էին նաև Ջ. Թադդեուսին օգնել, որպեսզի մետաքսի առևտուրն իրենց ձեռքն անցնի, և եթե պապի օգնությամբ դա իրագործվեր, ապա իրենք խոստանում էին հնազանդվել Հռոմի Սուրբ Եկեղեցուն: Կարդինալներ Բորջեսը (Borghese), Ուբալդինին (Ubal dini) և Սիստոն (Sisto) համաձայնեցին լսել Հայր Ջ. Թադդեուսին, ով ներկայացրեց ջուդահայերի խնդրանքը: Հանդիպումը կայացավ Կարդինալ Բորջեսի պալատում. վճռվեց, որ եթե խնդրատու հայերը կարողիկներ են, ապա իրենց ծախսերով կարող են բնակարան կառուցել պապական կայաններում: Ինչ վերաբերում է դպրոցին, ապա այն ևս կկառուցեն, եթե անհրաժեշտ գումար տրամադրվի, իսկ հայերեն գրքերի տպագրությունը կիրականացվի Հռոմում, խնդրատուների ծախսերով, պայմանով, որ գերծ կլինեն մոլորություններից¹⁶¹:

Հայր Ջ. Թադդեուսի՝ Հռոմ վերադառնալուց հետո Սպահանի եպիսկոպոսի պաշտոնը թափուր մնաց: Հայր Ջ. Թադդեուսը շուրջ քսանհինգ տարի ապրել է Իրանում. նա գիտեր այդ երկրի պատմությունը, սովորույթները, ժողովրդի նիստուկացը: Նրան հարգում և սիրում էին կաթոլիկ հայերը, բացի այդ՝ մեծ հեղինակություն էր վայելում պարսից արքունիքում:

Կաթոլիկ հայերը նամակ հղեցին պապին՝ խնդրելով Իրան ուղարկել Թադդեուսին: Կարմեյան հայեր Մաթյուն (Մաթեոս, Matthew

¹⁶⁰ A Chronicle of the Carmelites, v. I, p. 294.

¹⁶¹ Նույն տեղում, էջ 295:

of the Cross), Բազիլը (Basil of S. Francis) և այլք հանդես եկան միևնույն խնդրանքով՝ առաքելության գործունեության հետագա ընթացքի համար կարևորելով Թաղդեոսի փորձն ու գիտելիքները, միևնույն ժամանակ, առանց Թաղդեոսի իրենց որք էին համարում¹⁶²:

Հայր Ջոն Թաղդեոսի վերադարձի համար երկու խոչընդոտ կար. մախ՝ մա արդեն հիսունինը տարեկան էր և ապա՝ արևելյան կլիմայի հետևանքով մարմնի թուլություն ուներ: Ուստի նպատակահարմար դարձավ նրա փոխարեն Հայր Թիմըթի Փերեզի (Timothy Perez) թեկնածությունը, ով նույնպես իսպանացի էր՝ ծնված Փալերմոյում, սակայն հարում էր Կարմելյանների մյուս ճյուղին (ոչ րոկոտն): Հայր Ջոն Թաղդեոսն առաջին անգամ կատարեց իր եպիսկոպոսական գործառույթները Կարմելյանների Լա Սկալա մենաստանում¹⁶³:

¹⁶² "A Chronicle of the Carmelites", v. I, p. 299.

¹⁶³ Նույն տեղում, էջ 300:

**Կարմեյան միաբաններն ու իրանահայ գաղութը: Հայերի
հայտնվելն Իրանում և գաղթօջախի հիմնումն՝ ըստ
«Կարմեյանների տարեգրության»**

Իրանում հայկական առաջին գաղթօջախներն առաջացել են 3-րդ դարում, երբ իշխանության գլուխ են անցել Սասանյանները: Համաձայն Մ. Խորենացու վկայության՝ հայերի առաջին խոշոր բռնագաղթն Իրան իրականացվել է 4-րդ դարի 60-ական րվականներին Սասանյան Շապուհ II արքայի կողմից¹⁶⁴: Վերջինս հայերին բնակեցրել է Խուզիստանում. նրանք հետագայում ձուլվել են տեղացիներին: Հայկական նոր գաղթօջախներ սկսել են ստեղծվել 9-րդ դարից՝ գլխավորապես բռնագաղթերի և գերեվարության ճանապարհով: Նոր վերաբնակեցումներ տեղի ունեցան 13-րդ դարում՝ մոնղոլական արշավանքների ընթացքում: Լենկ Թեմուրի և նրանից հետո Իրանում գահակալող տիրակալների վայրագությունների հետևանքով իրանահայ գաղթօջախները զգալի չափով տուժեցին, սակայն չդադարեցրին իրենց գոյությունը. նրանց մեծ մասը շարունակեց գոյատևել նաև Մեֆյան հարստության շրջանում: Սպահանի հայ գաղթավայրը հիմնվել է Մեֆյան հարստության հիմնադիր շահ Իսմայիլի գահակալության տարիներին: Պրոֆեսոր Ա. Աբրահամյանի կարծիքով «Սպահանի հայ գաղթօջախը մինչև շահ Աբբասի բռնագաղթը փոքրիկ է եղել և սովորաբար է բռնագաղթից հետո»¹⁶⁵: Համաձայն Ժամանակագրի՝ Ա. Դավրիժեցու վկայության՝ Սպահանը հայտնի էր Շոշ անվամբ, որը սխալմամբ երբեմն նույնացվում է հնագույն Շուշիի (Շուշա) հետ. «... Սպահան, որ է Շօշ քաղաք, յոր մարգարեն Դանիել գտեսիլն ետես, որ էր ամուր և բազմամարդ, որոնց ընդլիմացեալ նմա պատերազմեցան, և յաղթեալ նոցա է առ գբաղարբ...»¹⁶⁶:

Այս միտքը լրացնում է Հ. Տեր-Հովհանյանցի հետևյալ հիշատակությունը. «Ի հանգստարանին Ջուղայու կան մի քանի

¹⁶⁴ Խորենացի Մ., Հայոց պատմություն, Ե., 1990, էջ 188-189:

¹⁶⁵ Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Կ. Ա., 1964, էջ 249-250:

¹⁶⁶ Դավրիժեցի Ա., Գիլյո պատմութեանց, էջ 331:

տապանաքարինք, որոց թուականն է հազար, որք յիսուն և չորս ամօր յառաջ են, քան զՋուղայու հիմնարկութիւնն»¹⁶⁷: 16-րդ դարի եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում տեղեկություններ կան Սպահանում բնակություն հաստատած հայ առևտրականների ու արհեստավորության աշխույժ գործունեության մասին: Այդ առևտրականներից մեկն էր խոջա Նազարը¹⁶⁸. նրա՝ շահ Աբբասից ստացած արտոնագրի հայերեն թարգմանությունը հրատարակել է Հ. Տեր-Հովհանյանը¹⁶⁹: Ա. Գավրիժեցին հաղորդում է, որ «...Չորս գեղ ի Դիզակայ երկրէն միահաղոյն չուեցին և գնացին յերկիրն Պարսից, և շահն բնակեցոյց գնոսա ի քաղաքն Սպահան»¹⁷⁰:

Ջալալիների աշխարհավեր խռովությունները, սկիզբ առնելով 16-րդ դարի վերջերին Ռոշայում (Եղեսիա, Ուրֆա) և նրա շրջակայքում, տարածվեցին Փոքր Ասիայից մինչև Կասպից ծովի արևմտյան ափերը՝ ցնցելով ողջ Հայաստանը, և շարունակվեցին մինչև 17-րդ դարը: Գավրիժեցին նշում է. «... Ամենեքեան Ջալալիք էին, որք ոչ հնազանդէին քազատրին. և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք... Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցԵրևան քաղաք. ի Բաղդատայ մինչև ցԴամուրդափուն, զՍպիտակ ծովու մեջն և զՍեաւ ծովու մեջն...»¹⁷¹:

Պատերազմական գործողությունները հարկադրում էին խաղաղ բնակչությանը զանգվածաբար՝ հեռանալ արտագաղթել իրենց բնակավայրերից: Օրինակ՝ Դելի Հասանի կողմից Թոխատի գրավումը 1602թ. նպաստեց Արևմտյան Հայաստանի հայաբնակ

¹⁶⁷ Տեր Յովհաննանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, էջ 158, հ. Բ, էջ 282-283:

¹⁶⁸ Հ. Բյուրտյանը, Ա. Ալայոյաճյանը անճշտություն են հաճախում այն, որ շահ Աբբասը խոջա Նազարին ազատ վաճառականության համար արտոնագիր է տվել: Հ. Բյուրտյանն այդ կապակցությամբ նշում է. «Գրեցաւ յառաջնում ցամառիօլ ամսեան յամի 1001(1580)»: Նա ճշտում է, որ Հիջրայի 1001-ը հավասար չէ 1580թ., այլ՝ 1593թ. հունվարի 24-ին, ուստի շահ կասկածելի է դառնում նաև այն փաստը, որ խոջա Նազարն այդ ժամանակ գրավելի վաճառականությամբ (Զիիրտեան Յ., Ջուղայեցի Խօջայ Նազար եի իր հ. Գ, Գ-ահիրե, 1961, էջ 192):

¹⁶⁹ Տեր Յովհաննանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Բ, էջ 158:

¹⁷⁰ Գավրիժեցի Ա., Գիրք պատմութեանց, էջ 63:

¹⁷¹ Նույն տեղում, էջ 108:

շրջաններից հայ բնակչության արտագաղթին դեպի Կ. Պոլիս, Եվրոպա, Իրան¹⁷²:

Կարմեյանների հաղորդումները՝ իրենց կողմնակալ մտանցումներով և մեկնաբանություններով հանդերձ, ունեն պատմա-աղբյուրագիտական որոշակի արժեք 17-18-րդ դարերի իրանահայ գաղութի պատմության որոշ էջերի լուսաբանման համար:

Շահ Աբբաս Ա-ի կազմակերպած աննախադեպ բռնագաղթը, ըստ Ա. Դավրիժեցու արժանահավատ վկայության, ընդգրկեց գրեթե ողջ Հայաստանը. «Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգածոր, առ եզերք Գեղամայ, և Լօռոյ, և զՀամգաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զԶարիշատ, և մասն ինչ գեղօրէիցն Կարսայ, և զձորն Կաղզվանու բնախն, և բովանդակ գերկիրն Ալաշկերտու, և զգեղօրայսն Մակուայ, և գերկիրն Աղբակու և զՍալմաստու և զԵղոյայ և զՈւրմի, և որ ինչ պանդուխտք և դարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիզու, զղաշտն Արարատու բովանդակ, և զԵրևան քաղաք, գերկիրն Դրխբուլաղայ, զԾաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծածորն: Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճշոյ, և զԲերկրու, և զՎանայ աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան, և ընդ սոսա քշեցին և տարան»¹⁷³:

«Կարմեյանների տարեգրության» մեջ այսպես է գնահատվում Աբբաս Ա-ի կողմից հայերի բռնագաղթն Իրան ու նրանց վերաբնակեցումն այնտեղ. «... 1604թ. շահ Աբբաս Ա-ն իրագործեց այդ դաժան ոճիրը հայերի նկատմամբ և՛ որպես քրիստոնյաներ, և՛ որպես ռասա՝ բռնագաղթեցնելով նորակառույց Ջուղա քաղաք»¹⁷⁴:

¹⁷² Ջուլայան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII), Ե., 1966, էջ 142-190:

اسکند ر بيک ترکمان (مثنوی), تاريخ عالم آرای عباسی، جلد ۱، تهران، ۱۳۱۴ م. ۲۳۸
¹⁷³ Դավրիժեցի Ա., Գիրք պատմութեանց, էջ 86-87, Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ-Ս.Ղազար, 1901, էջ 611-613, Ջուղայեցի Խ., Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 11:

¹⁷⁴ Հին Ջուղան, որտեղից շահ Աբբաս Ա-ն քշեց հայերին, գտնվում էր Արաքս գետի, իսկ Նոր Ջուղան, որտեղ տեղավորեց հայերին՝ Սպահանում, Ջայանդեռող գետի ափին ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 99): Համաձայն Ա. Դավրիժեցու «Պատմության» շահ Աբբաս Ա-ի կատարած մեծ «սուրգունի» ժամանակ Սպահան է գնում նաև Դավիթ կաթողիկոսը: Սեպիտեքը

Բռնագաղթված հայերի՝ Ջուղայում հաստատվելու մասին Կարմեյանները հաղորդում են. «...Անկասկած, նորեկներն աղքատ էին և դրամի պակասություն էին զգում... Շահ Աբբաս Ա-ն Ջուղայի խեղճ հայերին երեք տարի ժամկետով քսան-երեսուն սկուտի էր պարտք տվել: Մեկ տարի անց նրանք ծախսում են իրենց ողջ գումարն ու այլևս վերադարձնելու ոչինչ չունենալով՝ փախչելու ցանկություն հայտնում: Հայերը շատ ողբերգություններ են տեսել հատկապես պարտքերի վերադարձման օրերին... Սակայն շահը շատ լրտեսներ ուներ, ովքեր հսկում էին, որ հանկարծ հայերն իրենց երկիր չփախչեին առանց թույլտվության, և մենք չտեսանք, որ որևէ մեկը հասներ դրան: Օրինակ՝ պատրիարքի ներկայացուցիչներից երկու զարմիկ փախել էին Սպահանից: Նրանց բռնել էին, ծեծել ու հետ վերադարձրել: Շահը հրամայել էր նրանց մահմեդականություն ընդունել, հակառակ դեպքում՝ սպառնալիքներ տեղացել, քե կսպանի... Շահի յուրաքանչյուր երեք բուման պարտքի դիմաց պետք է մեկ հայ տղայի տալին, իսկ երկու բումանի դիմաց՝ մեկ աղջիկ... Նոր Ջուղան արագորեն աճեց տասը տարվա ընթացքում...»¹⁷⁵:

Ջուղահայերի հաղորդումների համաձայն՝ շահ Աբբաս Ա-ն շուրջ չորս հարյուր հազար հոգի բռնագաղթեցրեց, որոնցից տասը հազարը Նախիջևանի շրջանի կաթոլիկներ էին: Շուրջ տասը հազար երեխայի իսլամացնելու նպատակով տարան մահմեդականների տները: Միևնույն ժամանակ, շահ Աբբասը հրաման էր տվել, որ հայոց պատրիարքը, եպիսկոպոսները, ինչպես նաև նրանց ծնողները կարող են փրկագնել երեխաներին¹⁷⁶:

Անառարկելի է, որ մման պայմաններում Հռոմի համար Իրանը կարող էր ծառայել որպես մի ուրույն հենակետ Արևելքում տեղի

կես ճանապարհից հետ է դառնում, գալիս Էջմիածին և կարողիկություն անում: Վերջինս բնակության վայր էր ընտրել Երևանը, կաթոլիկ եկեղեցին և իր մերձավորների ու ազգականների հետ «փափկակենցաղ, մեղկ ու լայն կյանքով սպրում եր» (Գարիթեցի Ա., նշվ. աշխ., էջ 184):

¹⁷⁵ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 189, 168, 100, 207.

¹⁷⁶ Նույն տեղում:

ժողովրդի և հատկապես քրիստոնյաների «ժողիների փրկության» կարևոր առաջադրանքի իրականացման համար:¹⁷⁷

Պատմաքաղաքական այս իրադրության մեջ իրենց գործունեությունը ծավալող Կարմեյան միաբանների համար իրանահայ գաղութը կարող էր դառնալ միջանկյալ հենակետ: Այստեղ արդեն իսկ գոյություն ունեցող կրոնական խմորումները հենք էին հանդիսանում մաս Կարմեյանների հիմնավորման համար: Հայկական միջավայրում, 14-15-րդ դարերից սկսած, գործում էին բազմաթիվ միաբանություններ (Հիսուսյան, Ֆրանցիսկյան, Դոմինիկյան, Ավգուստինյան և այլն), որոնց հետ շփումներն արդեն սովել էին իրենց առաջին «դրական» արդյունքները՝ գաղափարական կողմնորոշում հաղորդելով որոշ հայ հոգևորական գործիչների և եկրոպական առևտրի ոլորտում հայտնի մեծահարուստ վաճառականների: Մտղաքիա արք. Օրմանյանը գրում է, թե «Լատիններու արեւելքին վրայ ազդեցութիւն ունենալու ջանքերը նոր չէին, և Ռուբինեանց օրէն սկսելով այդ միտումը շեշտուեցաւ, Խաչակիրներով զօրացաւ, բայց անոնց տկարանալովը չդադրեցաւ. և երբոր քաղաքականապէս տիրապետելու դուռերը փակուեցան, լատինականութիւնը բոլոր ոյժը թափեց դաւանական միութեանը համակիրներ և հետևորդներ շատցնելու: Այդ նպատակին կը հետևէր ոչ միայն պապութիւնը, իբր հոգեւորական իշխանութիւն, այլև Իտալական հանրապետութիւններ իրենց տիրապետական և առևտրական յարաբերութեանց համար...»¹⁷⁸: Օրմանյանը փաստում է, որ «Արեւելքի մէջ իրենց համար աւելի դիրամատչելի և դիրաշահելի տարրը կը ներկայանար Հայը, երկու մեծ պարագաներով: Մէկը արտաքին էր, Հայուն աւելի նեղուած ու զրկուած և ցրուած վիճակը. եվ միւսը ներքին էր, Հայուն կրօնական զգացումներուն՝ բոյաշտու և ներողամիտ սկզբանց վրայ հիմնուած ըլլալը, կամ աւելի բաց խօսելու համար, յախտենական փրկութեան համար հայադաւանութեան անհրաժեշտ պայման նկատուած չըլլալը, և ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներու մէջ ալ յախտենական

¹⁷⁷ Ghougassian V., *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*, University of Pennsylvania Armenian Texts and Studies, N 14, USA, 1998, p. 128.

¹⁷⁸ Օրմանյան Մ., Ազգասպառում, մասն Բ, էջ 2354:

փրկութեան հնարատրութիւնը...: Ամենուրեք կաթողիկոսեան խնդիրն էր, որ յուզմանց և շփոթութեանց պատճառ կըլլար Հայութեան մէջ, և որուն սկզբնապատճառը պիտի նկատուին եռանդնոտ և գործունեայ, բայց և յախտուն ու կրօնամոլ Լատին աբեղաներ, որոնք նիւթական միջոցներով հարուստ, քաղաքական պաշտպանութեամբ զօրատր, և ձեռներեց յանդըզութեամբ նշանատր, սանձարձակ մտած էին արկածեալ և չարչարեալ ժողովրդի մը մէջ, որ իւր բնական բուն տենչերուն հակառակ, բռնութեան և տգիտութեան ճիւղաներուն ներքեւ կը ճնշուէր»¹⁷⁹ :

Ուշագրավ է, որ Ա. Չամինյանն իր «Հայոց եկեղեցու պատմության» մէջ ևս նշում է, որ եթէ պարսից շահերը սիրով ընդունում էին նրանց (քարոզիչներին- Թ.Մ.) ի նկատի առնելով հենց երկրի առևտրական շահերը և կամենալով նրանց հետ մտերմանալ իրենց ընդհանուր թշնամու դեմ, ապա «... Ոչ պակաս սիրով ընդունում էին նրանց և հայերը, որովհետև այդ քարոզիչները բժշկում էին ձրիաբար, թշուառներ խնամում և իրանց գիտութեամբ ամէնքին զարմացնում...»¹⁸⁰:

«... Հայերը, հատկապես ջողահայերը, գրում է Հայր Ջոն Թադլեուսը, հարուստ են. նրանք եկեղեցիներ ունեն, պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և շատ քահանաներ: Շահ Աբբաս Ա-ն թույլատրում է նրանց հետևել իրենց ծեսերին, տոնել դրանք իրենց եկեղեցիներում և այլն: Բացի այդ՝ հայերը լավ են տրամադրված մեր նկատմամբ՝ բացառությամբ Ջուղայի քնակչության (գրեթե բոլոր վաճառականները), որոնք դժվարություններ են ստեղծում: Նրանք, հավանաբար, հերձվածողներ են...»¹⁸¹:

Կաթողիկոսության տարածումն Իրանում, բնական է, որ չէր կարող հեշտորեն իրականացվել: Իսլամադավան ուժեղ և կենտրոնացված մի պետության մեջ, ինչպիսին Իրանն էր, քրիստոնեության թեկուզ «խաղաղ» տարածումը հանդիպում էր անասելի դժվարությունների և, բացի այդ, չափազանց վտանգավոր էր մասն այն տարածող քարոզիչների անձի համար: Այսպես, օրինակ,

¹⁷⁹ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 2355, 2667-2668:

¹⁸⁰ Չամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, Բ մասն, էջ 93:

¹⁸¹ «A Chronicle of the Carmelites», v. I, p. 157.

շահ Աբբաս Ա-ն դաժանորեն պատժում էր ոչ միայն մահմեդականներին ու իրենց հարազատներին, որոնք ընդունել էին կաթոլիկություն, այլև՝ քարոզիչներին¹⁸²:

Համոզվելով, որ կաթոլիկության տարածումը արժանանում է շիա հոգևորականության և շահական կառավարության բացահայտ հակահարվածին, Կարմելյանները ստիպված էին իրենց գործունեությունը ծավալել Իրանի քրիստոնյա բնակչության և մասնավորապես իրանահայության շրջանում: Այդ իսկ պատճառով էլ «Հավատի միաբանությունը» իր ցուցումներում առանձնակի կարևորում էր քարոզչական գործունեությունն իրանահայության շրջանում¹⁸³:

Ահա՛ ինչու ժամանելով Սպահան՝ Կարմելյանները Հռոմ հղած իրենց զեկուցագրերում հարկ էին համարել մանրամասն զեկուցել Սեֆյան Իրանում հայերի ունեցած դերի ու դիրքի մասին¹⁸⁴: Այդ փաստը հաստատում է հենց Հռոմի կողմից քարոզիչներին հանձնարարված հրահանգներից մեկը, որը վերնագրված է. «Հայերի հետ վարվելու ձևերը»: Այստեղ մանրամասն հանձնարարականներ էին տրվում քարոզիչներին իրանահայության շրջանում աշխատելու ձևերի ու մեթոդների վերաբերյալ¹⁸⁵:

Իրանի քրիստոնյա բնակչության մեծամասնություն կազմող հայերի շրջանում կաթոլիկ քարոզչության տարածումը թեև չէր հանդիպում մահմեդական պետության կտրուկ հակազդեցությանը, սակայն չէր էլ խրախուսվում¹⁸⁶: Սակայն քարոզիչները գիտակցում էին, որ իրանահայերը շահի հպատակներն են, և նրանց կաթոլիկացումը ևս կարող է դիտվել որպես Իրանի դեմ ուղղված քայլ: Այսպես, երբ 1612թ. դեկտեմբերի 26-ին Սիրենի եպիսկոպոս օժված

¹⁸² *میراث فلسفی، زندگانی شاه عباس اول، جلد ۳، تهران، ۱۳۷۱، ص ۹۱ - ۹۲.*

¹⁸³ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 191, 197-198.

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 155-157:

¹⁸⁵ *Байбуртов В., Армянская колония Новой Джульфы в XVII веке, стр. 124-125.*

¹⁸⁶ Բայբուրտյան Ա., Կարմելյանների միաբանության միախոնքների գործունեությունն իրանահայության շրջանում (XVII դ.). Լրաբեր հասարակական գիտությունների, 11(551), Ե., 1988, նոյեմբեր, էջ 53, Բայբուրտյան Վ. Ա., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միախոնքների կազմակերպությունները, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, N 9, էջ 39-40:

Անտոնիո դե Գուվեան (նա կրում էր «Հայոց առաքելական այցելով» տիտղոսը) հայ քրիստոնյաներին ընդգրկում է իր «հոսի» մեջ, առաջացնում է շահ Աբբաս Ա-ի զայրույթը: Անցանկալի հետևանքներից խուսափելու համար 1613թ. հոկտեմբերի 21-ին դե Գուվեան իր մի քանի համախոհներով հարկադրված էր հեռանալ Սպահանից¹⁸⁷: Սակայն շահի զայրույթը չամոքվեց: Դե Գուվեայի մեկնումից շատ չանցած՝ շահը սպառնում էր բռնի մահմեդականացնել իր թագավորության բոլոր հայերին: «Ոչ միայն հայոց, այլ և կաթոլիկ միսիոնարներուն մեջ այնպիսի ահուդողի մթնոլորտ մը ստեղծվեցավ, որ չգրգռելու համար շահին սրտմտությունը օգոստինյան Կիլեներն տե Ժեզյու և Պերմարտո տե Ազետո հայրերը որոշեցին թողուլ Սպահանի վանքը նոյեմբեր 1613-ին, անոր պահպանությունը առժամայես հանձնելով բոկոսն հայրերուն»¹⁸⁸:

Կարմելյանների գործունեության կարևոր բնագավառներից մեկը հանդիսանում էր կաթոլիկ դպրոցների հիմնումը, երեխաների ընդգրկումն այդ դպրոցներում և նրանց դաստիարակումը՝ կաթոլիկության ոգուն համապատասխան: Նրանք հատկապես կարևորում էին դպրոցների բացման անհրաժեշտությունը, որը բազմիցս մեկնաբանված է «Կարմելյանների տարեգրության» մեջ: Եվ, իրոք, նրանց հաջողվում է դպրոցներ բացել Նոր Ջուղայում, Սպահանում, Շիրազում և մի շարք հայաբնակ այլ քաղաքներում¹⁸⁹: Իսկ տեղի բնակչությունից օգնականներ պատրաստելու նպատակով դեռևս 16-րդ դարում Հռոմում բացված իրենց հատուկ դպրոցում (Collegium Urbanum de prope genda) ուսանում էին մեծ թվով հայ պատանիներ¹⁹⁰: Կարմելյանների ծրագրերում նախատեսված էին նաև իրենց քարոզչական աշխատանքների մեջ ընդգրկել երիտասարդ, չափահաս, անգամ տարեց մարդկանց: Ահա՛ ինչու Նոր Ջուղայում Կարմելյանները դպրոց էին բացել նաև հայ տարեց բնակչության համար, որտեղ նրանց ուսուցանում էին

¹⁸⁷Կյուլենկյան Ռ. Վ., Հայ-պորտուգալական հարաբերություններ, Ե., 1986, էջ 119:

¹⁸⁸Նույն տեղում, էջ 119-120, տե՛ս նաև՝ Աբգարեան Տ., Նոր-Ջուղայի դպրոցները, Նոր Ջուղա, 1914, էջ 30:

¹⁸⁹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 319, 445, 526-527.

¹⁹⁰ Ըստկարեան Վ., Եկեղեցական պատմություն, Վիեննա, 1872, էջ 353:

գրաճանաչություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, քերականություն, երկրաչափություն, լեզուներ և այլն¹⁹¹:

1610թ. Հայր Ջոն Թաղեղեուսը Հայր Վինսենթի հետ Հռոմ հղած իր նամակում շտապեցնում է Հռոմում հայ տղաների համար դպրոց հիմնադրելու հարցի քննումը, որպեսզի վերջիններս իրենց երկիր վերադառնան որպես քահանաներ: 1610թ. հուլիսի 31-ին կարդինալ Փինեյլին նրան պատասխանում է, որ այդպիսի դպրոցի հիմնումը կիրականացվի¹⁹²: Այդ հարցի շուրջ պապը տեղեկացնում է Սպահանի Կարմեյան հայրերին, որ եթե մահմեդականներին հնարավոր չէ դարձի բերել, ապա դա հնարավոր է հայերի մեջ աշխատելով, և իր նամակում ողջունում է նրանց մտահղացումները¹⁹³: Ավելի ուշ՝ 1624թ.. Ս. Ժողովը որոշում է Հռոմում դպրոց բացել, բայց նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արևելքից պատանիներ բերելը կապված է բազում դժվարությունների հետ՝ մտադրվում է դպրոց բացել այնպիսի մի վայրում, որը կապահովագրվեր եվրոպական հովանավորությամբ և մոտիկ կլիներ հայաբնակ վայրերին: Այդ նպատակի համար բնտրվեց Գոան (Արևմտյան Հնդկաստան): 1624թ. հուլիսի 19-ի հրամանագրում ասված էր. «... որոշեց Նորին Սրբոթիւնը Գոայի մեջ հայ մանուկներու կրթութեան համար Դպրոց մը բանալ. որպէս զի կարենան անոնք պահել և պահպանել այն եկեղեցին եւ նաեւ օգնել, որպէս զի սրբուին այն մերձակայ վայրերը, որոնք վարակուած են արևելեայն հերժուածէն և հերետիկոսութենէն: Միա այլ վայրերէ ատելի այս քաղաքը յարմար գտաւ, որովհետեւ հայ վաճառականները Արեւմտեան Հնդկաստանի հետ անդադար տուրեաւոր ունենալով, շատ աւելի դիւրին պիտի ըլլայ հայ մանկտին այս Դպրատունը բերել քան հոս ի Հռոմ... »¹⁹⁴: Նամակում պապը Կարմեյաններին ոգևորում է

¹⁹¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 517-518.

¹⁹² Նույն տեղում, էջ 191, տես նաև՝ **Аннинский А.**, История Армянской церкви, Кишинев, 1900, стр. 262.

¹⁹³ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 191-192.

¹⁹⁴ **Ալիքնեան Ն., Հ.** Մովսէս Գ. Տաբաթի կարդինոս, կյանքն եւ գործունեությունը, Հանդէս ամսօրեայ հայագիտական ուսումնաբերք, քիի 11,12, նոյեմբեր-դեկտեմբեր, Վիեննա, 1934, էջ 516-518:

1630թ. հուլիսի 23-ին Ս. Ժողովը, անալով ջուղահայերի խնդրանքին, որոշում է Հռոմում, այնուամենայնիվ, դպրոց բացել, պայմանով, որ ջուղայեցիները այդ կարևոր նախաձեռնության համար հանձն առնեն գնել շինություն և կահավորանք: Այդ պայմանների առկայության դեպքում հնարավոր կլիներ շուրջ

վիադաքուշ արտահայտություններով՝ նրանց աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով. «... Մենք ամբողջ արտով սիրում և «մեր բարության գավաթներն» ենք ուղղում Ձեզ, հիշում ենք մեր աղոթքներում...»¹⁹⁵:

Կարմեյանների գործունեության կարևորագույն քննազավառներից էր նաև թարգմանչական լայնածավալ գործը: Այդ կապակցությամբ Սպահանի, այնուհետև Հոմի ենթավանահայր (sub-prior) Ջոն Թադդեուսը 1616թ. մարտի 26-ի իր նամակում հաղորդում է, որ ինքը տարբեր գրքեր է շարադրում պարսկերեն՝ քրիստոնեական ուսմունքը, Ավետարանը, Գ-ավքի Սաղմունները, և այս աշխատանքները կատարելիս օգտվում է երեք պարսիկ մուլլայի (չի հիշատակվում, քե ովքեր են) և մեկ իրանաքնակ հրեայի ծառայություններից¹⁹⁶:

Սակայն Սաղմունները թարգմանվել են նաև արաբերեն: Երբ Հայր Ջոն Թադդեուսը իր թարգմանած գրքերը ներկայացրել է շահին, Աբբաս Ա-ն ընդունել է դրանք մեծագույն հաճույքով և խորը հարգանքով: «Այս ամենն ինքնանպատակ չէր, և գրում է Ջ. Թադդեուսը, և սա նախադեպն էր՝ սպագայում կրկնելու, քանի որ Աստծու խոսքն ու մեր հավատքի դրույթներն աննկատ տարածելու հնարավորություն էր ... »¹⁹⁷: Երբ Սպահան և ժամանում Իսպանիայի թագավոր Ֆիլիպ III-ի դեսպանը՝ դոն Գարսիա դե Սիլվան (Don Garcia de Silva y Figueroa), շահ Աբբասն իր հետ նախաճաշի է հրավիրում նաև բոկոտն Կարմեյան Հայր Ջոն Թադդեուսին՝ հանձնարարելով բերել Սաղմունների՝ պարսկերեն թարգմանված գիրքը: Ապա ցուցադրելու համար, որ ինքն անչափ գնահատում է քրիստոնեությունը, շահ Աբբաս Ա-ն համբուրում է գիրքը և դնում իր

405 աշակերտի ուսուցանումը, որը, ըստ Ս. Ժողովի, մեծ ծառայություն կլիներ Աստծուն և մեծ օգուտ ողջ հայ ազգին: Ջուդայեցիների հետ վերոհիշյալ հարցերի շուրջ բանակցությունները, ըստ Լուրյան, պետք է վարեր Թադդեուսը: Սակայն նրա և Մովսես կաթողիկոսի գրեթե միաժամանակ մահը խափանեցին այդ բանակցությունները: Ս. Ժողովը որոշում կայացրեց հնարավորության սահմաններում հայերի համար սահմանափակ բվով դպրոց բացել (Ալփենեան Ն., Մովսես Գ. Տաքևացի կաթողիկոս, կյանքն և գործունեությունը, էջ 523-525):
¹⁹⁵ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 192.

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 231:

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 233:

գլխին: Նա հայտարարում է, որ ով չի հավատում այնտեղ գրվածներին, անհավատ է և անարգում է Աստծուն: Նրա այդ արարքն այնքան բնական էր թվում, որ կողքից դիտողը կարող էր ենթադրել միայն երկու բան. կա՛մ նա աշխարհի ամենախորամանկ մարդն է, կա՛մ մի մարդ, ում Աստված նախասահմանել է քրիստոնյա դառնալ¹⁹⁸:

Շահ Աբբաս Ա-ն, տեղահանելով հայերին իրենց բնօրրանից և բշերով Իրան, իրականացնում էր ռազմավարական նպատակներ: Ա. Դավրիժեցին այս առնչությամբ հաղորդում է. «...Որպես զի ատերեսցի աշխարհն Հայոց՝ և շինեսցի աշխարհն Պարսից, և մուազեսցի ազգն Հայոց՝ և քազմասցի ազգն Պարսից »¹⁹⁹:

Շահ Աբբասը՝ «ինքն այր զգոյշ և նախահոգակ», շատ լավ գիտակցում էր, որ պետք է որոշակի միջոցներ գործադրել, որպեսզի հայերը հայրենիք վերադառնալու ցանկություն կամ հնարավորություն չունենան: Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ հայերը ինքնակամ ու հոժարակամ չեն մնալու «Սպահանի երկրում, որը շեն երկիր է և գտնվում է պատերազմական հետազա գործողություններից բավականին հեռու և ապահով վայրում, իսկ Հայաստան աշխարհը սահման է ու թշնամու բերան, միշտ ավար ու գերություն»: Եվ բազմիցս լսում էր, թե «հայոց աշխարհում ամեն քարիքների լիություն է, առատություն ու էժանություն... իսկ այստեղ սուղ է ու թանկություն: Այնտեղ են իրենց հայրերի ու նախնիների գերեզմանատները, վանքերն ու ուխտատեղիները, որտեղ սրբերի դամբարաններն են և մանավանդ մեծահանդես աթոռը՝ Սուրբ Էջմիածինը, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ աջը, որով օրհնվում է սուրբ մեռողը, որտեղից (Էջմիածնի մեռողը) գնալով սփռվում է ամբողջ աշխարհում ապրող հայերի մեջ, որտեղ էլ լինեն»²⁰⁰: Ուստի շահը որոշեց հայերին Իրանի հետ կապելու նպատակով հայկական սրբությունները (Լուսավորչի աջը, Էջմիածնի

¹⁹⁸ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 240-241.

¹⁹⁹ Դավրիժեցի Ա., Գիրք պատմութեանց, էջ 181, տե՛ս նաև՝ Առաքելիան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցեալը, ներկան և ապագան, Վիեննա, 1911, Ջեքիյան Պ. Լ., Խոջա Մաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1(100), Ե., 1983:

²⁰⁰ Դավրիժեցի Ա., նշվ. աշխ., էջ 181-182. Բայրություն Վ., Նոր Ջուղա, Ե., 2007, էջ 47:

տաճարի հիմնաքարերը) տեղափոխել Մսպահան կամ նույնիսկ նոր
Էջմիածին կառուցել այնտեղ:

Այդ մասին է վկայում մաս Հ. Տեր-Հովհանյանցի հետևյալ
հաղորդումը. «... Ուստի ոչ միայն գտունս և գշինուածս Հին Ջուղայու
աւերել և քակել հրամայեաց, այլ և զԷջմիածին քակել, զհող և
զքարիսն այնր փոխադրել յԱսպահան և անդ շինել զայն
խորհրդածէր, զի ժողովուրդք Հայոց մի ևս յօժարեսցին զԱսպահան
լքանել»²⁰¹:

Էջմիածնի վանքի տեղափոխման՝ շահի մտադրության մասին
տեղեկություն կա մաս «Կարմեյանների տարեգրության» մեջ:
Այսպես՝ 1609թ. շահ Աբբաս Ա-ի՝ Հոռն հղած մամակում գրված է. «...
Բոլոր քրիստոնյաներին թույլատրել ենք եկեղեցիներ կառուցել,
որտեղ նրանք կարող են աղոթել ու քրիստոնյա կրոնին բնորոշ այլ
գործառույթներ իրականացնել, որ մինչ այժմ արգելվել է նրանց, և ես
շնորհում եմ այդ արտոնությունները՝ այն եզակի սիրուց դրդված, որ
տաժում եմ Ձերոյ Սրբության նկատմամբ: Ավելին՝ կվերականգնենք
մաս Էջմիածինը, որն ավերվել էր թուրքերի կողմից, և ես հոգ կտանեմ,
որպեսզի ոչ ոք չհամարձակվի վնաս պատճառել...»²⁰²:

«Կարմեյանների տարեգրությունում» պահպանվել է մաս
պապին հղած մի մամակ, որն իր հետ բերել էր շահի կողմից Եվրոպա
ուղարկված Հայր Ջոն Թադդեուսը 1611թ.: Նամակում
մասնավորապես նշված էր. «Շահը տեղեկացնում է պապին, որ ինքը
ցանկանում է Ջուղայում երեք եկեղեցի կառուցել Էջմիածնի
փոխարեն՝ մեկը «Փրանկ» հայերի համար (խոսքը հավանաբար
վերաբերում է Նախիջևանի շրջանի հայերին, ովքեր շահ Աբբաս Ա-ի
բռնագաղթի հետևանքով բնակություն էին հաստատում Նոր
Ջուղայում, այն է՝ կաթոլիկ հայերին), մյուսը՝ հայ վանականների և
իրենց թեմի, իսկ երրորդը՝ աշխարհիկ քահանաների ...»²⁰³:
Հետաքրքիր է, որ «Կարմեյանների տարեգրության» անանուն
հեղինակը ևս նշում է, որ շահը մտադիր էր Էջմիածնի
պատրիարքարանի պատմական կառույցի քարերը տեղափոխել Նոր

²⁰¹ Տեր Զովհաննանց Զ., Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, էջ 51:

²⁰² «A Chronicle of the Carmelites», v. I, p. 191.

²⁰³ Նույն տեղում, էջ 195:

Ջուդա, որպեսզի դրանով տեղափոխի մահ հայերի հոգևոր և կրոնական միությունն իրենց մոր տուն՝ Իրանի կենտրոն²⁰⁴:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում շահի՝ 1613թ. սեպտեմբերի հրովարտակը, որը տեղ է գտել «Կարմեյանների տարեգրության» մեջ. «Մեր արքայական հրամանն ենք արձակում քահանաներին, վանականներին, կառավարիչներին, մոխրագույն մորուքավորներին, հայ ժողովրդի և՛ առաջնորդներին, և՛ հոգևոր հովիվներին, ովքեր ապրում են արքայական մայրաքաղաք Սպահանում ... Մենք ցանկություն ունենք հրապարակելու, որ բոլոր քրիստոնյաները, անկախ նրանից, թե որտեղից են և ինչ ազգի ներկայացուցիչներ են, ընդմիջա ազատ են գալ և գնալ, հաստատվել և առևտուր անել մեր երկրում:

Եվ որովհետև մեր արքայական Սպահան քաղաքում տարբեր ազգերի ու կրոնների ներկայացուցիչներ կան հաստատված, ուստի ցանկանում ենք քրիստոնյա բնակիչների հարմարավետության համար այստեղ կառուցել շատ բարձր ու ընդարձակ մի եկեղեցի, ուր քրիստոնյաներն իրենց աղոթքները կհղեն առ Աստված և կկատարեն քրիստոնեական իրենց ծեսերը: Այս ամենն իրագործելու համար Նորին Մեծություն պապի մոտ վստահելի մարդ ենք ուղարկել²⁰⁵ խնդրելով, որ պապը մի բարձրաստիճան հոգևորական նշանակի, ով ցուցումներ կտա՝ համաձայն քրիստոնեական կրոնի, և մենք մույնպես մեր օգնությունը կցուցաբերենք:

Զանի որ մեծ քանակությամբ քարեր կան Երեք Եկեղեցիներում (Էջմիածնում), իսկ Երեք Եկեղեցիների կառույցները մնացել են ավերված փճակում, և կանգուն մնալու համար պակասել են ուժերը այն մարդկանց պատճառով, ովքեր փորձել են փորել-հանել մասունքները և, մնանապես, մոտակայքում ապրող քահանաները այդ եկեղեցում թաղված սրբերի ոսկորներն են փորել-հանել՝ վաճառելով այն հերետիկոսներին, թողնելով այդ վայրն ավերակների մեջ, ուստի այն կորցրել է իր երբեմնի գեղեցկությունն ու հռչակը: Այդ իսկ

²⁰⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 196.

²⁰⁵ Չի նշվում, թե ով է, սակայն, հավանաբար, խոսքը վերաբերում է Հայր Ջոն Թադեոսին, քանի որ վերջինս որպես շահի դեսպան մեկնել էր Հոտմ 1611թ. և պապին տեղեկացրել, որ շահ Աբբաս Ա-ն ցանկանում է Նոր Ջուդայում եկեղեցի հիմնել:

պատճառով մենք հրամայում ենք, որ այդ քարերը բերվեն այդ վայրից մեր մայրաքաղաք Սպահան: Երբ մեծ եկեղեցու կառույցն ավարտվի, այն պետք է տեղադրվի այստեղ, և երբ որ քարերը բերվեն բոլոր քրիստոնյաների հավատի մայրաքաղաքը, կհավաքվեն և կզնան (քրիստոնյաները-Թ. Մ.) դիմավորելու մեծագույն հաճույքով և ցնծությամբ: Եվ, քանի որ մենք հրամայում ենք այս ամենը, Մի՛ր Շամս՝ մեր ինքնիշխան մայրաքաղաքի վեզիր, և Մուհո՛ւբ Ալի՛ մեր պալատի երիտասարդների ուսուցիչ, քարերը պետք է տեղադրվեն Ձեր կարծիքով ամենալավ և ամենահարմարավետ վայրում, և պետք է մեր արքայական տաղանդավոր ճարտարապետներից մեկի և Ձեր հսկողությամբ որոշենք տեղը և դիրքը վերը հիշատակված եկեղեցու, արքայական Բադ-ե Ջրեշք («ծորենու այգի»²⁰⁶) այգու հետևում: Փայտից կան թղթից պատրաստե՛ք մեծ եկեղեցու մանրատիպարը, ներկայացրե՛ք նախագիծը, քանի որ մեր արքայական ցանկությունն է տեսնել այն: Այն քանից հետո, երբ մենք կզննենք այն, կհրամայենք մեր մայրաքաղաքի բոլոր պաշտոնյաներին և վարպետ աշխատողներին օգնել այս կառույցի աշխատանքների հարցում, և այն կատարյալ կլինի: Պետք է հայտնի լինի, որ ճիշտ է այս ֆարմանը շնորհիվ քրիստոնյաներին, այդ իսկ պատճառով նրանք պետք է որ գոհ լինեն»²⁰⁷:

Այս կապակցությամբ շահը ժամանակի նշանավոր խոջա Նազարին ասել է. «Վասն ձեր շինեմ աստ Էջմիածին, զի մի վասն այնմ Էջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեսցին սիրտք ձեր, և հրամայեմ գնալ բազում ուղտ և ջորի և սայլ, զի զբար և զհող այնր Էջմիածնի քանդակ բերցեն աստ, զի այնու քարով և հողով շինեսցի այս Էջմիածինս, որպէս զի առանց իմիք երկրայութեան հաստատեսցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեցելոյս»²⁰⁸:

Սակայն շահի այս մտադրությունը չիրականացավ: Խոջա Նազարը, ով մեծ հեղինակություն ուներ շահի արքունիքում, լավ գիտակցում էր Սուրբ Էջմիածնի տաճարը Սպահան տեղափոխելու՝

²⁰⁶Այս մասին հակիրճ տե՛ս նաև՝ **Դարիժեցի Ա.**, Գիրք պատմութեանց, էջ 182: Այս հրովարտակը պահպանվել է նաև Հ. Տեր Հովհանյանցի մոտ, **Տրվիանանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, էջ 52-53: ²⁰⁷*A Chronicle of the Carmelites*, v. I, p. 196.

²⁰⁸**Դարիժեցի Ա.**, Գիրք պատմութեանց, էջ 182-183:

շահի մտադրության իրականացման բոլոր քաղաքական հետևանքները համայն հայ ժողովրդի համար: Ուստի նա գործադրել է բոլոր ջանքերը, իր ողջ պերճախոսությունը՝ համոզելու շահին, որ անիմաստ է հեռավոր Հայաստանից հող ու քար կրել-բերել Սպահան՝ նոր Էջմիածին կառուցելու համար, որ տեղի հողն ու քարն էլ կբավի այդ մտադրության իրականացման հետ: «Թագաւորն ողջ կայցէ, եթէ կամք քո յօժարեսցի շինել, թող թէ ի քարէ. և զինչ հարկ է յաղագս քարի և հողոյ զայնքան աշխատութիւնս կրել, և զայնքան ծախս ծախել ի վերայ նորա, որպէս զի ի հեռու և յօտար աշխարհէ քար և հող բերել: Բաւական և բարոք է այս աշխարհիս քարն և հողն, եթէ կամիս շինել, սոքօք շինեա, և ընդունելի է մեզ»²⁰⁹:

Սակայն շահը համառեց իր մտադրության մեջ: Նա, այնուամենայնիվ, պահանջեց որոշակի քանակությամբ քարեր տեղափոխել Սպահան, որի մասին վկայում է Ա. Դավրիժեցին: Սուրբ Էջմիածնի նշանավոր քարերը քանդվեցին՝ Սուրբ Սեղանք, որի վրա մատուցվում էր Սուրբ Պատարագը, սեղանի սյունը, Ջրիստոսի իջման տեղի քարը, ավագանը, մի քար՝ բեմի հարավային կողմի աստիճանից, մի քար՝ բեմի հյուսիսային կողմի աստիճանից, չորս քար՝ եկեղեցու չորս անկյուններից՝ դռների կողմից երկու քարն մոմակալ՝ աշտանակ, որ մեռուաբերների մեծ մոմերը դնեն մեջը և վառեն, երեք ուրիշ քարեր՝ բեմի սալարկի քարերից՝ ընդամենը տասնհինգ քար տեղափոխվեց սկզբում Սպահանից դուրս Բաթուն կոչվող գյուղը, այնուհետև՝ Նոր Ջուղա (Խոջենց եկեղեցին), ապա՝ Մ. Գևորգ եկեղեցու բակ, որտեղ մինչ օրս գտնվում է դրանց մի մասը (ընդամենը յոթ քար)²¹⁰: Հանգամանքներից օգտվելով՝ կաթոլիկ կրոնավորները հափշտակում էին շահի հրամանով ավերված և լքված հայկական եկեղեցիների սրբությունները՝ սրբերի մասունքները: «Հայաստանին բռնի գաղութին վրայ, — գրում է Մ. Օրմանյանը, — ֆրանկ պատրիք, այսինքն լատին կրօնատրներ սկսած էին ցրուիլ զանազան գաւառներ ... գլխատրապէս լքեալ տաճարներէն մնացած սրբութիւններ հաւաքելու: Անոնցմէ ոմանք Կարենիս գիղի Մ. Առաքելոց վանքին մէջ Անդրէաս առաքեալի գլուխը կը գտնեն, քայց Երևանի եպիսկոպոսը վրայ կը հասնի և ձեռուընդունէն կ'առնէ:

²⁰⁹ Դավրիժեցի Ա., նշվ. աշխ., էջ 183, Տեր Յովհաննես Զ., նշվ. աշխ., էջ 53-54:

²¹⁰ Դավրիժեցի Ա., նշվ. աշխ., էջ 190, Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, էջ 48:

Ուրիշներ Մ. Հռիփսիմէի տաճարը կը պրպտեն, որ աներ ձեւ մը առած էր... Գուլիէլմոս և Հրեշտակապետ, իրենց գործ կ'ընեն Մ. Հռիփսիմէի ոսկրները ձեռք ձգել, և գաղտնի պեղումներով մպատակին կը հասնին, բայց ոսկրները եկեղեցոյն մէջտեղը հանած ատենին, վրայ կը հասնին Գրիգոր և Վարդան եպիսկոպոսներ ... »²¹¹: Դա աննկատ չէր մնում հայրենասեր հայ հոգևորականների ուշադրութայնից, ովքեր փորձում էին կասեցնել այդ երևույթը, վերադարձնել սրբերի մասունքները: Յավոք, ժամանակի կաթողիկոս Մելքիսեթը (Մելիքսեթ, Մելքիսեղեկ, Մալիք Մաղիղ)²¹² շահասեր էր և չէր փայլում հայրենասիրությամբ: Ուստի «աստվածային պատվական գանձերն» այլագգիներին վաճառելու համար նա մնաց որպէս «սնուկ սաքան խալիֆա», այսինքն՝ ոսկորներ ծախող կաթողիկոս: Նա նույնիսկ որոշել էր օգուտ քաղել դավանանքի խնդիրների շահարկումից: Կաթողիկոսը հասցրել էր մտերմանալ կաթոլիկ քարոզիչների հետ²¹³:

Մելքիսեթի՝ Պողոս V-ին ուղղած 1610թ. մայիսի 15-ի մամակը բավականին ընդարձակ է և գրված արևելյան ոճին հատուկ կատարյալ ճոխությամբ՝ «շողոքորթութեան վարժ ականջները զգուցնելու չափ»: Սակայն մամակը, ամենայն հավանականությամբ, Մելքիսեթի մտահոգացումը չի եղել, այլ՝ Չաքարիա Վանեցունը, ով Հռոմի հետ հարաբերություններ հաստատելու համար գտնվում էր այնտեղ²¹⁴: Չաքարիայի պատվիրակության հաջողությունների մասին տեղեկություններ գրեթե չկան: Սակայն Մելքիսեթի անունից Հռոմ հղած մամակն ամենևին էլ չի արդարացնում Մելքիսեթի՝ հայ եկեղեցուն հասցրած չարիքները: Ինչպէս իրավացիորեն նկատում է Հ. Տեր - Հովհանյանը, «Մելքիսեղեկ լոկ օգնական արոռակից մըն էր, և ոչ Հայ եկեղեցոյ տիրապէս ներկայացուցիչը, և իւր եպերեկի ընթացքն ալ նկատի չառնելով, նա իւրովի և առանց ժողովի, և նոյն իսկ Մայրաթոռոյ միաբանութեան կողմէն վստահութիւն չվայելելով,

²¹¹ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 2312-2314:

²¹² «Կարմեյանների տարեգրության» մեջ Մելքիսեթը բնորոշվում է որպէս անառողջ (խտաբ, հավանաբար, վերաբերում է մտածողությանը - Թ. Մ.), սակայն իր ողորմածությանը և մեծահոգությանը հարգված կաթողիկոս:

²¹³ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 2315:

²¹⁴ Նույն տեղում, էջ 2316-2317:

չէր կրնար երբեք Հայ եկեղեցոյ դաւանութեան վաւերական քարգանձն ըլլալ»²¹⁵:

«Կարմեյլանների տարեգրությունում» տեղ է գտել հակիրճ հիշատակում Ռեղեմյաւի և Բարթոլոմէոյի 1613թ. Էջմիածին կատարած այցելութեան մասին²¹⁶: Վերոհիշյալ հայերը պետք է «հերձվածող» հայերի կաթողիկոսին կամ պատրիարքին հանձնեն Պողոս V պապի ուղերձը՝ որպէս պատասխան հայերի խնդրանքին՝ կապված իրենց «ղժախտությունների» հետ: Մայր տաճարում հոգևորականների և եպիսկոպոսների ուղեկցությամբ կաթողիկոս Մելքիսեքը հանդիսավոր ընդունելություն ցույց տվեց Կարմեյլաններին, հետո թույլատրեց Հայր Ռեղեմյաւին դիմել հայ հասարակությանն ու բացատրել Սուրբ հավատքի (կաթոլիկ հավատքի-Թ.Մ.) կարևորությունը, ինչպես նաև Հռոմի պապի ցանկությունը՝ տեսնել երկու եկեղեցիների միասնությունը: Այնտեղ ընթերցվեց նաև Պողոս V-ի մամակը, որտեղ մեկնաբանված էին կաթոլիկ հավատքի հիմնական դրույթները: «Կարմեյլանների տարեգրության» հեղինակը մանրամասն անդրադառնում է հանդիպման բոլոր դրվագներին: Ըստ միաբանների հաղորդած տեղեկությունների՝ պատրիարքը, եպիսկոպոսները և վարդապետներն առանձնացան՝ քննարկելու արձարձված խնդիրները: Արդյունքում նրանք հայտարարեցին, որ բացառությամբ որոշ հոդվածների՝ ընդունելի են մնացած դրույթները: Հայր Ռեղեմյաւը ևս ոչ մի բարդություն չէր տեսնում վերը հիշատակված կետերից հրաժարվելու

²¹⁵ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 2317:

²¹⁶ «Տարօրինակ է, - գրում է անանուն հեղինակը, - որ Հայր Ռեղեմյաւը Մելքիսեքին անվանում է «պատրիարք կամ կաթողիկոս», քանի որ Էջմիածնի գահերեցների ցուցակում վերջինս հիշատակվում է որպէս կաթողիկոս, Դավիթ կաթողիկոսի օրոք (1593-1628)» ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 210): Առաքել Դավրիժեցու մոտ ևս հիշատակվում է, որ «...Դավիթ կաթողիկոսը մինչևտ կենդանի էր և կաթողիկոսական իշխանության տեր. ինքը ձեռնադրեց այն մի այլ կաթողիկոս, որի անունն էր Մելքիսեք... Դավիթը սրան ձեռնադրեց այն հույսով, որպէսզի իրեն օգնական լինի, սակայն նա եղավ խանգարիչ ու հակառակորդ ...»: Այս ժամանակահատվածում Էջմիածնի արքայի վրա բացի Մելքիսեքից ու Դավիթից նստած էր նաև Սրապիմոնը (Դարիժեցի Ա., նշվ. աշխ., էջ 57-58, տես նաև՝ Օրմանյան Մ., Ազգապատում, մասն Բ, էջ 2288-2289, Գլխան Նոր Ջուղայի Ս. Աննափրկիչ վանքի, Մասն Ա. Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705թթ.), Անթիլիաս, 2003, էջ 24-25):

հարցում²¹⁷: Անհայտ տարեգիրն այսպես է ներկայացնում Մելքիսեք կաթողիկոսի վերաբերմունքը քննարկված հարցի նկատմամբ. «Եթե այդպես է, ապա ես երդվում եմ հնազանդվել և միավորվել Սուրբ Փիթերի աթոռին՝ հետևելով մեր փառավոր առաքյալ Սուրբ Գրիգորի օրինակին»²¹⁸:

Այս հանդիպումից հետո կաթողիկոս Մելքսեքը խարդավանքի մեղադրանքով հեռացվեց պաշտոնից, իսկ Դավիթը, ում Կարմեյանները բնորոշում էին որպես «առանց հեղինակության տգետ քահանայի»²¹⁹, չչարունակեց քանակցությունները: Այս առնչությամբ Մ. Օրմանյանը գրում է. «Քայց արդարութեն չշեղելու համար պետք է նաև յայտարարել, թէ հնար չէ քնաւ Հայ Եկեղեցին մեղադրել իբր քաղաքական և կենցաղական անկումին պատճառ, և իբր պատասխանատու ազգին գլուխը եկած աղէտներուն, ... Հռոմէական եկեղեցոյ կողմէն յանուն կրօնի գործուած մեծեղեռն գեղծումները, քաական են հայոց Եկեղեցին մեղադրանքէ գերծ պահելու և իրեն դեմ խօսող անդուռն բերանները կարկելու»²²⁰:

Հայերի և Կարմեյանների բազմաթիվ քանակցություններից ոչ մեկը տևական արդյունք չունեցավ, և ոչ էլ միավորման որևէ փաստ արձանագրվեց հայոց եկեղեցու կարևոր պատմության ընթացքում:

²¹⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 210.

²¹⁸ Նույն տեղում:

²¹⁹ Կարմեյանները հաղորդում են, որ Դավիթ կաթողիկոսը 1607թ. մայիսի 12-ին վեց եպիսկոպոսի, 109 քահանայի և բազմաթիվ սարկավագների հետ ընդունել էր կաթոլիկ հավատը՝ հայտարարելով, որ դա արվել է հօգուտ հայության կարիքների: Շուտով Դավիթը մեղադրանքներ է ներկայացնում Մելքիսեքի դեմ՝ կապված Հովիսիմեի նշխարները կաշառքով ֆրանկներին հանձնելու հետ, որի արդյունքում Մելքիսեքը բանա է նկատվում, որտեղ նրան սպառնում են իր մարմնից կտրված կտորները հարկադրաբար կոչ տալ: Դահիճների հետապնդումից խուսափելու համար նա ստիպված էր շրջվել դեպի Հռոմ: Երեք տարի անց նա իրեն լիաբժեքորեն պատրաստ էր համարում ընդունելու հռոմեական եկեղեցու դոգմաներն ու ծեսերը, քանի որ նրա կարծիքով պետք է մեկ հոտ լիներ և մեկ հովիվ ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 210):

²²⁰ Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին, ԿՊ, 1911, էջ 104, *The Contribution of the Armenian Church to the Christian Witness in the Middle East, Antelias-Lebanon*, 2001, p. 180.

ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ
17-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍ- 18-ՐԴ ԴԱՐԻ ՄԿԻԶԲ ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Շահ Աբբաս Ա-ի հետնորդների (Մաֆի Ա, Աբբաս Բ, Սուլեյման, Սուլթան Հուսեյն) գործունեությունն ըստ «Կարմելյանների տարեգրության»

1633թ. միաբանության երեք ներկայացուցիչ է ուղևորվում Իրան՝ Հայր Ստեփանը (Stephen of Jesus), Կոլումբանը (Columban of the Passion), Ջոնը (John of the Cross): Կարմելյան նոր եպիսկոպոս Թիմոթի Պերեզը հույս ուներ Իսպանիայից վեց քահանա հրավիրել քղեջ հիմնելու համար, որը նախատեսվում էր, անկասկած, հայերի համար²²¹:

1634թ. եպիսկոպոս Պերեզը Մադրիդից հղված իր բազմաթիվ նամակներից մեկում (1634թ. մարտի 29) գեկուցում է, որ արաբերեն տառերով տպագրական մեքենա է ուղարկում Իրան, որն իր տեսակի մեջ միակն է և առաջինը այդ երկրում: Եպիսկոպոս Պերեզի համոզմամբ՝ դա պատմական փաստ էր: Դեռևս 1618թ. շահ Աբբաս Ա-ի հետ հանդիպման ժամանակ Հայր Ջոն Թադդևուսը ծանոթացրել էր նրան արաբերեն այբուբենին և ցուցադրել արաբերենով և պարսկերենով տպագրված նյութեր: Շահն, ի դեպ, մեծ զարմանք և հետաքրքրություն էր հանդես բերել՝ ցանկանալով ներմուծել այն իր երկիր²²²: Հայր Ջոն Թադդևուսը իր նամակում այդ մասին գրում է, որ տպագրական սարք ունենալը «մեծ առավելություն էր կրոնավորների համար ...»²²³:

Թե ինչպիսի դժվարությամբ տպագրական մեքենան Հռոմից հասավ Սպահան, հայտնի է միայն Կարմելյաններին, որի վերաբերյալ նրանք պատմում են իրենց նամակներում:

²²¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 304.

²²² Նույն տեղում, էջ 305:

²²³ Նույն տեղում:

«Կարմեյանների տարեգրության» հեղինակը հույս է հայտնում, որ «այն դեռ գոյություն ունի Իրանի տարբեր անկյուններում իր հնաժողովը և արժանի ազգային թանգարանի համար: Իսկ ինչ վերաբերում է նրան, որ Կարմեյաններն են առաջին անգամ Իրան ներմուծել գրչագիր, այս դա փաստ է»²²⁴:

Կարմեյանների վկայությամբ՝ «շահ Սաֆի Ա-ն (1629-1642թթ.) ցույց էր տալիս, որ լավ է տրամադրված բոլոր քրիստոնյաների նկատմամբ: Նա հատկապես մտերիմ էր հայերի հետ և բազմիցս այցելել էր խոջա Նազարին և Ջուղայի այլ ղեկավար անձանց, ճաշել նրանց հետ»²²⁵: Նազարը ոչ միայն վայելում էր շահի համակրանքն ու վստահությունը, այլև բարյացակամ վերաբերմունք ուներ եվրոպական առաքյալների նկատմամբ: 1629թ. Ս. Ժողովի («Հավատի միաբանություն»)՝²²⁶ խոջա Նազարին հղած նամակում կարդում ենք. «...Սեր Տերն եւ ին՝ գերամեծառ Տեարք շատ ուրախ եղան, որ կը գտնուի հող անձ մը, որ իրենց առաքեալներու հանդէպ ունի այնքան սէր եւ գոյք...»²²⁷: Նորջողայեցիները մտերմացել էին հատկապես Հայր Թադդեոսի հետ: Այսպես, երբ 1629թ. Նազարը պետք է մեկնէր Հռոմ Խ. Կեսարացին, Արիստակես վարդապետը, նույնիսկ Մովսես կաթողիկոսն իրենց որոշ ցանկությունների կատարման համար խնդրել էին Ս. Ժողովի հետ բանակցել: Հատկանշական է, որ խոջա Նազարը հայ վաճառականների համար առանց մաքսի իրենց ապրանքների արտահանման, ինչպես նաև Հռոմում հայկական դպրատուն բացելու թույլտվություն էր խնդրել: Այս հարցի

²²⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 306.

²²⁵ Նույն տեղում, էջ 308:

²²⁶ 1622թ. Գրիգորիոս XV պապը Հռոմում հիմնեց կրոնական մի մեծ հաստատություն, որը ստացավ «Հավատի միաբանություն» անունը. այն ուներ մի շարք նպատակներ՝ հեթանոսների մեջ կաթոլիկություն տարածել, ինչպես նաև՝ ոչնչացնել հերձվածները քրիստոնյաների մեջ: Պրոպագանդան բարձրագույն աստիճան էր, որին հպատակվում էին աշխարհի վրա գոյություն ունեցող բոլոր քարոզչությունները: Հավատի ծավալման այս ժողովն ուներ դրամական մեծ միջոցներ: Հայերը պրոպագանդայի առանձին ուշադրության արժանացան «հերձվածող ազգերի» թվում: 1627 թ. Ուրբանոս VIII պապը քարոզիչներ պատրաստելու համար դպրոց ստեղծեց, հիմնեց բազմալեզու մի տպարան:

²²⁷ Ալիմնան Ն., Հ. Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոս, կյանքն եւ գործունեությունը, Հանդէս ամսօրնայ հայագիտական ուսումնասիրք, քիւ 11, 12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 511-513:

առնչությամբ Ս. Ժողովը 1630թ. հուլիսի 23-ին գումարած նիստում որոշում է, որ «հայերը կարող են եկեղեցական պետության եւ ուրիշ քրիստոնեայ իշխաններու հողերու վրայ իրենց ծախսով կայաններ կառուցանել եւ փոխադրել հոն իրենց վաճառքները, գորոնք կը ցանկան տարածել քրիստոնեայ աշխարհներու մէջ... Այս թոյլտուութիւնը կշնորհուի այն վաճառականներուն միայն, որոնք կսթողիկէ են եւ կամ ըլլալ կ'ուզեն...»²²⁸:

Կարմեւյան Հայր Դիոնիսիոսը վկայում է, որ շահ Սաֆին ամենևին նման չէր իր պապին և նախորդին՝ նենգ ու երկերեսանի Աբբաս Ա-ին. նա պարզ բնավորությոյն ուներ: Շահ Սաֆիի հրամանով Կարմեւյանների առանձնաշնորհումներն ընդլայնվում և հաստատվում են²²⁹: Այս փաստը, հավանաբար, հիմք է հանդիսացել Կարմեւյան հայրերի համար դրական արտահայտվելու հիշյալ շահի մասին: Շահ Սաֆիի կառավարման շրջանում հրատարակված պապական երեք ամփոփագրերից մեկը (13.10.1637) վերաբերում էր Նախիջևանի հայերին: Այդ ամփոփագրում Հռոմի Ռոբբանոս VIII պապը բացատրում էր, թե ինչպես են Դոմինիկյանները 300 տարի առաջ հաստատվել այնտեղ, կրթել մարդկանց և հոգ տարել նրանց մասին: Ապա պապը խնդրում էր շահին իր հատուկ հովանավորության տակ վերցնել նրանց, ինչպես նաև՝ իր տիրապետության տակ գտնվող բոլոր քրիստոնյաներին: Պապի միջնորդությոյնը հիմքեր ուներ, քանի որ Նախիջևանի հայերի և Կարմեւյանների միջև շփման եզրեր կային:

Օրինակ, երբ 1627թ. Սպահանի մենաստանը ֆինանսական լուրջ խնդիրներ ուներ, Խաչատուր Վարդապետը մեկ բուման (16 սկուդի) է տրամադրում Կարմեւյաններին: Ի պատասխան՝ վերջիններս Սուրբ Զատիկի օրը կայացած պատարագի ժամանակ շնորհավորանքներ են հղել խոջա Նազարին և Խաչատուր Վարդապետին:

1629թ. նոյեմբերի 25-ին Հայր Դիմասը²³⁰ միաբանության պրեֆեկտին՝ Կարդինալ Լուդովիչիին (Ludovisi) ուղղած նամակում գրում է. «... Ձերդ Սեծությանը հղած նախորդ նամակում տեղեկացրել

²²⁸ Ալիմեան Ն., Հ. Մովսէս Գ. Տառաքի կարողիկոս ..., էջ 514:

²²⁹ A Chronicle of the Carmelites, v. I, p. 316-317.

²³⁰ Հայր Դիմասը կատարելապես տիրապետում էր հայերեւին. նա անկեղծորեն հետաքրքրված էր հայերով և ընդհանրապես արևելյան քրիստոնյաներով:

էի, որ հայերի նոր պատրիարք և վարդապետ Մովսեսը (Էջմիածնի կաթողիկոս Մովսես Սյունեցի (1629-1632) -Թ.Մ.) ժամանել է, և ես նրա հետ քննարկել եմ մեր Սուրբ հավատին առնչվող հարցերը, ինչպես Դուք էիք ինձ հանձնարարել: Իսկ հիմա, երբ նա ժամանել է Ջուղա, ես մի քանի անգամ նրա հետ քննարկել եմ խնդրո առարկան, և չնայած նա ասել է, թե չի ցանկանում, որ մեր մեջ լինեն տարբերություններ, այնուամենայնիվ, պետք է խորհրդակցի մահ մյուս վարդապետների հետ, երբ ժամանի Երևան, ուր գտնվում է պատրիարքական աթոռը, և այնուհետև ինձ գրի: Մակայն ես գտնում եմ, որ պետք է լինեմ այնտեղ, որտեղ քննարկվելու է այդ հարցը, քանի որ նա ինքնուրույն ոչինչ չի կարող որոշել: Միևնույն ժամանակ, հայ տղաներին մեր լեզուն սովորեցնելու հնարավորությամբ մենք ճանապարհ ենք հարթում դեպի մեր Սուրբ հավատն ու մեր սովորույթները, և մենք կշարունակենք այդպիսով ձեռք բերել արդյունքները տղաների հետ, ինչը չենք կարող անել մեծահասակների հետ... Մովսեսը գտնում է, որ ինչպիսի դժվարություններ էլ ծագեն պատրիարքների ու վարդապետների միջև, ինքը միշտ էլ կաջակցի կաթոլիկ վճռին»²³¹:

Շուտով Մովսեսը նամակով Հայր Դիմասին հրավիրում է Երևան, սակայն հայոց պատրիարքի վերահաս մահը 1632թ. խափանում է այդ հանդիպումը: 1633թ. նրան փոխարինում է վարդապետ Փիլիպոսը (Փիլիպպոս Աղբակեցի (1633-1655)-Թ.Մ.)²³²:

Անդրադառնալով ջուղահայերի և Կարմեյանների հարաբերություններին՝ նշենք, որ Կարմեյաններն առաջին անգամ Նոր Ջուղա են մտել 1625թ., որոնց հաջորդել են Կապուչինյան, Հիսուսյան և Դոմինիկյան կրոնավորները: 1640-ական թվականներից քարոզիչներն ակնհայտորեն սկսում են կենտրոնանալ Ջուղայում Տուն հիմնելու գաղափարի շուրջ: Հայր Դիոնիսիուսի՝ Սպահանից հղված նամակում այդ կապակցությամբ ասվում էր. «... Ինչ վերաբերում է Ջուղային, ապա կասեմ, որ սպասելիքներն անփոխարինելի կլինեն, մինչդեռ նույնքան դժվար է այնտեղ հաստատվելը: Եթե նույնիսկ արտոնագիր ձեռք բերենք, ապա արդյունքներն անորոշ կլինեն, որովհետև յուրաքանչյուրը զբաղված է

²³¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 319-320.

²³² Նույն տեղում, էջ 321:

իր սեփական հետաքրքրություններով...»²³³: Հայր Բալթազարն այս առնչությամբ պատմում է իր տպավորությունների մասին. «Երբ առաջին օրը Կարմեյաններն այցելեցին ջողահայերին, վերջիններս հյուրընկալեցին նրանց ու անչափ բարություն ցուցաբերեցին: Տասնհինգ օր հետո, երբ Հիսուսյան հայրերը Սպահան եկան, իսկ այնուհետև Նոր Ջուղա, և երբ մեկ տարի անց այնտեղ ժամանեցին Կապուչինյանները, հասարակությունը, այդքան շատ եվրոպացի կրոնավորների տեսնելով, նախ զարմանքից քար կտրեց, և ապա՝ շատ կարճ ժամանակ անց, մի փոթորիկ բարձրացավ՝ առաջացնելով իրարանցում ողջ քաղաքում»²³⁴: Կարմեյան հայրերը խաղաղություն և հանգստություն էին վայելում Նոր Ջուղայում՝ ընկերամալով հատկապես Ջուղայի քաղաքագլխի՝ Սաֆրազի (Սարֆրազ) հետ, ով, ի դեպ, Նազարի եղբայրն էր, իսկ ջողայեցիները, իրենց հերթին, բարություն էին ցուցաբերում «պապի Կարմեյան հայրերի» նկատմամբ (նրանք այդպես էին անվանում Կարմեյաններին)²³⁵:

1640թ. Բաղդադի Կարմեյան եպիսկոպոս Հայր Բերնարդը մեկնում է Էջմիածին՝ հայոց կաթողիկոսի մոտ: Նրան ուղեկցում էին Ֆերդինանտ Գիորիդան (Ferdinand Gioerida), ով իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալլեի կնոջ եղբորորդին էր (ուսմ կրտսել էր Հայր Դիմասը Բաղդադում 1616թ. նոյեմբերի 26-ին), քահանաներ, բարգմանիչ և այլք: Եպիսկոպոս Բերնարդը Էջմիածնում հայոց կաթողիկոսին է հանձնում Ուրբանո VIII պապի ուղերձը²³⁶:

²³³ Ջամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, մասն Բ, էջ 95:

²³⁴ "A Chronicle of the Carmelites", v. II, p. 1077.

²³⁵ Նույն տեղում, հ. II, էջ 375:

Նոր Ջուղայում XVII դարի կեսերին բարձր դիրք գրավող հայ առևտրական գերդաստաններից էին Սաֆրազյանները: Նոր Ջուղայի քաղաքագլուխ խոջա Սարֆրազի ժամանակ գերդաստանը բավականին ազդեցիկ դիրք ուներ. Սարֆրազը շահի արքունիքում և հայ ժողովրդի մեջ մեծ հեղինակություն էր վայելում: Իգուր չէ, որ սկզբնադրությունում նա հիշատակվում է հատկապես որպես «իշխան մերյո ազգիս հայոց», սև՛ս Չոքանյան Պ., Հայ-Ֆենոլիական հարաբերությունների պատմությունից (նոր վավերագրեր), Մեքոավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Ե., 1998, հ. XVII, էջ 194-195:

²³⁶ «Ուրբան VIII պապը պատվեցի եղբայրներ՝ ... Հայոց պատրիարք (ձեռագրում երբևէ անհարթությունների պատճառով չի նշվում պատրիարքի անունը, սակայն, հավանաբար, խոսքը վերաբերում է կամ Մովսես III-ին կամ նրան հաջորդած Փիլիպոսին) ... (կրկին բերություն) Ջուղայի (ամենայն հավանականությամբ նշված է եղել Ջուղայի արքեպիսկոպոսի անունը) և Արիստակես Վարդապետ:

Բարձրացվեց Հռոմի հետ հայերի միավորման հարցը, որը քննարկվել էր նախորդ պատրիարքի օրոք՝ 1629թ.: Եպիսկոպոս Բերմարդը կաթողիկոսին հանդիպում է եկեղեցում՝ շրջապատված իր վանականներով, այնուհետև նրան հրավիրում են սեղանատուն, ուր նստած էին հայ եպիսկոպոսներն ու վարդապետները: Տասն օր անց միայն կաթողիկոսը հայերեն սովորելու առաջարկ է անում Բաղդադի եպիսկոպոսին՝ նպատակ ունենալով իրենց քննարկումներն անցկացնել առանց բարձմախիչների օգնության: Կաթողիկոսի նման հարգալից վերաբերմունքը, բնականաբար, ճանապարհ էր հարթում միավորման մերժումը հնարավորինս մեղմ և առանց վիճարանությունների ներկայացնելու համար: Եվ երկար ու անօգուտ քննարկումներից հետո Բաղդադի եպիսկոպոսը կաթոլիկ հայերի արքեպիսկոպոսի հրավերով Նախիջևան է ուղևորվում: 1640 թ. մայիսին նա վերադառնում է Թավրիզ, ուղևորվում՝ Սուլթանիե,

Պատվելի եղբայրներ և սիրելի որդիներ՝ ողջույններ և օրհնանքներ ... Ինչպիսի սիրով են հոռմեական միապետները՝ մեր նախնիները, վերաբերվել ողջ հայոց ազգին... Մեծ կարևորություն է, որ հայ եպիսկոպոսներն ու քահանաները կարողիկ եկեղեցու սովորույթների հետ ներդաշակվե լինեն... Հետևելով Կղեմես VIII և Պողոս V պապերի օրհնակին, ուղարկում ենք միևնույն միաբանության Դոմինիկ, Մաբուս, Եվգենիուս, Էփիֆանիուս հայրերին, որ հաստատվեն Չեր մեջ... Մենք մեր նախնիներին չենք զիջում իրենց բարյացակամությամբ դեպի հայերը, քանի որ շատ ենք ցանկանում այս միավորումը և մեր պատվելի եղբայրներ կարդիմալների կարծիքների համաձայն, ուղարկում ենք նաև Հայր Ջոն Թադեոսին, ում Դուք ամենամեծ պատճառներն ունեք մեծագույն սեր տաճելու արքայական մայրաքաղաք Սպահանի եպիսկոպոսական արժանապատվությամբ զարդարված: Եվ մենք ավելացնում ենք նաև Հայր Թիմոթիին... Մեր անումից նրանք ավելի ամբողջական կներկայացնեն հոռմեական եկեղեցու և Չեր ազգի միավորման կարևորությունը... Չեր լեզվով գրված և Գրիգորիուս XIII-ի հրամանով Հռոմում հրատարակված գրքում (տոն օրերին, պատերին նվիրված), որ վերը հիշատակված եպիսկոպոսները կրեքեն, կիմանաք, որ Ջատիլը միշտ էլ տոնվել է մեր կողմից և նրանց կողմից, ովքեր օգտագործել են իյն օրացույցը...

Եվ բացի այդ, երբ հայ վանականներն ու առևտրականները ժամանել են Հռոմ, մենք հոգ ենք տարել նրանց մասին և բարյացակամ վերաբերմունք ցույց տվել...

Ինչ օգուտ կարող ենք ունենալ մենք Չեր ազգից, կրացատրեն եպիսկոպոսները, կհաղորդակցվեն բանավոր և գրավոր: Մենք սիրով հանձնարարում ենք նրանց պահպանել Չեզ և հոգ տանել Չեր մասին և խնդրում, որ ամեն ինչ անեք, ինչ գիտեք նրանց գործին օգուտ տալու համար, և Դուք կաջակցեք նրանց պաշտպանությանն ու ցույց կտար Չեր արժանապատվությունը: Ավելին, հավատով մտտեցեք այն ամենին, ինչ նրանք կանենում են, 1633թ, հունվարի 9» ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 302):

Սպահան²³⁷: Հայր Բերնարդը 1640թ. օգոստոսի 22-ին շահ Սաֆիի հետ հանդիպման ժամանակ նրան նվիրում է Ուրբանոս VIII պապի դիմանկարը, որը շահն ընդունում է մեծ գոհունակությամբ: Հայր Բերնարդը ցանկանում էր մեծ տպավորություն թողնել շահի վրա իր փայլուն գիտելիքներով, որը նրան հաջողվում է:

Օգտվելով շահի բարյացակամ վերաբերմունքից՝ Հայր Բերնարդը նամակով հիշեցնում է շահին Աբբաս Ա-ի՝ Սպահանում եկեղեցի կառուցելու թույլտվության մասին:

Շահը եպիսկոպոսին պատասխանում է, որ ինքն անպայման պետք է իմանար իր պապի կողմից երբևիցե նման խոստում տված լինելու մասին, սակայն այդպիսի բան իրեն չի հաղորդվել: Ինքը կարող է միայն իր ծախսերով Սպահանում Տուն հիմնել՝ եկեղեցու կառուցումը թողնելով ապագային: Իրականում, շահն ամենևին էլ ցանկություն չունեի ո՛չ Տուն հիմնելու, ո՛չ էլ եկեղեցի կառուցելու թույլտվություն տալ, քանի որ արդեն իսկ երեք եկեղեցի կար կառուցված²³⁸:

Այսպիսով՝ դժվար չէ նկատել, որ շահը, քարոզիչների նկատմամբ ցուցաբերելով բարյացակամություն, ամենևին էլ հակված չէր պապից ժառանգած երկիրը հեշտությամբ նետել կաթոլիկության գիրկը: Նա սիրալիր էր, քաղաքակիրթ, միևնույն ժամանակ հավատարիմ էր իր կրոնին և պետական մտածողությանը:

Սեֆյան շահ Աբբաս Բ-ի (1642-1666թթ.) գահակալության տարիներին Կարմելյանները դեռևս շարունակում էին իրենց գործունեությունն Իրանում: Նոր շահից նրանց անիրաժեշտ էր ձեռք բերել արքայական արտոնություններ՝ կապված իրենց կարգավիճակի հետ, որն էլ իրականացրին Կարմելյան հայրեր Չարլզը (Charles of Jesus Mary) և Ֆելիքսը (Felix of S. Antony): Նրանք 1642թ. օգոստոսին մեկնեցին Ղազվին, ուր հանդիպեցին շահ Աբբաս Բ-ին և խնդրագիր ներկայացրին նրա նախորդի՝ շահ Սաֆի Ա-ի տրամադրած արտոնությունները հաստատելու վերաբերյալ²³⁹:

Թեև Աբբաս Բ-ին ժամանակակիցները բնորոշում են որպես թուլակամ, հարբեցող և վավաշուտ շահի, այնուամենայնիվ, նրա օրոք

²³⁷ "A Chronicle of the Carmelites", v. 1, p. 343-344.

²³⁸ Նույն տեղում:

²³⁹ Խոսքը, բնականաբար, վերաբերում էր մենաստանների հիմնելուն, ազատորեն տեղաշարժվելուն և այլն:

Իրանը, թեև արտաքուստ, բայց ապրում էր վերելքի շրջան: Նրա մասին դրական է արտահայտվում Մ. Թադիադյանը՝ գրելով. «Մա էր խիստ առ բռունս, և հեզ առ աղքատս, քաղցրութեամբ ականէր առ ամենայն հաւաստ, և սէր և խնամ զմախահատուն ցուցաներ առ Զրիստոնեայս, զորոյ ընդ աթոռոյ և զանունն ժառանգէր»²⁴⁰:

Ըստ Կարմեյանների՝ շահ Աբբաս Բ-ի և եվրոպական կրոնավորների, այդ թվում՝ Կարմեյանների միջև մտերմություն կամ ուղղակի բանակցություններ Սպահանում տեղի չունեցան, մի բան, որը նկատելի էր նրա նախորդների օրոք: Դա կարող էր մի քանի հանգամանքի հետևանք լինել:

1. Այլևս չկար նախկին թշնամությունն Օսմանյան կայսրության և Իրանի միջև:
2. Եվրոպական տիրակալներն այլևս օգնություն չէին փնտրում Արևելքում օսմանցիների դեմ՝ հանձինս կաթոլիկ հոգևորականների, ովքեր կարող էին օգտակար լինել որպես դեսպաններ և թարգմանիչներ:
3. Շահին անհրաժեշտ չէին օտարերկրյա հոգևորականների մատուցելիք ժառայությունները՝ Եվրոպայի հետ հարաբերությունների ընդլայնման համար:

1643թ. Հայր Դիոնիսիոսը միաբանությանը տեղեկացնում է, թե հայ առևտրականները, «բավականություն ստանալով Եվրոպայի կաթոլիկ երկրների առավելություններից և հարստացած, վերադառնում են Ջուղա՝ կծոտելու իրենց կերակրած ձեռքերը»²⁴¹: Միևնույն ժամանակ նշում է, որ շատ ջուղահայեր քարոզիչների կարիք ունեն, քանի որ չեն գոհանում իրենց եպիսկոպոսներից ու քահանաներից, հետևաբար պատրաստակամ են ընդունելու կաթոլիկ հավատքի ամեն մի ճշմարտություն: Կարմեյանների հավաստմամբ հայերը «ենթարկված» էին պարսից իշխանությանը, իսկ շահին, բնականաբար, այնքան էլ հաճելի չէր նրանց կաթոլիկացումը, քանի որ Իրանում կաթոլիկություն ընդունել, նշանակում էր ոչ այլ ինչ, եթե ոչ՝ «Ֆրանկ» («կաթոլիկ», «եվրոպացի») դառնալ²⁴²:

²⁴⁰ Թադիադյան Մ., Պատմություն Պարսից, հ. Ա, էջ 176:

²⁴¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 376.

²⁴² Նույն տեղում:

Ուրբանոս VIII պապը, որն իր նախորդների նման հատուկ հետաքրքրություն էր ցուցաբերում քարոզչական առաքելությունների և շահերի հետ հարաբերությունների նկատմամբ, մահացավ 1644թ.: Մեր կարծիքով՝ շահ Աբբաս Բ-ի գահակալության տարիներին Կարմեյան հայրերը զիջում էին իրենց նախորդներին Իրանի մասին ակտիվ տեղեկություններ տալու հարցում: Կարմեյանների նամակները շատ բան չեն հաղորդում այս շրջանի Իրանի պատմության վերաբերյալ²⁴³: Այսպես՝ Կարմեյաններն իրենց նամակներում տեղեկացնում են տարաբնույթ իրադարձությունների մասին, որոնցից, օրինակ, մեկը վերաբերում է հայերի և քրիստոնյա սիրիացիների նկատմամբ անհանդուրժողականությանը²⁴⁴:

Շուտով նկատելի է դառնում շահ Աբբաս Բ-ի պատրաստակամությունը՝ շարունակելու իր պապի՝ Աբբաս Ա-ի կամ հոր՝ Սաֆի Ա-ի գործը՝ օսմանցիների դեմ պայքարը, ինչպես նաև Բաղդադի վերագրավումը: 1645թ. օսմանցիներն սկսեցին իրենց նվաճողական քաղաքականությունը Կրետե կղզու նկատմամբ: Կրետեի (Կանդիայի) պատերազմը (1645-1669) մղվում էր Միջերկրական ծովի արևելյան ափերին իշխելու համար: Կրետե կղզին Հունաստանում Վենետիկի հանրապետության վերջին տիրույթն էր հանդիսանում: Օսմանցիների համար այն ռազմավարական կարևոր նշանակություն ուներ, քանի որ պաշտպանում էր Էգեյան ծովի հարավային մատույցները²⁴⁵: Այս առնչությամբ Ինոկենտիոս X (Pamfilo (1644-1655)) պապն անհրաժեշտ համարեց նամակ հղել Աբբաս Բ-ին՝ անդրադառնալով իրենց ընդհանուր հետաքրքրություններին: Դա վերաբերում էր թուրքական նվաճումների հնարավոր քացասական հետևանքներին, իսկ Կարմեյանների ու շահի միջև հարաբերությունների ստեղծումը կարող էր վերջ դնել «ճերմակ վանականների» գործունեությանը²⁴⁶:

²⁴³ A Chronicle of the Carmelites, v. I, p. 352-353.

²⁴⁴ Նույն տեղում, էջ 353:

²⁴⁵ Քայքայության Վ., Օսմանյան կայսրության պատմություն, էջ 282:

²⁴⁶ A Chronicle of the Carmelites, v. I, p. 356.

Չսպասելով Արքայա Բ-ից իր նամակի պատասխանին²⁴⁷։ Ինոկենտիոս X-ը 1647թ. օգոստոսի 31-ին կրկին նամակ է հղում՝ կոչ անելով ընձեռնված հնարավոր ժամանակը և առիթը բաց չթողնել արքայական կամքն ու նվաճողական բազուկներն ընդհանուր թշնամու դեմ ուղղելու համար. «... Բայց,– գրում է Ինոկենտիոս X-ը,– քանի որ մենք ոչ մի պատասխան չստացանք Ձերդ պայծառափայլությունից, ենթադրում ենք, որ հնարավոր է նամակը կորած լինի։ Դուք պարզորեն հասկանում եք, թե ինչպիսի առավելություն և օգտակարություն ունի ուժեղ և հաջողակ բանակով թշնամու դեմ գրոհելը, երբ նրա ուշադրությունը բևեռված է այլ հարցի վրա... Օսմանցիները նկատելիորեն թուլացած են և ջարդված ցամաքում ու ծովում, քանի որ պատերազմում են վենետիկցիների դեմ։ Նրանց նկատմամբ հաղթանակը Ձեր անունը և պարսից կայսրության փառքը բարձր կպահի»²⁴⁸։

Պահպանվել է պարսից շահի պատասխան-նամակի բնագիրը, ըստ որի՝ շահն ակնհայտորեն տրամադրված չի եղել խախտել օսմանցիների հետ դաշինքը։ «Կարմեյանների տարեգրությունը», այսպիսով, վկայում է, որ Արքայա Բ-ն և իր վեզիրները սուլթանի հետ պատերազմելու մտադրություն չեն ունեցել։ 1657թ. փետրվարի 24-ին Կարմեյանները հաղորդում են հետևյալը. «... Պարսից շահը թուրքերի դեմ պատերազմելու ոչ մի ցանկություն չի դրսևորում...»²⁴⁹։

Ինոկենտիոս X-ին հաջորդած Ալեքսանդր VII (1655-1667) պապը, ում անվանում էին «հիասքանչ», 1656թ. փետրվարի 18-ին նույնպես նամակ է հղում շահին, որտեղ ուղղակիորեն բացատրում է իրենց «աստվածահաճո» գործունեության կարևորությունը։ Նամակի հակիրճ բովանդակությունը հնարավորություն է տալիս առավել հանգամանորեն հասկանալու Հռոմի նպատակները. «... Ձերդ

²⁴⁷Այն փաստը, որ Արքայա Բ-ն, իրոք, պատասխանել է պապի նամակին, ակնհայտ է. այդ է վկայում Հայր Ֆերդինանտ Գլորիոյան՝ նշելով, որ «... Ինքը մեկնել է պարսից շահի մոտ պապի և Վենետիկի հանրապետության նամակներով և վերադարձել Հռոմ պատասխան-նամակով, ներկայացնելով այն պապին...» ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 356)։

²⁴⁸"A Chronicle of the Carmelites", v. I, p. 356-357.

²⁴⁹Նույն տեղում, էջ 355-357։

Մեծութուն, մենք ո՛չ ոսկի ենք փնտրում, ո՛չ էլ երկրային հետաքրքրությունների նկատմամբ հավակնություններ ունենք: Պարզապես ցանկանում ենք ազգերի մեջ տարածել անփնտրելի մի հարստություն, որը հենց Ինքը՝ Քրիստոսն է ...»²⁵⁰: Իրան ուղարկելով Բոկոսն Կարմեյան կրոնավոր եղբայր Ժոզեֆին (Josef of S. Mary)՝ Ալեքսանդր պապն իր մամակում խնդրում է ընդունել նրան մեծագույն բարությանը և հոգատարությամբ՝ հույս հայտնելով, որ շահը երբեք չի զղջա վերոհիշյալ կրոնավորի նկատմամբ դրսևորած բարյացակամ վերաբերմունքի համար²⁵¹:

Որոշ հեղինակներ Արքաս Բ-ին ներկայացնում են որպես քրիստոնեության նկատմամբ հանդուրժող և բարեհաճ շահի. օրինակ՝ Կրուզինսկին կարծում է, որ նա մեծ ու ազնիվ հոգի ուներ, շատ բարի էր օտարների նկատմամբ և բացեիբաց հովանավորում էր քրիստոնյաներին²⁵²: Մինչդեռ Կարմեյանների հաղորդած տեղեկությունները խիստ տարբերվում են: Այսպես, օրինակ, Հայր Դ-իոնիսիուսի՝ 1646թ. մամակում հանդիպում ենք քրիստոնյաների դժգոհությանը, որն առաջացել էր 1652թ. շահի հրամանով Հին Ջուղայի մոր ավերման հետևանքով²⁵³: 1657թ. Կարմեյան կրոնավորը շահ Արքաս Բ-ի մասին գրում է. «... Կարող եմ ասել, որ պարսից շահը նետել է իր դիմակը, և իր սրտի մաղձը տեսանելի է: Նա հրամայել է բոլոր հրեաներին (շուրջ հարյուր հազար) և մանդեականներին մահմեդականություն ընդունել: Այս հրամանը վերաբերում էր նաև հայերին և մյուս քրիստոնյաներին...»²⁵⁴:

Կարմեյաններն իրենց մամակներում մեծ զայրույթ ու հիասթափություն են դրսևորում Արքաս Բ-ին գովերգող հեղինակների նկատմամբ. նրանց կարծիքով իսկական սուտ են այն բոլոր խոսքերը, որ շատ հեղինակներ ասում են շահի մասին՝ իբր «մեծ ու ազնիվ հոգի ունի, շատ բարի է, աջակցում է օտարականներին և մասնավորապես քրիստոնյաներին...»²⁵⁵:

²⁵⁰ A Chronicle of the Carmelites, v. I, p. 363.

²⁵¹ Նույն տեղում, էջ 363-364:

²⁵² Krusinski J. T., The History of the Late Revolutions of Persia, v. I-II, N. Y., 1973, p. 52.

²⁵³ A Chronicle of the Carmelites, v. I, p. 364.

²⁵⁴ Նույն տեղում, էջ 365:

²⁵⁵ Նույն տեղում:

Հայր Դիոնիսիոսը նկատում է, որ շահ Աբբաս Բ-ի մամնօրինակ քայլի արդյունքում Կարմեյան հայրերն ստիպված կլինեն հեռանալ Իրանից:

17-րդ դարում Արևելքում և մասնավորապես Իրանում տեղի ունեցող կրոնական բռնություններին անդրադառնալով՝ Լեոն գրում է. «Հռոմի պապն իր անթիվ գործակալներով չէր համարձակվում դիմադրել մահմեդականության այս ահավոր արշավանքին: Կաթոլիկ պրոպագանդայի առջև բացված միակ գործունեությունն էր քրիստոնյաներին որսալը...»²⁵⁶:

Այս իրողությունը հաստատող օրինակների մենք հանդիպում ենք «Կարմեյանների տարեգրության» մեջ: Հայր Կորնելիուսի՝ Սպահանից ուղարկված մամակում կրոնավորը ցավով նշում է, թե իրենց Սուրբ հավատի համար հեռանկարներն այնքան էլ գոհացուցիչ չեն²⁵⁷: Նման օրինակներից է նաև Հայր Ֆրենսիսի՝ Շիրազից ուղարկված մամակը. «Էէթեմադ-ուդ դովլեն»²⁵⁸, ով անչափ բշտամարք է տրամադրված քրիստոնյաների նկատմամբ, վտարել է նրանց Սպահանից: Ջողայում հայերին և հրեաներին ստիպել է մահմեդական դառնալ: Շատ հայեր մահմեդականություն են րնդունել...»²⁵⁹:

Հայտնի է, որ 17-րդ դարում Իրանում այլազգիների կրոնավիճությունն իրականացվել է ինչպես բռնի, այնպես էլ «կամավոր» ձևերով. Լեոյի վկայությամբ դեռ շահ Աբբաս Ա-ի օրոք «բռնի իսլամացումներ էին կատարվում այնտեղ տարված հայ գաղթականության մեջ: Այս փորձերը կատարվում են և նրա հաջորդների ժամանակ»²⁶⁰:

²⁵⁶ Լեո, Երկերի ժողովածու, գիրք I, հ. 3-րդ, Ե., 1969, էջ 343:

²⁵⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 366.

²⁵⁸ **اعتقاد الدوله** (արաբ.) – բառացի նշանակում է «պետության վստահություն»: Այսպես էր կոչվում պետության մեծ վեզիրը, ում անվանում էին նաև «մեծ վեզիր». նա վերահսկում էր երկրի բոլոր վարչական և ֆինանսական գործերը՝ կատարելով նախարար-նախագահի, արտաքին գործերի նախարարի գործառույթները:

²⁵⁹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 366.

²⁶⁰ Լեո, Երկերի ժողովածու, գիրք I, հ. 3-րդ, էջ 344, տե՛ս նաև՝ Փափազյան Հ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Ե., 1956, N 3, էջ 87:

Այս օրերի նկատմամբ Ալեքսանդր VII պապի վերաբերմունքը արտահայտված է նրա՝ 1658թ. սեպտեմբերի 21-ի մամուլում. «Ձերդ արքայական մտքի նկատմամբ պարուրված ենք սիրով և մասնավորապես Ձեր արդարությամբ և եզակի վերաբերմունքով մեր ենթակաների նկատմամբ, ուստի մեծ ցավով լսեցինք, որ Ձեր տերության որոշ մասերում մի հաստատուն սովորույթ կա, որի միջոցով շփոթություն և դժբախտություն եք առաջացրել: Ուստի նրանք, ովքեր կրոնափոխ են լինում նյութական անհրաժեշտությունից ելնելով, իրենց սրտով չեն ընդունում»²⁶¹: «Ակնհայտ է, - գրում էին Կարմեյանները, որ մեթոդները հեռու էին կատարյալ կամ հաջողված լինելուց. շատ հայեր, վրացիներ, չեքեզներ, ասորիներ, հրեաներ, մանդեականներ, զրադաշտականներ, գրկված լինելով սեփական քահանաներից, երկրպագության վայրերից, ընդունում էին մահմեդականություն (օրինակ՝ ամուսնությունների միջոցով)»²⁶²:

Ալեքսանդր VII պապի՝ 1655թ. սեպտեմբերի ամփոփագրում արձանագրված էր այն փաստը, որ առաքելության աշխարհիկ և հոգևոր ղեկավարումն անցնում է «Հավատի միաբանությանը»: Դա, բնականաբար, անհանգստացնում է հայերին, որոնց կարծիքով «Հավատի միաբանությունը» չէր կարող ղեկավարել առաքելությունները:

Կարմեյաններն այդ մասին իմացան Իրանում. Հայր Դիոնիսիուսը 1656թ. նոյեմբերի 20-ի իր մամուլում գրում է. «... Բոլոր առաքելությունները վերադառնալու թույլտվություն են ցանկանում ստանալ...»²⁶³: Կարմեյանները հաղորդում էին, որ իրենք մեկուսացված են իրենց վանահայրերից, իսկ Հայր Կորնելիուսը 1657թ. փետրվարի 24-ի մամուլում դժգոհում էր. «Մենք այստեղ չգիտենք, թե ինչպես ենք ապրելու և ում ենթականերն ենք լինելու: Ինչ վերաբերում է ինձ, ես մախրնտրում եմ վերադառնալ, քան ծառայել «Հավատի միաբանությանը»...»²⁶⁴: Սակայն մինչև 1658թ. հունիսը իրադարձությունների ընթացքը փոխվում է, և կրոնավորները ոչ միայն չեն լքում, այլև ամրապնդում են իրենց դիրքերը:

²⁶¹"A Chronicle of the Carmelites", v. I, p. 367.

²⁶²Նույն տեղում:

²⁶³Նույն տեղում, էջ 371:

²⁶⁴Նույն տեղում:

1641-1654թթ. ընթացքում միաբանությունը կորուստներ ունեցավ. Հայր Ավգուստինը, ինչպես նաև Կարմելյան երախտավոր մի քանի կրոնավորներ (Dominic of Christ, Dominic of S. Mary, Dominic of S. Nicolas) տարբեր պատճառներով մահացան: 1650թ. Սպահանում կար ընդամենը ինը, իսկ 1651թ.²⁶⁵ ութ կրոնավոր, որոնցից երեքն այնքան գառամյալ էին, որ ի վիճակի չէին թողնել Տունը²⁶⁵: 1651թ. Հայր Ֆելիքսը հավաստում է, որ Սպահանի Տունը վերածվել է հիվանդանոցի:

Շահ Աբբաս Բ-ի օրոք էլ Կարմելյանները շարունակում էին իրենց գործունեությունը մահմեդականների շրջանում: Դրավայություններից է 1649թ. հունվարի 17-ին Սպահանից հղված նամակը, որտեղ հիշատակվում է. «... Փնտրելով փոքրիկ մահմեդական երեխաների, ովքեր հիվանդ էին, և մոտալուտ մահը սպառնում էր նրանց՝ հենց նույն վայրում սրբազան ջրով և ավետարանով մաքրագերծում էինք անհրաժեշտ օրհնանքներով, քրիստոնեացնում ու երկինք ուղարկում: Մինչև այժմ ամեն ինչ լավ է, և երկու տարվա ընթացքում երկինք ենք ուղարկել ավելի քան երկու հարյուր մահմեդական երեխա»²⁶⁶:

Թեև հանրահայտ է, որ մահմեդականները բավականին ստուր են կառչած իրենց հավատքին, այնուամենայնիվ, թեպետ թվով քիչ, բայց եղել են նաև դեպքեր, երբ մահմեդականները հարել են կաթոլիկությանը: Այսպես, օրինակ, բավականին հարուստ մի երիտասարդ, ով տիրապետում էր մի քանի լեզուների, պատրաստակամություն էր հայտնել մկրտվելու: Երեք ամիս ուսուցանելով նրան քրիստոնեական հավատք՝ Բաղդադի եպիսկոպոսը մկրտում է նրան Փոլ Արմանդ անունով²⁶⁷:

Հարկավ, կրոնավորների մեջ սուկա էին տարակարծություններ՝ կապված այն քանի հետ, որ եկեղեցին չպետք է թույլատրեր առանց ծնողների համաձայնության մկրտել նրանց երեխաներին: Այնուամենայնիվ, մկրտության այդ եղանակը չարգելվեց:

²⁶⁵ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 372.

²⁶⁶ Նույն տեղում, էջ 395:

²⁶⁷ Նույն տեղում, էջ 345:

Մահմեդական երեխաների մկրտությանը վերաբերող փաստերը բազմաթիվ են «Կարմեյան տարեգրության» էջերում: Եղբայր Ալեքսանդրը գրում է, որ ինքն իր սեփական ձեռքերով մկրտել է 2916, Հայր Դիոնիսիոսը՝ 2000, մյուս հայրերը՝ 900 երեխա և այլն: Ալեքսանդրը նկարագրում է, որ երբ ինքը շրջում էր գյուղերով, բնակիչները, դուրս գալով տներից, երեխաներին գրկած սպասում էին, որ ինքն անցնեք, և խնդրում էին, որպեսզի շոշափեր երեխաներին, մյուսները ցանկություն էին հայտնում համբուրելու իր զգեստը կամ խնդրում էին, որ ավետարանը դնի նրանց գլխին²⁶⁸: Մահմեդականների մկրտությունը, բնականաբար, հակազդեցություն էր առաջացնում մուղեանդ մահմեդականների միջավայրում և նրանք, ովքեր կաթոլիկություն էին ընդունել, հալածվում էին ու ենթարկվում մահապատժի:

Շահ Աբբաս Բ-ի գահակալության վերջին տարիներին դրությունը փոքր-ինչ փոխվել էր. Կարմեյան Հայր Ժոզեֆը՝ Հիերապոլիսի եպիսկոպոսը, Հնդկաստանից Իրան իր ճամփորդության վերադարձին 1658թ. զեկուցել է, որ միայն վեց հայ կաթոլիկ ընտանիք է մնացել Սպահանում, մնացածները հերձվածողներ են²⁶⁹:

Մասնավորեցնենք, որ «Կարմեյանների տարեգրության» մեջ չի նշվում, քե մկրտվելու ցանկություն հայտնողները մահմեդականներ էին, քե քրիստոնյաներ, այլ ընդհանրապես նշվում է «երեխաներ, ովքեր գտնվում էին մահվան սպառնալիքի ներքո»²⁷⁰:

Հայր Ֆելիքսը 1658թ. դեկտեմբերի 20-ին Շիրազից Հոմ հղած իր զեկուցագրում հայտնում է. «1655թ մայիսից-1658թ մայիսը 572 մահմեդական երեխա է մկրտվել»²⁷¹:

Այսպիսով շահ Աբբաս Բ-ի գահակալության շրջանում նկատվում է քարոզիչների գործունեության խիստ բուլացում, որը հրամայական էր դարձնում նրանց վերադարձն Իրանից: Սակայն Կարմեյանների գործունեությունը նորից ակտիվանում է շահ Մուլեյմանի կառավարման վերջին տասը տարիներին:

²⁶⁸ A Chronicle of the Carmelites, v. I, p. 396.

²⁶⁹ Նույն տեղում, էջ 382:

²⁷⁰ Նույն տեղում, էջ 396:

²⁷¹ Նույն տեղում:

Շահ Սուլեյման Ա-ի (Սաֆի Բ) (1666-1694)²⁷² կառավարման շրջանում ակնհայտ էր դարձել Սեֆյան պետության տնտեսական, քաղաքական ու ռազմական ճգնաժամը: Ինչպես իրավամբ նշում է պրոֆեսոր Վ. Բայրուրյանը, «Իրանի հզորությունն ամենից շատ ջլատեց իր ասիական կառավարության հողի կազմակերպությունը: Ռազմական առումով պետությունն այն աստիճանի էր թուլացել, որ արևելքում ուզեկական խաների և աֆղանների ակտիվությունը և նրանց հաճախակի հարձակումները Սեֆյան պետության սահմանների վրա այլևս չէին հանդիպում ուժեղ դիմադրության»²⁷³:

Մ. Թաղիադյանը շահ Սուլեյմանին բնութագրում է որպես «Ինքնին անարի և թույլ» տիրակալի²⁷⁴: Նրա օրոք ակնհայտ են դառնում Սեֆյան պետության թուլացման նշանները: Երկիրը տնտեսապես և քաղաքականապես անկում էր ապրում²⁷⁵:

Կրոնավորների հաղորդած տվյալների համաձայն՝ շահ Սուլեյմանի կառավարման տարիներին երկիրն այլատերված էր և վեր էր անվել բռնակալության. շահը չափազանց ծույլ էր այն կառավարելու համար, իսկ էէթեմադ-ուդ-դուվեն համարվում էր քրիստոնյաների երդվյալ թշնամի: Կարմեյան մի կրոնավոր նույնիսկ պնդում է, որ մինչև շահի իշխանության գալն էլ Իրանը մի երկիր էր, որտեղ բռնակալությունը, խայտառակությունն ու հալածանքը քրիստոնյաների նկատմամբ ակնհայտ էր և ուղղված էր վերջիններիս «անմաքրության» դեմ²⁷⁶:

Կեսարայուլիսի եպիսկոպոս Փիքեթի՝ 1681թ. հոկտեմբերի 8-ի զեկույցի հիման վրա՝ «...պարսիկ կառավարիչների վատ վերաբերմունքը, կեղեքումը և դաժանությունը շարունակական էր և

²⁷² Այս շահը թագադրվել է երկու անգամ՝ 1666թ. նոյեմբերին՝ Սաֆի Բ անունով և 1668թ. մարտին՝ ընդունելով Սուլեյման անունը (نورمان، ۱۳۸۰ ص. ۱۱۸). **Հակոբյան Վ.**, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, Ե., 1956, էջ 429:

²⁷³ **Բայրուրյան Վ.**, Իրանի պատմություն, էջ 330:

²⁷⁴ **Թաղիադյան Մ.**, նշվ. աշխ., էջ 178:

²⁷⁵ **Иванов М. С.**, Очерк истории Ирана, М., 1952, стр. 77, այս մասին տե՛ս նաև՝ **Всемирная история**, период английского завоевания, Минск, Харвест, Москва, АСТ, 2000, том 14, стр. 124, **Петрушевский И. П.**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIX вв., стр. 294.

²⁷⁶ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 406.

գուցե ավելի անողորմ, քան թուրքերինը խեղճ կրոնավորների և կաթոլիկ բնակչության նկատմամբ»²⁷⁷:

Շահ Սուլեյմանի օրոք Կարմեյանների թիվը նկատելիորեն աճում է Սպահանում: Ինչպես նշում է անանուն հեղինակը, նախկինում երբեք այդքան կաթոլիկ չէր հաստատվել Սպահանում կամ Իրանի որևիցե վայրում: Այսպես, երբ Ջուղայում կաթոլիկ հավատքի հետևորդների թիվը մեծացավ, պարսից շահն ստիպված էր միաբաններին տեղափոխել Սպահանի մենաստան²⁷⁸:

Հայր Ջոն Բափթիսթը Բանդար-Աբբասից հղված իր նամակում նկատում է, որ Իրանում կաթոլիկ քրիստոնյաները իրենց տղաներին և դուստրերին ամուսնացնում էին յոթ, ութ, ինը տարեկանում, որպեսզի խուսափեին շահի ենթակայության ներքո հայտնվելուց²⁷⁹:

1681թ. Հայր Ֆորթունատը Սպահանից գրում է հետևյալը. «Պարսից թագավորը խաղաղության մեջ է: Թուրքերի դեմ պատերազմելու և ոչ մի ակնհայտ ակնարկ չկա... մի քանի օր առաջ նա քսանհինգ հայ աղջկա մահմեդականացրեց... Նա թույլ է տալիս կրոնավորներին ապրել խաղաղության մեջ, սակայն ո՛չ նրանց նկատմամբ հարգանք ունի, ո՛չ էլ նույնիսկ Եվրոպայից եկած դեսպանների»²⁸⁰:

Թեև քրիստոնյաների և ընդհանրապես կրոնական փոքրամասնությունների դրությունն Իրանում վատթարանում էր, այնուամենայնիվ, նկատվում էր դրական փոփոխություն կաթոլիկ քարոզիչների նկատմամբ ունեցած վերաբերմունքում, որն ուներ քաղաքական դրդապատճառներ, այդ թվում՝ ակնկալիքներ Իրանից օսմանցիների դեմ պայքարում:

Բաղդադի եպիսկոպոս Ֆրանսուա Փիքեթը 1683թ. մարտի 25-ին հավատի միաբանությանը հղած իր նամակում պատմում է մի դեպք, որն անչափ վշտացրել էր հայերին. ըստ Կարմեյանների՝ հայերը մի սովորույթ ունեին (հավանաբար խոսքը ջրօրհնների մասին է), որը տոնում էին գեղեցիկ ծիսակատարությամբ: Ցանկանալով

²⁷⁷ «A Chronicle of the Carmelites», v. I, p. 417.

²⁷⁸ Նույն տեղում, էջ 464:

²⁷⁹ Նույն տեղում, էջ 408, Carswell J., New Julfa-The Armenian Churches and Other Buildings, Oxford, 1968, p. 13.

²⁸⁰ «A Chronicle of the Carmelites», v. I, p. 409.

բավականություն ստանալ այդ արարողությունից՝ շահը հրամայում է իր տիկնանց ներկայությամբ (մոտ հինգ հարյուր հոգի) քրիստոնյա կանանց և աղջիկներին կրկնել նույն ծիսակատարությունը իր պալատում կամ այգում, ուր հիասքանչ շատրվաններ կային: Ինչպես հրամայել էր շահը, կանայք և աղջիկները գալիս էին քահանաների զգեստներով: Մեծ բավականություն ստանալով այդ ներկայացումից՝ շահը նրանց ճաշկերույթի է հրավիրում: Մարսափելին սակայն առջևում էր. հարյուր առավել երիտասարդ ու զեղեցիկ կանանց շահը պահում է իր հարեմում հինգ-վեց օր: Այնուհետև նրանցից ընտրում քսանյոթին, մնացածներին հետ ուղարկում: Նրանք, ովքեր մնացին հարեմում, այլևս վերադարձի հույս չունեին, քեև շատերն ամուսնացած էին: Շահի հրամանով վերջիններիս ոսկե և արծաթե հագուստներ տրամադրվեցին՝ անապահովների տներն ուղարկելով իրենց սեփական հագուստները և մի փոքր գումար: Ջուղայի բնակիչներից մեկն իր դստերը վերադարձնելու համար հազար բուման առաջարկեց. սակայն անարդյունք: Փիքերը ցավով նշում է ամենամեծ դժբախտության՝ կրոնափոխության մասին, քանի որ հարեմում ընդգրկված կանայք պարտավոր էին ընդունել մահմեդականություն: Այս կանայք փակված էին իրենց սենյակներում և զբաղվում էին տնայնագործությամբ՝ «գրկված ամեն տեսակ ազատություններից, նույնիսկ մյուսների հետ խոսելու և շփվելու իրավունքից: Շահը, բացառությամբ երկու կամ երեք արտակարգ զեղեցկության կանանց, մյուսներին կնության է տալիս իր ծառաներին: Կարմեյան Հայրը նշում է, որ շահի կարծիքով ինքը Աստծուն մեծ ծառայություն էր անում: Ամուսնանալով հայ կանանց և աղջիկների հետ՝ շահի ծառաները ձեռք էին բերում իրենց կանանց հայրական ունեցվածքը, ուստի այդ աղջիկների և կանանց հայրերից շատերը մահմեդականություն էին ընդունում՝ պահպանելու համար իրենց ունեցվածքը²⁸¹:

Սակայն «Կարմեյանների տարեգրությունում» պահպանված Հռոմի պապերի նամակները՝ ուղղված շահ Մուլեյմանին (Կղեմես X (1670-1676), Ինոկենտիոս XI (1676-1689)), վկայում են շահի բարյացակամության մասին: Ինոկենտիոս XI պապն, օրինակ, իր նամակում խնդրում է, որպեսզի արդյունավետ կերպով հսկվի կրոնը

²⁸¹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 409-410.

(քրիստոնեությունը- Թ.Մ.) հարձակումներից և ճնշումներից, անհրաժեշտության դեպքում օգնություն տրամադրվի:

Հռոմի Կարմեյանների արխիվներում պահպանված է պարսկերեն մի բնօրինակ. այն վկայում է, որ Իրանում Կարմեյան հայրերին թույլ է տրվել հաստատվել իրենց ցանկացած վայրում²⁸²:

«Կարմեյանների տարեգրությունը» հաստատում է, որ վերոհիշյալ ռադամի²⁸³ և Հայր Եղիայի ջանքերով 1683թ. Ջուղայում հաստատվելու թույլտվություն են ստանում²⁸⁴: Համաձայն այդ հրովարտակի՝ Ջուղայում դպրոց է կառուցվում, մատուռ, իսկ 1687թ. հոկտեմբերին Տուն հիմնելու իրավունք են ստանում²⁸⁵:

Կարելի է ենթադրել, որ Կարմեյաններին Իրանում քարյացակամ վերաբերմունք են ցուցաբերել, իհարկե, «տսկե միջինի» պահպանումով, քանզի Իրանի շահերը մտադիր չէին հենց այնպես կրոնական հանդուրժողականություն ցուցաբերել: Ինչպես հավաստիացնում է Հայր Եղիան Հռոմ հղած իր նամակում (1685թ. մարտի 21), այս ժամանակահատվածում եվրոպական տերությունները Իրանին կրկին ու կրկին համագործակցության առաջարկություններ էին անում Օսմանյան կայսրության դեմ հատկապես այն բանից հետո, երբ օսմանցիները գրավում են Կրետե կղզին (1669թ.):

Այսպես, օրինակ, Նախիջևանի արքեպիսկոպոս Սերաստիանը Ինոկենտիոս XI-ի հանձնարարականով շահ Սուլեյմանին ամփոփագիր պետք է ներկայացնեի օսմանցիների դեմ միասնական պայքարով հանդես գալու հարցի մասին:

«Կարմեյանների տարեգրությունը» վկայում է, որ նրանց մերժումը կապված էր հատկապես ռազմական ապարատի քայքայման և կործանման հետ, որն այնքան էլ պատվաբեր չէր ո՛չ շահ Աբբաս Ա-ի և ո՛չ էլ նրա թոռան համար. այն վեզիրներին և կառավարիչներին դարձնում էր պատերազմին անպատրաստ, անպաշտպան, որն ավելի ցայտուն նկատվում է երեսուն տարի հետո՝ աֆղանների տիրապետության ժամանակ²⁸⁶:

²⁸² "A Chronicle of the Carmelites", v. I, p. 421.

²⁸³ ռադամ- رادم (արաբ.)-պաշտոնական գրություն. քազավորական հրովարտակ:

²⁸⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 421.

²⁸⁵ Նույն տեղում, հ. II, էջ 1072-1073:

²⁸⁶ Նույն տեղում:

Կարմելյանների մամակներում արձանագրվում էին ժամանակի իրադարձությունները, որոնք ընթանում էին նրանց ներկայությամբ ինչպես ողջ Իրանում, այնպես էլ շահի արքունիքում և մերձավոր շրջաններում: Այսպես, օրինակ, մի մամակում կարդում ենք. «Լեհաստանի թագավորից չորս մամակով պարսից շահի մոտ է ժամանում մի դեսպան, ինչպես նաև մի պատվիրակություն՝ խնդրելու պարսից շահին պատերազմել օսմանցիների դեմ, սակայն պարսիկները տատանվում են, քանի որ զբաղված էին իրենց քաղաքականությամբ, ուստի պատերազմելու ոչ մի որոշում չեն կայացնում: 1685թ. մայիսին մեկ այլ Կարմելյան գրում է, որ կրկին ու կրկին դեսպաններ են գալիս՝ ոգեկոչելու շահին ընդդեմ օսմանցիների, քայց ապարդյուն: Այդ մամակում օսմանցիները բնութագրվում են իբրև բոլոր ազգերի կործանարար, մարդկանց և Աստծու իրավունքների ոտնահարող՝ «օժտված կառավարելու անկշտում վավաշոտությամբ»²⁸⁷: Նամակում կոչ է արվում պատրաստակամորեն դուրս գալ «ընդհանուր և անվիճելի ոսոխ»-ի դեմ, իհարկե, պատեհ հնարավորության առկայության դեպքում: Հարկ ենք համարում շահի պատասխանի պարսկերեն բնօրինակից ներկայացնել քաղվածք՝ վերոհիշյալ մամակին. «... Ժամանակին, երբ բերկրանքի և հաճույքի դռները բաց էին մեր արքայական դեմքի առաջ և երբ փառքի ու մեծության միջոցներն ապահովված էին «անառարկելի իրավարարի» վեհանձնությամբ, ստացանք Ձեր ազնիվ գիրը՝ քարեկամության և միության գաղափարներով ոգեշնչված: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության դեմ միասնական պայքարին, ապա մենք անընդմեջ տեղեկացրել ենք Եվրոպայի և Ռուսաստանի տիրակալներին, որ մեր արքայատոհմը, հետևելով արդարության պահանջներին, խաղաղություն է կնքել օսմանյան միապետերի հետ: Այս իրադրության պայմաններում մեր արժանապատվությունը նսեմացնող գործողությունների իրականացումը կհակադրվի անգերազանցելի Աստծու ցանկությանը և նորին սրբություն մարգարեի հրամանին»: «Դուք, թագադրված միապետ, և շարունակում է շահը, և երբևիցե քայլե՞լ եք քարեկամության կածանով և ազդարարել գործերի ազնիվ պայմաններ: Այսուհետ հրամաններ պետք է տրվեն պատվի ու փառքի մտավայրից (շահ

²⁸⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 433.

Սուլեյմանն ակնարկում է իրեն): Թող Չեր իշխանության փառքի, մեծության, վեհության և վսեմության օրերը համբերությանը անցնեն...»²⁸⁸:

Պարսից արքունիքը, դասեր քաղելով անցյալի սխալներից, այս անգամ բավականին զգոն էր իր ուժերը կենտրոնացնելու և Սեֆյան արքայատոհմի դարավոր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ եվրոպական պետությունների հետ միասնաբար հանդես գալու խնդրում: Թեև Կարմեյանները շահ Սուլեյմանի օրոք Իրանում որոշակի գործունեություն էին իրականացնում, այնուամենայնիվ դա այնքան էլ արդյունավետ չէր, որովհետև հենց իրենց՝ Կարմեյանների հաղորդած տվյալների համաձայն առաքելությունները շատ վատ վիճակում էին: Յուրաքանչյուր Տուն պետք է մեկ կրոնավոր ունենար, իսկ եթե այդ կրոնավորների թիվը գերազանցեր, ապա նրանք միայն մեկ ուրի տեղ կունենային գերեզմանում²⁸⁹:

Բացի այդ՝ շատ կրոնավորներ ոչ միայն խոսափում էին պարսիկների հետ շփումից, այլև, ի վերջո, պարզապես դուրս չէին գալիս փողոց, որովհետև, ինչպես իրենք էին դիպուկ բնորոշում, իրենց զգում էին ինչպես «եզը մսագործի մոտ»²⁹⁰: Դա պայմանավորված էր այն պարզ պատճառով, որ բոլոր քրիստոնյաներին, այդ թվում և Կարմեյան կրոնավորներին մահմեդականներն անվանում էին «անմաքուր», «չներ» և զանազան վիրավորանքներ հասցնում²⁹¹: Միաբանների նամակներում բազմիցս նշվում է, որ Իրանում կրոնավորները ոչ թե քարոզիչների, այլ ճգնավորի կյանք էին վարում: Նրանցից շատերը նույնիսկ պարսից լեզուն լսելու, մարդկանց հետ խոսելու հնարավորություն չունեին: Օրինակ, կրոնավորներից մեկը, ավելի քան մեկ տարի ապրելով Շիրագում, չէր տեսել քաղաքը:

Հայր Էնջըլըսը, առաջին անգամ Իրան ժամանելով, առիթ ունեցավ քարոզչության նպատակով երկար ժամանակ Իրանում հաստատված մի կրոնավորի ուղեկցությամբ հանդիպելու Շիրազի կառավարչի հետ, ով նրան (կրոնավորին – Թ. Մ.) դուրս էր քշել՝ անձնական վիրավորանք հասցնելով²⁹²: Բանը նրանում էր, որ երկար

²⁸⁸ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 433.

²⁸⁹ Նույն տեղում, էջ 439:

²⁹⁰ Նույն տեղում, էջ 446-447:

²⁹¹ Նույն տեղում:

²⁹² Նույն տեղում:

տարիներ ապրելով Իրանում՝ այդ կրոնավորը չէր տիրապետում լեզվին և նույնիսկ չէր կարողացել պատասխան տալ կառավարչին:

Իրանի և՛ կառավարող շրջանները, և՛ հասարակ ժողովուրդը, քեև արտաքուստ ցուցաբերում էին բարյացակամ վերաբերմունք Իրան ժամանած և հաստատված կրոնավորների նկատմամբ, այնուամենայնիվ, ներքուստ որոշակի հակակրանք էին զգում նրանց նկատմամբ:

Ինչպես արդեն հիշատակել ենք, շահ Մուլեյանհի կառավարման առաջին տարիներին Կարմեյանների գործունեությունն ակտիվությամբ աչքի չէր ընկնում: Սակայն վերջին տասը տարիներին այն նկատելիորեն ակտիվացավ, որը կապված էր Հայր Եղիայի (Էլիասի (Elias of Albert)) անվան հետ:

Հայր Եղիան 1682 թվականից Սպահանի մենաստանի վանահայրն էր: Նա ջանք ու եռանդ չխնայեց՝ ձեռք բերելու մի հրովարտակ, որով Ջուղայի Տունը վերաբացելու թույլտվություն ստացավ: Իսկ Ջուղայի Տան քահանա Վասիլի մահվանից հետո Հայր Եղիան հրաժարվեց Սպահանի վանահոր իր պաշտոնից և հաստատվեց Ջուղայում²⁹³: Նրա գործունեությունը համընկել է Հռոմի և Ֆրանսիայի խոշորագույն քարոզիչ Ռաֆայել դյու Մանի գործունեությանը: Հայր Եղիան Հռոմի այն հազվագյուտ քարոզիչներից էր, ում Ռաֆայել դյու Մանը լավ էր վերաբերվում: Ավելին՝ վերջինս 1693թ. հոկտեմբերի 2-ին՝ մահվանից առաջ Հռոմ ուղարկած իր բնութագրում այսպես է ներկայացնում Հայր Եղիային. «Իբրև ականատես պիտի ասեմ, որ այն ժամանակվանից, երբ Հայր Եղիան երջանկությամբ միացավ հայկական առաքելություններին (խոսքը վերաբերում է հայերի շրջանում քարոզչությանը և Թ. Մ.), նրա հոտի բոլոր հոգևորականները ենթարկվում են նրան և աշխուժորեն աշխատում առաքելության համար, իրենց հնարավորության սահմաններում օգնում բոլոր մյուս առաքելություններին, և շատ երկար կլինեք թվել այն բարեգործություններն ու ծառայությունները, որ Հայր Եղիայի դարձի քերած հայերն են մատուցել: Ահա քե ինչու

²⁹³ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 859-866.

Հայր Եղիան 1660 թվականից Լուվենի համալսարանում շոքո տարի ուսանել է մաթեմատիկա և բժշկություն: 1675թ. նա արդեն Հռոմում Սան Պանկրատիոյի Կարմեյան առաքելությունում էր, իսկ մեկ տարի անց բնօրրկվում է իրանական առաքելության մեջ:

բոլոր քարոզիչները, լինեն Հիսուսյան, Գոմինիկյան, քե վեդարավոր առաքելությունների ֆրանսիացի քահանաներ, պետք է շատ երախտապարտ լինեն Հայր Եղիային և ողջունեն նրան շնորհաշատ անկեղծությամբ: Այս ամենը մենք վկայում ենք ականատեսի անաչառությամբ»²⁹⁴: 1691թ. միաբանների ջանքերով «Սուրբ պատրիարք» Եղիայի անունով մի նոր եկեղեցի է հիմնվում²⁹⁵: Եվրոպական տարբեր կրոնավորների՝ Ջուդայում հաստատվելը ստիպեց, որ հայերը բողոքեն և շահից պահանջեն քարոզիչներին դուրս վճարել ոչ միայն Ջուդայից, այլև ամբողջ պարսից քաղաքությունից՝ պատճառաբանելով, որ ֆրանկ կրոնավորները ցանկանում են մոլորեցնել իրենց²⁹⁶: Երկար պայքարից հետո, ի վերջո, 1689թ. հայերը շահից հրովարտակ ստացան և քանդեցին Կարմեյանների եկեղեցին: Ջուդայի Կարմեյան բնակավայրից ոչինչ չմնաց, ընդամենը մի խաղողի այգի, որը երկար ժամանակ կրում էր «Կարմեյանների այգի» անվանումը²⁹⁷:

Այսպիսով, քեև շահ Սուլեյմանի քսանութ տարվա գահակալությունն արժանափշատակ ոչինչ չարձանագրեց Սեֆյան պետության տարեգրության մեջ, սակայն Կարմեյանների համար նպաստավոր եղան շահի կառավարման վերջին տասը տարիները:

Իրանական պետության քայքայման ջղաճգություններն էլ ավելի խորացան շահ Սուլեյմանի օրոք (1694-1722թթ.), ով հանդիսանում էր Սեֆյան պետության վերջին շահը՝ «թույլ և ապիկար կառավարող, ընդամին և մոլեռանդ շիա, ով իր գլխավոր հենարանը դարձրել էր շիա հոգևորականությունը՝ հորջորջվելով «Մոլլա»»²⁹⁸: Կենտրոնական իշխանության բուլացման պայմաններում սաստկացող կամայականություններն ու բռնությունները հպատակ ժողովուրդների շրջանում անկայության

²⁹⁴ Կարապետյան Մ. Մ., Թաջիրյան Է. Խ., Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուդայի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 1998, N2 (95) էջ 84:

²⁹⁵ "A Chronicle of the Carmelites", v. II, p. 1072-1073.

²⁹⁶ Նույն տեղում, հ. I, էջ 378:

²⁹⁷ Նույն տեղում, հ. II, էջ 1086:

²⁹⁸ Բայբության Վ., Իրանի պատմություն, էջ 331, Հակոբյան Տ. Հ., Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIIIդդ.), Արևելագիտական ժողովածու, հ. I, Ե., 1960, էջ 272:

ծգոտմներ էին արթնացնում²⁹⁹: 1707թ. հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Իսրայել Օրուն շնորհելով գնդապետի կոչում և ուղարկելով Իրան՝ Պետրոս Առաջինը³⁰⁰ նրան հանձնարարել էր Պետերբուրգին տեղեկացնել Իրանում գործերի վիճակի մասին: Օրու տեղեկությունների համաձայն՝ երկիրը գտնվում էր քայքայման վիճակում³⁰¹:

²⁹⁹Васильев Л. С., История Востока, т. I, М., 2003, стр. 321, Всемирная история, Период английского завоевания, стр. 125-126.

³⁰⁰Պետրոս Ա-ի դիվանագիտական գործունեության մասին մանրամասն տե՛ս *История Дипломатия*, М., 2005., стр. 308-327.

³⁰¹Քայրուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 331:

Թեև Օրին Իրան էր մեկնել որպես Հռոմի դեսպան՝ իր հետ տանելով ոռոսաց. գերմանական թագավորների և պապի մամակները, և մինչ այդ էլ պարսից շահին հանձնարարական մամակներ էին հղվել, որոնցում Իրանի քրիստոնյաների նկատմամբ քայքայական վերաբերմունքի խնդրանք էր ներկայացվել, այնուամենայնիվ, Իրանում կասկածամիտ շուկներ էին պատվում Օրու անծի շուքը և նրանք ստամոտ էին այդ «վտանգավոր հային» ետ ուղարկելու մասին: Չավեշտալի էր հատկապես այն գուշակությունը, թե Իսրայել Օրու անվան մեջ կային բոլոր տառերը «մա թագավոր կլինի» բառերը կազմելու համար (il sera roi):

«Կարծելյանների տարեգրության» մեջ Իսրայել Օրին բնութագրվում է որպես «արկածախնդիր հայ», ով ճամփորդել է Ֆրանսիայով, Իտալիայով, Գերմանիայով՝ սուրճ վաճառելով քանակներից, այնուհետև ինքնակամ զինվորական ծառայության անցել Լեոպոլդ կայսեր մոտ՝ ստանալով ենթասպայի կոչում: Ծառայության անցնելով Մոսկվայի ցարի մոտ՝ մեկնել է Կոստանդնուպոլիս: Որպես ցարի ներկայացուցիչ Իսրայել Օրին Մոսկվայից մեկնում է Վիեննա, ձեռք բերում կայսեր կողմից պարսից շահին ուղղված մամակներ: Վերջապես մեկնում է Հռոմ՝ ներկայանալով որպես հերձվածող հայերի հակառակորդ և Հռոմի Մուրբ արտոնի միավորվելու բաղձալի երազանքով սոգորված: Իր նպատակին հասնելու համար նա 1705թ. հուլիսի 15-ին կարողանում է Հռոմի պապ Կղեմես XI-ից ձեռք բերել երաշխավորագիր՝ պարսից շահ Մուլթան Հուսեյնին ներկայանալու որպես Հռոմի պապի ներկայացուցիչ:

Այս երաշխավորագիր մամակի գոյությունը հաստատելու համար Հավատի միաբանության քարտուղարությունը խնդրում է կարդիմալ Պոլուշիին 1708թ. փետրել արքաներին ուղղված մամակների մեջ, թե արդյոք կա այդպիսի մամակ գրված 1700-ականներին ուղղված պարսից շահին, որով ազգությամբ հայ Իսրայել Օրին երաշխավորվում է որպես Հռոմի ներկայացուցիչ, ինչպես նաև՝ ճշտել, թե արդյոք կա նմանատիպ մամակ՝ գրված Կղեմես XI-ի գահակալության սկզբում: Պատճառն այն էր, որ ուրեք էին պատվում, թե հենց այդ Իսրայել Օրին հերետիկոս է և հայտնի հերձվածող ու մնամատիպ երաշխավորական մամակներով գնում է հալածելու կարողիկներին և կարողիկություն քնդունած հայերին, սխալմամբ հայտարարելով, թե իբր դա պապի ցանկությունն է: 1708թ. հուլիսի 13-ին քարտուղարությունն իր պատասխան-մամակում գրում է, որ ուղարկում է Իսրայել Օրու մասին

Շահ Մուլբան Հուսեյնի գահակալության տարիներին պետության կառավարման գործն անցավ շիա հոգևորականության և պալատական ներքինիների ձեռքը: Շահը դարձել էր նրանց կամակատարը: Նա հրաժարվեց կրոնական հանդուրժողականության քաղաքականությունից, որն իրականացնում էին իր նախորդները, և արյունոտ հալածանքներ սկսեց սուննիների դեմ՝ պղծելով կամ ախտոների վերածելով նրանց մզկիթները: Կրոնական անհանդուրժողականության քաղաքականության քիրախում հայտնվեցին նաև քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում՝ ջուդահայերը, որոնց նկատմամբ նա կիրառել է բռնի հավատափոխության դաժան քաղաքականություն: Մահմեդական կրոնական առաջնորդների, մասնավորապես մուլլաբաշի³⁰² Մոհամմադ Բադեր Մաջլեսիի, նրա բռնան՝ Մոհամմադ Հուսեյնի հրահրմամբ շահ Մուլբան Հուսեյնը կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ անարդարացի հրովարտակներ

հրատարակված գեկույցների պատճենները. «Կղեմես XI պապից պարսից նեմանուն արքային... Հանի որ մեր սիրեցյալ որդի Իսրայել Օրին արժանի է Մեր բարձր գնահատանքին իր բացառիկ շիտակ և ազնիվ բնավորության, հավատարմության և խոհեմության համար, մենք ցանկություն ենք հայտնում, որ ընդունեք նրան բարյացակամորեն, լսեք նրան բարությանը...»:

Հիսուսյան կրոնավոր Պիեռ Չենայիոնն իր բողոք գրառման մեջ Օրուն անվանում է իսկական հերետիկոս և մեղավոր այն բանում, որ իր ժամանակում խոչընդոտ է հանդիսացել հայերի միավորման համար: Իսկ Ջուդայի Կարմեյան երեցը Օրուն բնորոշում է որպես «ոչ մի դիրք չունեցող անկիրք մարդ»:

Անշուշտ, այս ամենը պետք է որ ունենար իր պատճառները, մինչդեռ Հուսեյն շահը Պետրոս Մեծին գրած իր պատասխան մասնակում կհատում է. «...Մենք ցույց տվինք նրան (Օրուն - թ. Մ.) մեր ողորմած ուշադրությունը, օգնությունը և հարգանքը: Թող պարզ լինի Չեր պայծառ հայացքին, որ թեև ինչչալ քրիստոնյա ժողովուրդների մեջ կան տգեղանիք, որոնք մեր պետության արժանավորությունը նկատի առնելով, պիտի արժանի պատիժը կրեին իրենց վատ արարքների կամ վատ ուղղությունների համար, բայց Չեր բարեկամական մասնակր, որ ամբացնում է մեր մեջ վաղուց գոյություն ունեցող բարեկամությունն ու համաձայնությունը, հորդորում է ողորմություններ անել և հարգել մեր հպատակներին մեր ընտրած ճանապարհով...» ("A Chronicle of the Carmelites", v. I, p. 564-566, Իսրայել Օրու մասին մանրամասն տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., հ. V, էջ 437- 438, **Հովհաննիսյան Ա.**, Դավազներ հայ ազատագրական մարտի պատմության, ինչպես նաև՝ **Յոսեֆ Բ.**, **Споминия Петра Великого с армянским народом**, СПб., 1898 և այլն):

³⁰² Բարձրագույն պաշտոն շահ Մուլբան Հուսեյնի իշխանության տարիներին մահմեդական հոգևորականության աստիճանասանդղակում (**Մատենադարանի պարսկերեն վավերագրերը**, հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), էջ 195:

էր հրապարակում³⁰³: Մոլլաների և հայ հոգևորականության շրջանում կազմակերպվում էին «կրոնական վիճաբանություններ»՝ ապացուցելու, որ իսլամն ավելի կատարյալ կրոն է, քան քրիստոնեությունը: Վ. Բայբուրդյանն իրավացիորեն նշում է, որ այդ «վիճաբանությունները» կամ «հակաճառությունները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ բռնի դավանափոխության սրողված ձև³⁰⁴: Եվ, իրոք, բռնի մահմեդականացման դեպքերը հաճախակի էին դառնում ինչպես հայ քրիստոնյաների, այնպես էլ հրեաների, գրադաշտականների և կրոնական այլ փոքրամասնությունների շրջանում³⁰⁵:

Կարմեյան Հայր Եղիան 1694թ. օգոստոսի 7-ին Հռոմ ուղարկած իր նամակում այսպես է բնութագրում 26-ամյա շահին. «...Նոր շահն իր հեղինակության հաստատման համար բարեպաշտություն ու հնազանդություն է ցուցաբերում Ղուրանի պատվիրանների և Իսլամի նկատմամբ. արգելում է գինու օգտագործումը: Ջուղահայերն ստիպված էին ոչնչացնել խաղողի հսկայական ցանքատարածությունները...»³⁰⁶:

1715-1717 թթ. Իրանում ռուսական դեսպան Արտեմի Վոլինսկին, ում Պյոտր Ա-ն ուղարկել էր այդ երկիր հետախուզության նպատակով, գրում է. «Պարսիկներն ի վիճակի չեն պաշտպանվելու ոչ միայն քչնամիներից, այլև իրենց ապագա ապստամբներից, և սակավ են այն վայրերը, ուր չեն ծագել ապստամբություններ»³⁰⁷: Իսկ կրոնական օրենքների մոլեռանդ պաշտպան շահին այսպես է նկարագրում. «Այստեղի գլուխը հիմա այնպիսի մեկն է, ով ոչ միայն չի իշխում իր հպատակներին, այլև ինքն իսկ հպատակ է իր հպատակներին»³⁰⁸:

Լեոյի դիպուկ բնորոշմամբ «... Հուսեյնի թագավորության ժամանակաշրջանը Իրանի պատմության ամենամռայլ էջերից մեկն է հանդիսանում»³⁰⁹: Ինդկենտիոս XII պապը (1691-1700) շահ Սուլթան Հուսեյնին առաջարկում է միավորել իրենց ուժերն ընդդեմ

³⁰³ آخر سیوری، ایران عصر صفوی، تهران، ۱۳۸۰، ص. ۲۶-۲۵

³⁰⁴ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 333-334:

³⁰⁵ تاریخ ایران، دوره صفویان (پژوهش از دانشگاه کمبریج)، تهران، ۱۳۸۰، ص. ۱۲۶

³⁰⁶ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 470.

³⁰⁷ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 331:

³⁰⁸ Հովհաննիսյան Ա., Դիվագներ հայ ազատագրական մտքի պատմության, էջ 287:

³⁰⁹ Լեռ, երկերի ժողովածու, հ. V, Ե., 1986, էջ 432:

օսմանցիների, սակայն շահն առանձնակի հետաքրքրություն չի ցուցաբերում³¹⁰:

1703թ. ապրիլի 30-ին Սպահանի եպիսկոպոս Եղիան խնդրագիր է ներկայացնում Կղեմես XI պապին (1700-1721)՝ միաբանության համար անչափ կարևոր մի շարք հիմնադրույթներով: Խնդրագրում շեշտվում էր շահի բարյացակամ վերաբերմունքը և ցուցաբերած աջակցությունն իրեն և իր համայնքին, ինչպես նաև քրիստոնյա թագավորներին: Հայր Եղիան ներկայացրել էր նաև ֆինանսական աջակցության խնդրանք: Սպահանում և Ջուղայում գործող մյուս միաբանություններին աջակցելու վերաբերյալ ոչինչ չէր հիշատակվում: Առաջարկվում էր երկու եկեղեցի կառուցել և մեկ դպրոց բացել Ջուղայում հայերի և լատինադավանների համար, ինչպես նաև եպիսկոպոսական զգեստ հասկացնել իրեն: Այս առնչությամբ Լ. Մինասյանն իր «Իրանի հայկական եկեղեցիները» գրքում հիշատակում է Նոր Ջուղայում և Սպահանում կաթոլիկ եկեղեցիների առկայության մասին: Նրա հավաստմամբ՝ եղել են բազում եկեղեցիներ (մեկ Դոմինիկյան վանք (1705թ.)), որոնք հիմնել էին ինչպես, օրինակ, մեծահարուստ Շահիրմանյանները (Ս. Ավետիք), այնպես էլ Իրանում հաստատված Կարմեյլյան (Ս. Լուլիա), Կապուչինյան, Հիսուսյան (Ս. Հովսեփ), Ավգուստինյան և Ֆրանցիսկյան քարոզիչները³¹¹:

Շահ Մուլթան Հուսեյնի օրոք Իրանն առաջին անգամ եվրոպական տերությունների հետ «կապիտուլյացիոն պայմանագրեր» է կնքում: Դրանք իրենցից ներկայացնում էին միակողմանի միջազգային-իրավական ակտեր, որոնք շահը հատկացնում էր այս կամ այն պետությանը՝ նպատակ ունենալով այդ երկրների վաճառականներին ներգրավելու Իրանի ներքին ու արտաքին առևտրի մեջ: Իրանում կապիտուլյացիաների ռեժիմը (արտերկրայնության իրավունքը) պատկանում էր Անգլիային: Հարկ է նշել, որ Սպահանում քարոզությունը թուլացավ հատկապես այն ժամանակ, երբ 17-րդ դարի վերջին Իրան այցելեց Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-րդի դեսպանությունը՝ Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպանատան քարտուղար Պիեռ Վիկտոր Միշելի

³¹⁰«A Chronicle of the Carmelites», v. I, p. 494-495.

³¹¹Մինասյան Լ. Գ., նշվ. աշխ., էջ 53:

գլխավորությամբ, և հաջողությամբ բանակցեց Ֆրանսիայի և Իրանի միջև առաջին պաշտոնական առևտրական համաձայնագրի շուրջ: Շահի հրապարակած հատուկ հրամանագրով՝ Ֆրանսիայի քաղաքացիներին թույլատրվում էր առևտուր անել Իրանում և օգտվել մի շարք արտոնություններից և իրավունքներից, ինչպես նաև շահի հովանավորությունից, սակայն ֆրանսիացիներին հատկացված կապիտուլյացիոն իրավունքները լայն տարածում չգտան Իրանում, քանի որ Իրանի և Ֆրանսիայի միջև բացակայում էին կանոնավոր կապերը³¹²:

Ուշագրավ է, որ 1708թ. սեպտեմբերի 14-ին Սեֆյան Իրանի և Ֆրանսիայի միջև կնքվեց երեսույն հոդվածից բաղկացած պայմանագիր, որի 27-րդ կետով Իրանում հաստատված քարոզիչներին իրենց արարողությունների, ծեսերի կատարման ազատություն էր տրվում: Նրանք պարտավորվում էին հարգել այդ երկրի կրոնը և շիականության դեմ ուժեղացող շիրազործել³¹³: Շահի գլխավոր հրովարտակով Իրանում բնակվող բոլոր քարոզիչներին տրվում էին իրենց տների, մենաստանների, եկեղեցիների վերակառուցման թույլտվություն, ինչպես նաև գործառույթների իրականացման ազատություն, մահացածներին քաղելու հնարավորություն: Մեկ այլ հրովարտակ Իրանի կառավարիչներից պահանջում էր միաբանների հետ հարաբերություններում պահպանել բարեխղճություն: Մյուս հրովարտակը վերաբերում էր Կապուչինյան հայրերին և այլն³¹⁴:

Ինչպես տեսնում ենք, քարոզիչները շահեցին ֆրանսիական դեսպանության՝ Իրան կատարած այցելությունից: Սակայն 1710թ. հայոց կաթողիկոս Ալեքսանդրը և Նոր Ջուղայի եպիսկոպոս Մովսեսը շահ Սուլթան Հոսեյնից ստացան հատուկ հրամանագիր, որով չեղյալ համարվեցին քարոզիչներին տրված բոլոր արտոնություններն ու իրավունքները: Ավելին՝ շահը հրամայում էր թույլ չտալ կաթոլիկներին խառնվել հատկապես հայերի գործերին, կաթոլիկ դպրոցներում նրանց ընդգրկման, կաթոլիկ եկեղեցիներ մտնելու հարցում և այլն:

³¹² Բայրության Վ., Իրանի պատմություն, էջ 335, *История Дипломатии*, стр. 292-295. Savory R., *Iran under the Safavids*, Cambridge, 1980, p.122.

³¹³ دکتر عبدالحمین نوائی، روابط سیاسی ایران و اروپا در عصر صفوی، ص. ۲۷۳.

³¹⁴ Նույն տեղում:

գլխավորությամբ, և հաջողությամբ բանակցեց Ֆրանսիայի և Իրանի միջև առաջին պաշտոնական առևտրական համաձայնագրի շուրջ: Շահի հրապարակած հատուկ հրամանագրով՝ Ֆրանսիայի քաղաքացիներին բույլատրվում էր առևտուր անել Իրանում և օգտվել մի շարք արտոնություններից և իրավունքներից, ինչպես նաև շահի հովանավորությունից, սակայն ֆրանսիացիներին հատկացված կապիտուլյացիոն իրավունքները լայն տարածում չգտան Իրանում, քանի որ Իրանի և Ֆրանսիայի միջև բացակայում էին կանոնավոր կապերը³¹²:

Ուշագրավ է, որ 1708թ. սեպտեմբերի 14-ին Սեֆյան Իրանի և Ֆրանսիայի միջև կնքվեց երեսուն հոդվածից բաղկացած պայմանագիր, որի 27-րդ կետով Իրանում հաստատված քարոզիչներին իրենց արարողությունների, ծեսերի կատարման ազատություն էր տրվում: Նրանք պարտավորվում էին հարգել այդ երկրի կրոնը և շիականության դեմ ոտնձգություններ չիրագործել³¹³: Շահի գլխավոր հրովարտակով Իրանում քնակվող բոլոր քարոզիչներին տրվում էին իրենց տների, մենաստանների, եկեղեցիների վերականգնման թույլտվություն, ինչպես նաև գործառույթների իրականացման ազատություն, մահացածների քաղկու հնարավորություն: Մեկ այլ հրովարտակ Իրանի կառավարիչներից պահանջում էր միաբանների հետ հարաբերություններում պահպանել բարխլոություն: Մյուս հրովարտակը վերաբերում էր Կապուչինյան հայրերին և այլն³¹⁴:

Ինչպես տեսնում ենք, քարոզիչները շահեցին ֆրանսիական դեսպանության՝ Իրան կատարած այցելությունից: Սակայն 1710թ. հայոց կաթողիկոս Ալեքսանդրը և Նոր Ջուղայի եպիսկոպոս Մովսեսը շահ Մուլթան Հուսեյնից ստացան հատուկ հրամանագիր, որով չեղյալ համարվեցին քարոզիչներին տրված բոլոր արտոնություններն ու իրավունքները: Ավելին՝ շահը հրամայում էր թույլ չտալ կաթոլիկներին խառնվել հատկապես հայերի գործերին, կաթոլիկ դպրոցներում նրանց ընդգրկման, կաթոլիկ եկեղեցիներ մտնելու հարցում և այլն:

³¹² **Բայբուրդյան Վ.**, Իրանի պատմություն, էջ 335, **История Дипломатии**, стр. 292-295. **Savory R.**, Iran under the Safavids, Cambridge, 1980, p.122.

³¹³ دکتر عبدالحمین نوائی، روابط سیاسی ایران و اروپا در عصر صفوی، ص. ۷۷۳.

³¹⁴ Նույն տեղում:

արհամարհանքով է խոսում կաթոլիկության մասին... Իսկ այժմ եկել է այստեղ ու անհանգստություն է պատճառում մեզ...»³¹⁹:

Հայերի՝ որպես քարոզիչների հալածիչների մասին, բազմիցս հանդիպում ենք «Կարմեյանների տարեգրությունում»: Նման օրինակներից է Կարմեյան կրոնավոր Մորիսի՝ Թավրիզից 1711թ. հղված նամակը, ուր բացահայտորեն ասվում է, թե հայերը քարոզիչների և ընդհանրապես ճշմարիտ կաթոլիկների հարստահարիչներն են³²⁰: 1715թ. օգոստոսի 15-ին Վերսալում ստորագրված ֆրանս-իրանական բարեկամական և առևտրական պայմանագիրը հավաստում էր, որ 1708թ. պայմանագիրն ուժի մեջ է:

Շահը հույս ուներ այդ պայմանագրի միջոցով (արտաքին առևտրից ստացվող եկամտի շնորհիվ) լուծել Իրանի ֆինանսատնտեսական ծանր ճգնաժամը: Այս պայմանագրերը մնացին թղթի վրա, քանի որ Ֆրանսիան չակտիվացրեց իր առևտրական քաղաքականությունն Իրանում³²¹:

Կարմեյանների գործունեության անհաջողությունների պատճառներից մեկն, ամենայն հավանականությամբ, Կարմեյան կրոնավորների դրամական միջոցների մշտական պակասն էր, որի մասին նրանք պարբերաբար տեղեկացնում էին պապին:

³¹⁹ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 524.

1696թ. Ինոկենտիոս XII (1691-1700) պապը նրանց շնորհել է «Սրբազան հոռմեական կայսրության կոնսի» տիտղոսը, որով ազատ առևտրի իրավունք է ստացել Հռոմում և Անրոնայում, իսկ 1699թ.՝ Ավստրիայի կայսր Լեոպոլդ Առաջին Հաբսբուրգի կողմից արժանացել է «Հունգարիայի կոնսեր» տիտղոսին: Ֆրանսիայի խոշորագույն քարոզիչ Ռաֆայել դյու Մանը շարքս և կիրակի օրերին այցելում էր Նոր Ջուղա: Կարոլիկ ընտանիքների համար պատարագելու հանգամանքով դյու Մանը սերտ բարեկամական հարաբերություններ էր հաստատել Շահիբնայան ընտանիքի ավագի՝ Սահրատի հետ: Հետագայում Շահիբնայան գերդաստանի անհետացման մասին ուշագրավ վկայություն է տալիս Մեսրոպ վարդապետ Ռոդոլֆյանը. «Արդարև եղևկի է, որ անչափ դարեր է լի վեր ծաղկեալ աստիճանաւ, պատուով և վաճառականութեամբ փարքամ և բազմաճիղ ընտանիքն, տարածեալ և հաստատեալ այլ և այլ կողմեր՝ այժմ անհետ եղած է...» (Ուրդուբեան Մ., Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 210, Խաչիկյան Շ. Լ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Ե., 1988, էջ 69-70):

³²⁰ "A Chronicle of the Carmelites", v. II, p. 1081.

³²¹ Բայրության Վ., Իրանի պատմություն, էջ 335-336:

Շահ Սուլեյմանի գահակալության տարիներին Կարմելյան միաբանության ներկայացուցիչները համեստորեն տեղեկացնում էին պապին, որ իրենք ֆինանսական աջակցության կարիք ունեն, որպեսզի կարողանան շարունակել իրենց գործունեությունն Իրանում: Բացի այդ՝ իրանական քարոզչական կայաններում կրոնավորների թիվը գնալով պակասում էր, քանի որ հայերն իրենց փոխարինողներ չէին ունենում, նրանց շարքերը չէին համալրում նորերը: Այսպես՝ Հայր Ռայմոնդը 1709թ. սեպտեմբերի 13-ի մամակում գրում է, թե իրենք շատ քանի կարիք ունեն, հատկապես ընկերակիցների (վերոհիշյալ Հայրը շուրջ հինգ տարի ապրում էր միայնակ և հոգ էր տանում մի մեծ Տան մասին իր այգով, այն է՝ սենաստանի): Փաստերը վկայում են, որ միաբանությունը երեք տարվա ընթացքում կորցրել էր վեց-յոթ կրոնավորի³²²:

1712թ. ապրիլի 29-ին, Կարմելյանների ձեռք բերած ռադամի համաձայն, հայերը պետք է բնակություն հաստատեին՝ առանց ամենաչնչին անհանգստության ենթարկվելու մահմեդականի, քրիստոնյայի կամ որևիցե մեկի կողմից: Սակայն այդ ռադամը մնաց սոսկ որպես հրովարտակ: Մինչդեռ կաթողիկոս Ալեքսանդրը հասավ այն բանին, որ շահը, համաձայն 1712 թ. նոյեմբերի հրովարտակի, հռչակեց հետևյալը. «... Իրանում հաստատված ֆրանկները, կաթոլիկներն իրավունք չունեն միջամտելու հայերի կրոնական գործերին... Իրանում, մասնավորապես արքայական մայրաքաղաք Սպահանում, Թավրիզում, Գորջեսթանում (Վրաստան), Գանջայում (Գանձակ), Ղարաբաղում, Շիրվանում, Համադանում և այլուր բնակվող կաթոլիկ քարոզիչներին և ֆրանկներին չպետք է բույլատրվի հայ երեխաներին և երիտասարդներին մկրտել, բույլ տալ նրանց ապրել՝ համաձայն իրենց կրոնի և սովորույթների, ոչ որ չի կարող խանգարել նրանց ղեկավարվել իրենց սեփական օրենքներով... բոլոր իրավախախտները կպատժվեն»³²³:

Իտալացի կրոնավոր, Թեաթինյան միաբանության վանական Կ. Գալանոսը համարում էր, որ հայն «...Արևելքի միս քրիստոնեաներու մէջ երևելիներէն է, ունեոր, տարածուած, ամենէն

³²² A Chronicle of the Carmelites", v. I, p. 514-516.

³²³ Ghougassian V. S., նշվ. աշխ., էջ 155, Շահ Սուլթան Հուսեյնի 1712թ. հրովարտակն ամբողջությամբ տե՛ս Վավերագիր 83, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), էջ 178:

աստուածապաշտը եւ բազմամարդը³²⁴», ուստի քարոզիչների թափած ջանքերը չարդարացրին նրանց հույսերը: Այդ է վկայում Ա. Հովհաննիսյանը: Նա գրում է. «Նոր ջուղայեցիները պապական որոգայթի մեջ հեշտությամբ ընկնողներից չէին: Բարի հարաբերությունների մեջ մտնել Հռոմի հետ՝ այդ կնպաստեր նրանց շահաստացությանը, բայց հպատակվել Հռոմին՝ կնշանակեր գծովել Իրանի հետ»³²⁵:

Շարդենը ևս հաստատում է այդ միտքը. «Ես խոսք չունեմ նկարագրելու այն խորամանկություններն ու ծախսերը, որոնց այդ նպատակով (կաթոլիկացնելու) դիմում էր Հռոմի աթոռը... Հայերը երեխայությունից սովորում են ասել Քրիստոս, խաչակնքել երեսը և պաս պահել՝ շարունակելով միևնույնը և չափահաս ժամանակ, հաստատապես հավատում, թե միայն այդ ծեսերի կատարման մեջ է քովանդակվում և քրիստոնեության ամբողջ էությունը»³²⁶:

Կարճեյանների քարոզչական աշխատանքների ծախողման պատճառներից գլխավորը թերևս այն էր, որ ջուղահայերն անկոտրում դիմադրություն ցույց տվեցին: Այն հետևանք էր առաջին հերթին իրենց հավատքի նկատմամբ անդրդվելի նվիրվածության: Կաթոլիկ քարոզչության հիմքերն, անկասկած, խախտվել էին:

Հռոմի պապ Կղեմես XI-ը փորձում էր վերջին հնարավորություններն օգտագործել և 1713թ. նոյեմբերի ու 1714թ. օգոստոսի մամակներով խնդրում է շահին աջակցել քարոզիչներին և բույլատրել նրանց ազատորեն հաստատվել Իրանում և առանց խտրության իրենց աշխատանքն իրականացնել³²⁷: Սակայն պապը ոչինչ չունեք առաջարկելու, իսկ շահ Սուլթան Հուսեյնը ոչ մի ցանկություն չունեք գոհացնելու պապին և առհասարակ արևմտյան տիրակալներին, ուստի պապի հղած մամակներն անպատասխան մնացին: Ալեքսանդր կաթողիկոսի՝ կաթոլիկների «մեծ

³²⁴ Կարապետ Եպս Ամատունի, Յակոբ Դ. Կրդ. Ջուղայեցի եւ հայ Լիվորոնո (Ժ.Է. դար), Բազմավեպ հայագիտական-բանասիրական-գրական հանդես, Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 141:

³²⁵ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 107:

³²⁶ Լեո, Խոջայական կապիտալը և նրա հասարակական-քաղաքական դերը հայերի մեջ, էջ 106-107:

³²⁷ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 527-528.

հարստահարչի» մահից (1714 թ. մարտի 12) հետո շատ քիչ քարոզիչներ էին մնացել Սեֆյան թագավորության մեջ³²⁸:

Ամփոփելով Կարմելյանների գործունեության արդյունքները 17-րդ դարի ողջ ընթացքում՝ կարող ենք արձանագրել, որ պապական քարոզչությունը մեծ նվաճումներ ձեռք չբերեց Իրանում: Պարսից շահերը, բարյացակամություն դրսևորելով Իրան ժամանած կրոնավորների նկատմամբ, միևնույն ժամանակ բավականին հետևողական և հեռատես էին իրենց վարած ներքին ու արտաքին քաղաքականության մեջ, հետևաբար Կարմելյան կրոնավորներից քչերը կարողացան հաջող քարոզչական գործունեություն ծավալել:

³²⁸ A Chronicle of the Carmelites¹, v. I, p. 528.

Կարմեյանների գործունեության ավարտն Իրանում

18-րդ դարի սկզբին տեղի ունեցող ժողովրդական հուզումներն ու ապստամբությունները սովորական երևույթ էին Սեֆյան Իրանի տարբեր շրջաններում: Սեֆյանների կենտրոնական պետական իշխանությունը քայքայվում էր: Որոշ ապստամբություններ ընթանում էին շիականության դեմ պայքարով:

Սուննի-աֆղանական ցեղերի ապստամբության արդյունքում, որոնցից ամենախոշորն ու նշանակալիցը Գիլգայի աֆղանական ցեղի առաջնորդ, Ղանդահարի քալանթար Միր Վեյսի գլխավորած ապստամբությունն էր, քայքայվում է Սեֆյան պետությունը: Պետության արևելյան ծայրամասերի բոլոր ժողովուրդներն ու ցեղերն օժանդակում են Միր Վեյսին, և նա 1711թ. իրեն հռչակում է Ղանդահարի անկախ կառավարիչ³²⁹:

1722թ. հունվարին աֆղանները Միր Վեյսի որդու՝ Միր Մահմուդի գլխավորությամբ գրավում են Քերմանը, ապա Յազդը գրավելու անհաջող փորձից հետո տիրանում Սեֆյան մայրաքաղաք Սպահանին: Շահ Հուսեյնին ոչինչ չէր մնում անելու, քան հրաժարվել գահից՝ հօգուտ Միր Մահմուդի:

Հավատի միաբանության քսանհատորանոց արխիվներում հաղորդակցության կատարյալ բացակայություն է արձանագրված հատկապես 1721-1725թթ. ընթացքում: Չկա մամակադրական կապ Իրանի և Հռոմի միջև: Աֆղանների հարձակումը բացասական ազդեցություն ունեցավ նաև Կարմեյանների գործունեության վրա³³⁰: Բնականաբար, սա անբարենպաստ ժամանակահատված էր կրոնավորների առաքելության իրականացման համար: Արևելահնդկական ընկերության գործակալների զեկույցները վկայում են Իրանի տնտեսական կյանքի ճգնաժամային իրավիճակի, ինչպես նաև զարգացող մոլեռանդության, անհանդուրժողականության, արհամարհանքի և այլ բացասական երևույթների մասին: Եվ եթե իրանահայ գաղթօջախը մինչև աֆղանական ներխուժումը սովոր էր, ապա դրանից հետո մասնավորապես Նոր Ջուղայի գաղթօջախից

³²⁹ **Քայրորդյան Վ.**, Իրանի պատմություն, էջ 338:

³³⁰ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 562.

քնակչությունը զանգվածաբար հեռանում էր դեպի օտար երկրներ: Իրանից հեռանում էին նաև կաթոլիկ առաքելությունները³³¹:

Իրանում տիրող քաղաքական անցուղարձեղը բավականին ծանր կացության մեջ էին դրել երկիրը: Հայտնի է, որ 1722թ. հոկտեմբերի վերջին աֆղանների կողմից պաշարված Սպահանում մարդկանց սպառնում էր քաղցը: Շահ Հուսեյնը հարկադրված էր գահից հրաժարվել: Մյուր Մահմուդի բանակ գնալով՝ իր թագը դնում է նրա գլխին: Օսմանյան կայսրությունը, օգտագործելով Իրանի ծանր դրությունը, իրեն հայտարարում է Հարավային Կովկասի (Անդրկովկաս) և Ատրպատականի «օրինական ժառանգորդը»՝ սպառնալով զինակալել Սեֆյանների տիրազրկված երկրամասերը: Ցանկանալով օգտվել ստեղծված իրավիճակից և լուծել իր արտաքին քաղաքականության որոշ խնդիրներ՝ Ռուսաստանի կայսր Պետրոս Ա-ն 1722թ. օգոստոսին արշավանք է կազմակերպում: Ռուսական զորքերը մտնում են Դերբենդ և Իրանի Կասպյան ամբողջ ծովեզերքը գրավելու նպատակով շարունակում արշավանքը³³²: Պետրոս Ա-ի պարսկական արշավանքը, ըստ էության, կոչված էր կասեցնելու օսմանյան նվաճողականության ծավալապաշտական նկրտումները, ինչպես նաև տարածել Ռուսաստանի ազդեցությունը Կովկասում և Սեֆյան Իրանի հյուսիսային շրջաններում: Դա հանգեցրեց ռուս-թուրքական հարաբերությունների սրմանը, և Պետրոս Ա-ն հսակացավ, որ պատերազմն անխուսափելի կլինի, քանի որ նրա թիկունքում կանգնած Անգլիան և Ֆրանսիան ևս ունեին իրենց զաղորատիրական շահերը թե՛ Իրանում և թե՛ Օսմանյան կայսրությունում, որոնք հակադրվում էին Ռուսաստանի հետապնդած նպատակներին: Ավելին՝ գնալով աճում էր օսմանցիների հարձակման վտանգն Անդրկովկասում: Հաշվի առնելով ստեղծված քաղաքական իրավիճակը՝ Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև սկսված բանակցությունների արդյունքում 1724թ. հունիսին պայմանագիր ստորագրվեց: Այդ պայմանագրի համաձայն՝ թուրքերը ճանաչեցին Ռուսաստանի տիրապետությունը Դերբենդից մինչև Մազանդարան

³³¹ «A Chronicle of the Carmelites», v. I, p. 562-563.

³³² Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 146. Պետրոս Ա-ի պարսկական արշավանքի մասին մանրամասն տե՛ս Լысцов В. П., Персидский поход Петра I, 1722-1723 гг., М., 1951, Sykes P., A history of Persia, v. II, London, 1951, p. 510.

ընկած Կասպից ծովի առափնյա շրջանում: Ռուսները փոխադարձաբար ճանաչեցին Օսմանյան կայսրության իրավունքներն Իրանի անդրկովկասյան տիրույթների նկատմամբ, ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաքները, Ղարաբաղի և Ղափանի մարզերը, ինչպես նաև նրանց տիրապետությունը Արդեբիլ-Թավրիզ գծից դեպի հյուսիս և Թավրիզ-Քերմանշահ գծից դեպի արևմուտք ընկած իրանական հողերի վրա³³³:

Տարածքային ձեռքբերումներից զատ՝ պայմանագիրը ստորագրած կողմերը պատրաստակամություն հայտնեցին աջակցել Սուլթան Հուսեյնի որդուն՝ Թահմասպին³³⁴, պայմանով, որ վերջինս ընդունի պայմանագրի պայմանները, հակառակ դեպքում՝ սպառնալով մեկ ուրիշին նստեցնել գահին³³⁵: Սակայն Թահմասպ Բ-ին չհաջողվեց հաղթել աֆղաններին: Ավելին՝ պարտություն կրելով՝ նա փախավ Մազանդարան: Նրա իշխանությունը, փաստորեն, ավելի շատ ձևական էր, որը տևեց շուրջ տասը տարի³³⁶:

Հայտնի է, որ Թահմասպ Բ-ին աջակցում էր հյուսիսարևելյան Իրանի ազդեցիկ խաներից մեկը՝ Ֆաթի Ալի խան Ղաջարը, իսկ

³³³ Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1972, հ. V, էջ 156:

³³⁴ Թահմասպը շահ էր հռչակվել 1722թ. նոյեմբերի 10-ին,

تاريخ ايران، دوره صفويان، پژوهش از دانشگاه کمبریج، ص. 137

³³⁵ Иванов М., Очерк Истории Ирана, стр. 87, 90, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև եղած հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Новичев А. Д., Турция, краткая история, М., 1965, стр. 45-46.

³³⁶ تاریخ ایران، دوره صفويان، پژوهش از دانشگاه کمبریج، ص. 137

1724թ. Աստվածատուր կարողիկոսը Թահմասպ Բ-ի հրավերով գնում է շահի մոտ, և այդ հանդիպման արդյունքում մի հրամանագիր է ձեռք բերվում, որն ուղղված էր ընդդեմ հայերի մահմեդականացման խրախուսման: Մեֆյան ժամանակաշրջանում շիաների մոտ լայն կիրառություն ունեյր այսպես կոչված Իմամ Ջահֆարի օրենքը, համաձայն որի զիմմի ռայաթների (ռա՛խրյաթ) (քրիստոնյա և իրեա հպատակներ, ովքեր ի տարբերություն մահմեդական հպատակների, քոլոր հարկերից բացի իրենց կրոնը դավանելու իրավունք ստանալու համար վճարում էին նաև հատուկ գլխահարկ՝ «ջիզյա») մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքին ամբողջությամբ տիրանալու, ինչպես նաև՝ զրկելու ժառանգությունից, օրենք, որը մեծ նեղություն էր պատճառում իրանահպատակ հայերին (այս մասին մանրամասն տե՛ս Փափազյան Հ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, էջ 87-88, Ղարապետյան Մ. Մ., «Իմամ Ջահֆարի» օրենքը և արևելահայերը (XVII-XVIII դարեր), Պատմա-քաղաքական հանդես, Ե., 1988, N1, էջ 219):

1726թ. Թահմասային միանում է տաղանդավոր գորավար Նադիր խան Աֆշարը: «Աֆղանների դեմ պայքարում,— գրում է Մ. Իվանովը,— թեև Նադիրն ուներ իր անձնական նպատակները, այնուհանդերձ, Իրանից աֆղանների վռնդումն անառարկելիորեն կապված է նրա անվան հետ»³³⁷:

1732թ. Նադիրին հաջողվեց գահընկեց անել Թահմասային, շահ հայտարարվեց նրա ութ ամսական որդին՝ Աքբաս Բ-ն, ում խնամակալի՝ Նադիրի ձեռքում էր գտնվում ողջ իշխանությունը: Կարմեյանների՝ 1727թ. նոյեմբերի 6-ի մամակից պարզ է դառնում, որ 1719 թվականից սկսած՝ նրանք ո՛չ ֆինանսական աջակցություն, և ո՛չ էլ մամակներ են ստացել: Նման բովանդակությամբ մամակներում նշվում է, որ ավելի քան յոթ տարի է, ինչ «Հավատի միաբանությունից» ոչ մի մամակ չեն ստացել³³⁸:

1749թ. հունվարի 15-ին Հայր Էմանուելը (Fr. Emmanuel of S. Albert) հաղորդում է, որ վերջին երեք տարիների ընթացքում Հռոմ հղած իր մամակների չնչին մասն է հասել, քանի որ «Չերդ Մեծությունից ստացել են ընդամենը երեք մամակ, որը ստիպում է ինձ մտածել, որ իմ հղած մամակները տեղ չեն հասել կորսարների (ծովահենների) պատճառով»³³⁹:

Իրանում քաղաքական իրադրության փոփոխման հետ մեկտեղ նկատվում է կաթոլիկ կրոնավորների գործունեության աշխուժացում: Անառնոն հեղինակն այս ժամանակաշրջանում Կարմեյանների գործունեությունը գնահատում է որպես իրենց աշխատանքի գագաթնակետ: Հարկավ, կաթոլիկ քարոզչությունն Իրանում արդեն հաստատված էր և ճանաչված: Կաթոլիկ քարոզիչների, տվյալ դեպքում՝ Կարմեյան միաբանության ներթափանցումն Իրան իր հետ մաս դրական տեղաշարժեր կատարեց երկրում՝ նպաստելով եվրոպական մշակույթի, գրականության, արվեստի, գիտության և իր ժամանակի այլ արժեքների ծանոթությանը և փոխանցմանը բնակչությանը:

Հայտնի են այս ժամանակահատվածում Ջուղայում և Սպահանում գործող Կարմեյան կրոնավորների անունները՝ Հայր

³³⁷Иванов М., Очерк Истории Ирана, стр. 94, Босворт К. Э., Мусульманские династии, М., 1971, стр. 230-231.

³³⁸«A Chronicle of the Carmelites», v. I, p. 593.

³³⁹Նույն տեղում, էջ 594:

Ուրբան (Urban of S. Elisaeus), Հայր Թոմաս (Thomas Aquinas of S. Francis (S. Francis Xavier)), ով 1730թ. օգոստոսին մեկնում է Ջուդա և մինչև 1740թ. օգոստոսը ստանձնում Ջուդայի երեցի պաշտոնը, Հայր Ջոն Բապտիստ (John Baptist of S. Elias), Հայր Դոմինիկ (Dominic of S. Romuald) (վերջինս ցանկանում էր Բասրայից վերադառնալ Սպահան՝ իր բարեկամ Ֆիլիպ Մերի եպիսկոպոսին մոտ լինելու համար, սակայն նրա խնդիրքը մերժվում է, և նա որոշում է վերադառնալ Եվրոպա), Հայր Կորնելիոս (Cornelius of S. Joseph), ով մինչև 1746թ. հաստատվում է Իրանում որպես այցելու, Հայր Սեբաստիան (Sebastian of S. Margaret) (1741թվականից մինչև 1745թ. մայիսը Ջուդայի վանահայրն էր)³⁴⁰:

Հայր Էմանուելի՝ մեզ հասած նամակում նշվում է, թե Իրանում առաքելությունները խաղաղ են, անխռով և առաջընթաց են ապրում³⁴¹: Իսկ Հայր Սեբաստիանը կարծում է, որ ժամանակն է մի հիմնական եկեղեցի կառուցել Ջուդայում. մարդկանց թիվն օր օրի ավելանում է, և նրանց պետք է ավելի հարմարավետ սենյակներ հասկացվեն³⁴²:

Կարմեյանների հաղորդմամբ՝ 1740-ական թվականներին Սպահանում տեղաբնիկներ էին միայն մահմեդականները, բայց կային նաև եվրոպացի առևտրականներ և քարոզիչներ, որոնց թույլատրում էին երեխաներ մկրտել միայն մահվան վտանգի դեպքում: Շիրազի Կարմեյան բնակավայրը վերականգնվել էր եպիսկոպոս Ֆիդելի մահից հետո: Շիրազի վերջին քարոզիչն էր Հայր Ժոզեֆ Դոմինիկը, Թավրիզում միայն երկու կաթոլիկ ընտանիք էր ապրում և մեծ թվով կաթոլիկ առևտրականներ կային, ովքեր հոգևոր աջակցության կարիք ունեին³⁴³:

Կարմեյան կրոնավոր Հայր Լինդըրը Կարմեյանների գործունեության թուլացման հարցում կարևոր էր համարում «հերետիկոս հայերի» գործոնը՝ վկայակոչելով այն փաստը, թե իբր հայերը կաշառել են պարսից արքունիքին ավելի քան 400 թումանով

³⁴⁰ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 594-595, 612-613.

³⁴¹ Նույն տեղում, էջ 613:

³⁴² Նույն տեղում:

³⁴³ Նույն տեղում:

քարոզիչներին բնակավայրերից քշելու նպատակով³⁴⁴: Ֆիլիպ Մերի եպիսկոպոսը պնդում էր, որ հայոց պատրիարքը հալածում էր կրոնավորներին՝ պահանջելով, որ վերջիններս դուրս գան Իրանից, իսկ եկեղեցիները կործանվեն և, ըստ էության, մեծ գումարներ էր ծախսում այդ ամենի համար³⁴⁵:

Հաճախ քարոզիչներին մեղադրում էին այն բանում, թե մարդկանց հետ են պահում հարկեր մուծելուց կամ խախտում են հասարակական անդորրը, իրենց հավատքից շեղելով՝ ստիպում են հայերին ապրել երկրի ինչ-որ ավերված վայրում, շատերին փորձում են դարձնել պապի վասալներ և այլն: Կաթոլիկների դեմ քարձրացված նմանօրինակ բողոքների արդյունքում շատ կրոնավորներ հայտնվում էին բանտերում³⁴⁶:

Սպահանի եպիսկոպոս Ֆիլիպ Մերին 1740թ. նոյեմբերի 4-ի նամակում տեղեկացնում է. «Վերջին երկու տարիների ընթացքում մենք ենթարկվում ենք մշտական հալածանքների հայերի ոչ կաթոլիկ պատրիարքի կողմից՝ Լազարի (Լազար Ջահկեցի³⁴⁷ (1737-1751)), ով պահանջում է, որ բոլոր քարոզիչներն Իրանից դուրս քշվեն, եկեղեցիները կործանվեն: Փոխարքա Ռեզա Ղուլի Միրզային այս առաջարկությամբ հինգ անգամ հանդես եկավ պատրիարքը՝ շատ գումար ծախսելով և կեղծ հայտարարություններ անելով, օրինակ, քարոզիչները հետ են կանգնեցնում բնակչությանը շահին հարկեր մուծելուց, տարածում լուրեր, որ նրանք խախտում են հասարակական անդորրը երկրում, հայերին քաշելով իրենց հավատքին՝ աննկատ փախցնում են պատրիարքի ենթականերին՝ պապի վասալներ դարձնելու համար, ներխուժում են քրիստոնյաների տները՝ կանանց տեսնելու համար, և նմանատիպ այլ զրպարտանքներ... Արդյունքում շատ կաթոլիկներ բանտ նետվեցին... Հայերը նույնիսկ արքունիք են ուղարկում մի եպիսկոպոսի և քահանայի՝ մեծ նվերներով, հուսալով, որ կկաշառեն

³⁴⁴ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 632.

³⁴⁵ Նույն տեղում:

³⁴⁶ Նույն տեղում:

³⁴⁷ Միմեռն Տրևանցին Ղ. Ջահկեցուն բնութագրում է որպես «գիտուն և լեզվով ճարտար, իմաստուն և փառքով պերճ» կաթոլիկոսի: Լազար Ջահկեցու մասին մանրամասն տե՛ս Միմեռն կաթոլիկոս Տրևանցի, Ջամբու, Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Արոտի և նրա հարակից վանքերի, Ե., 2003, էջ 44, 53, 59 և այլն:

շահին ու կհասնեն իրենց նպատակին: Երբ իմացանք այդ մասին, ազատորեն գործելու հրովարտակ ձեռք բերեցինք շահից ...»³⁴⁸:

Իսկ Հայր Լիմըրը Ռուսաստանի ցարի ներկայացուցիչների գործունեության մասին գրում է. «Ես լուրեր ունեմ, որ հայոց վարդապետները համագործակցում են Մոսկովիայի դեսպանի հետ, ով իր արքունիքից ցուցումներ է տալիս Իրանից բոլոր եվրոպացիներին դուրս քշելու մասին»³⁴⁹:

Հայր Լիմըրը համոզված էր, որ դեսպանի մնացորինակ գործողությունները մեկ նպատակ են հետապնդում՝ առևտրի մենաշնորհի հաստատել իր համաքաղաքացիների համար և որպես սպառնալից վկայակոչում է Սպահանի «քազարի» կենտրոնում հոլանդական գործարանի ղեկավար Լիփսիքին հասցրած վիրավորանքը. «Լիփսիքը Սպահանի մեր Տնից ճանապարհվում է Հայր Թոմասի հետ հանդիպման: Տեղեկանալով այս մասին՝ անհայտ ինքնությանը մի ռուս սպասում է նրան «քազարում»՝ մեր Տան մոտ, և հրամայում է ետ դառնալ: Լիփսիքը պատասխանում է, որ հասարակական ճանապարհ է, ուստի երկուսն էլ իրավունք ունեն անցնելու: Ի պատասխան այդօրինակ «հանդգնության»՝ նրան իջեցնում են ձիուց, ծեծում և կողոպտում... Ուստի տեղեկացնում եմ Ձեզ, որ այս ամենը ջողահայերի ձեռքի գործն է»³⁵⁰:

Այս ժամանակահատվածի Կարմեյանների մամակները լի էին այսպիսի իրողությունների նկարագրությամբ, սակայն կարճ ժամանակահատվածում իրադրությունը փոխվում է հօգուտ քարոզիչների: Նաղիբ շահը հաստատում է քարոզիչների՝ մախկիմում ունեցած արտոնությունները՝ ազատություն տալով կրոնավորներին: Շահի այս որոշումն իր պատճառներն ուներ, որը կապված էր նրա և հայոց պատրիարք Լազարի հանդիպման հետ: Վերջինս, ներկայանալով շահին, փորձել էր վարկարեկել քարոզիչներին, սակայն շահը, նրան անվանելով խաբեբա, ստախոս, մոլորեցնող և գող, վռնդել էր: Չբավարարվելով դրանով՝ նա հրամայել էր կտրել պատրիարքի մորուքն ու ականջները և հեռացնել

³⁴⁸ "A Chronicle of the Carmelites", v. I, p. 632-633.

³⁴⁹ Նույն տեղում, էջ 632:

³⁵⁰ Նույն տեղում:

պատրիարքարանից: Այնուհետև պատրիարքին շղթայում և ծեծում են՝ նրանից կորզելով 5000 թուման³⁵¹:

1747թ. Նադիր շահի սպանությունից հետո նրան հաջորդում է Ալի Դուլին՝ Աղլի շահ անվամբ (1747-1748): Նրա անփառունակ գահակալությունը ևս ավարտվում է սպանությամբ: Գահն անցնում է Նադիրի թոռանը՝ շահ Ռուհին:

Նկատի ունենալով Իրանում տեղի ունեցող իրադարձությունները (Հյուսիսային և Արևմտյան Իրանում երկպառակչական պայքար էր ընթանում ավատական խմբավորումների միջև)՝ Բաղդադի եպիսկոպոս Էմանուելը 1749 թ. իր մամակում գրում է. «Իրանը շարունակաբար վատից դեպի վատթարագույնն է գնում... Չգիտենք, թե ինչպես են այդ խեղճ քարոզիչները գոյատևում: Երկար ժամանակ է, ինչ ոչ մի լուր չունենք նրանցից...»³⁵²:

Դոմինիկյան կրոնավոր Հայր Ռայմոնդը Ջուդայից ուղարկված մամակով տեղեկացնում է իրենց անհաջողությունների մասին՝ կապված աֆղանական կողոպտիչների հետ: Ըստ նրա՝ աֆղանները փորձել էին գրավել մույնիսկ Կարմեյանների մենաստանը: Սակայն աշխարհիկ եղբայր Ֆերդինանդը, ներկայանալով նրանց գլխավորին, կարողանում է համոզել, որ կողոպտիչները չվնասեն քարոզիչներին: Ուշագրավ է, որ դա չէր հաջողվել ո՛չ Դոմինիկյան, ո՛չ Ավգուստինյան, ո՛չ էլ Կապուչինյան հայրերին³⁵³:

18-րդ դարի երկրորդ կեսին Իրանի ներքաղաքական կյանքում լուրերի, ազերի-թյուրքերի, բախտիարների, թուրքմենների առաջնորդների սկսած դաժան ու արյունոտ պայքարից հաղթող դուրս եկան բախտիարների առաջնորդ Ալի Մարդան խանը և լուրերի գեղճ ցեղախմբի պարագլուխ Մոհամմադ Քարիմ խանը (1750-1779): Իր գահակալության քսանինը տարիների ընթացքում վերջինս աչքի ընկավ պետական կառավարչին բնորոշ վճռակաճությամբ, երկրի մասին հոգատարությամբ, սակայն ինքն իրեն «վաքիլ³⁵⁴» էր

³⁵¹ «A Chronicle of the Carmelites», v. I, p. 641-642.

³⁵² Նույն տեղում, էջ 657:

³⁵³ Նույն տեղում, էջ 657-659:

³⁵⁴ وکیل - վաքիլ (արաբ.) - լիազորված անձ, ներկայացուցիչ:

անվանում՝ ցույց տալու համար, թե ընդամենը Մեֆյանների անունից կառավարող ներկայացուցիչ է: Պ. Մայքսը նրան բնորոշում է որպես արդարամիտ, հումորի զգացումով բարի մարդու, ում սիրում և գնահատում էին³⁵⁵:

Կարմեյանների նամակագրությունից տեղեկանում ենք, որ Քարիմ խանը բարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերում մաս բրիտոնյանների նկատմամբ³⁵⁶:

1749թ. Սպահանի Կարմեյան միաբանության եպիսկոպոս Ֆիլիպ Մերիի մահից հետո դադարեց այն աշխույժ նամակագրությունը, որը ժամանակին բազում հետաքրքիր փաստեր էր արձանագրում Իրանի 17-18-րդ դարերի պատմության վերաբերյալ: 1752թ. Հայր Սերաստիանի՝ Ջուղայից հեռանալուց հետո այլևս ոչ մի քահանա չհաստատվեց այնտեղ: Սակայն իրանական առաքելությունը՝ որպես մի փոքրիկ միավոր, վերապրեց Բասրայի բնակավայրում, և 1752-1772 թթ. ընթացքում տասնհինգ-բսան Կարմեյան հաստատվեց այնտեղ³⁵⁷:

Այսպիսով՝ Կարմեյանների իրանական առաքելությունը, որը մերթընդմեք առկայծում, բարգավաճում և երբեմն էլ խամրում էր ու նվազում, ի վերջո մարում է: Կրոնավոր քարոզիչներից շատերն իրենց կյանքը գոհաբերեցին հանուն այս առաքելության: Սակայն կրոնավորների մեծ մասը լքեց և հեռացավ՝ անիմաստ համարելով իրենց գործունեությունը: Ուստի կարելի է համաձայնել հենց իրենց՝ միաբանների տեսակետին, որ «Իրան նախաձեռնած առաքելությունն ավելի քան այցելություն էր, քան առաքելություն»³⁵⁸: Հատկանշական է, որ Կարմեյանների քարոզչական գործունեությունն, ընդհանուր առմամբ, հարթ չէր ընթանում այն պարզ պատճառով, որ նրանց անդամների միջև ծագում էին անախորժ տարաձայնություններ: Իսկ փոփոխական հոսանքների և իրարամերժ հայացքների առկայության պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել մեկ միասնական գաղափարին հավատարիմ մնալու մասին: Այդ են վկայում

³⁵⁵ Persia by Brigadier-General, sir Percy Sykes, Oxford, 1922, p. 279.

³⁵⁶ «A Chronicle of the Carmelites», v. I, p. 663.

³⁵⁷ Նույն տեղում, էջ 699:

³⁵⁸ Նույն տեղում:

ծառացած դժվարությունները և միաբանության վերջնական անհետացումը³⁵⁹:

Այնուհանդերձ, Կարմեյանների և ընդհանրապես կաթոլիկ քարոզիչների գործունեությունը միանշանակորեն բացասական երևույթ չէ: Քարոզիչների հարուստ գիտելիքների փոխանցումը, լեզուների իմացությունը և հատկապես նրանց բարգձմանչական գործունեությունը նպաստեցին Իրանում և ընդհանրապես Արևելքում Եվրոպայի գիտական, գրական, դավանաբանական, փիլիսոփայական մտքի կարևորագույն մտուչներին ծանոթանալուն, ինչն էլ վկայում է նրանց գործունեության մասն դրական կողմերի մասին³⁶⁰:

³⁵⁹ Groseclose E., The Carmelite, The Middle East Journal, Washington, Autumn, 1955, p. 460-461.

³⁶⁰ Հայր Ջոն Թադդեոսը բարգձմանեց Ավետարանը, Հայր Փիթերը նախածեռնեց և իրականացրեց Ս. Թոմասի "Contra Gentes" կոչվող աշխատության բարգձմանությունը (ավելի քան յոթանասուն գլուխ): Դոմինիկյան կրոնավոր Պողոս Պիրոմալին սլարսկերենով գրեց "On the Trinity" կամ "On the Incarnation" աշխատությունը, որը բարձր գնահատվեց հասարակության կրթված խավի կողմից ("A Chronicle of the Carmelites" v. I, p. 373, 377):

Պ. Պիրոմալին 35 հազար հայերեն բառ հավաքեց և կազմեց հայ-լատիներեն բառարանը, որը, սակայն, անտիպ էր մնացել, գրեց մաս Քաղկեդոնի ժողովի պատմությունը (կրոնական վիճաբանություն Սիմեոն Ջուղայեցու դեմ) «Յաղագս ճշմարտութեան հաստոյն քրիստոնէականի առ Շահ Ապաաս արքայ Պարսից», որը տպագրվեց Պրոպագանդայի տպարանում 1674 թ.: Կ. Գալանոսը գրեց «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ» երեք հատորից բաղկացած հայերեն և լատիներեն աշխատությունը: Փաստորեն, եվրոպացի հայագետն առաջին անգամ խոսում էր հայերի անցյալի մասին, շոշափում էր նրա՝ գրեթե 1200 տարվա կյանքը: Կազմում է մաս հայերեն քերականության և տրամաբանության դասագիրք և տպագրում Պրոպագանդայի տպարանում 1645 թ.: (Լէօ, Հայկական տպագրություն, Հայերը նոր պատմութեան մէջ.- պատմական-գրական տեսութիւն, հ. I, XVI-XVII դդ., Թիֆլիս, 1904, էջ 230, 243-244, 253-254):

Հայտնի է մաս, որ Իրանում կանկառի, եղբորի և ծներեկի մշակումը տարածել են եվրոպական միաբանները և հատկապես Կարմեյան հայրերը (Ալպոյաճնան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Գ, էջ 173):

ԱՄՓՈՓՈՒՄ

Կարմեյան միաբանների ներթափանցումն Իրան իրականացվեց՝ ելնելով Հռոմի և Իրանի քաղաքական և տնտեսական մերձեցման հեռանկարից և սպասելիքներից: Շահ Աբբաս Ա-ն Եվրոպայի հետ հետագա հարաբերությունների խորացման և սերտացման նպատակով կատարեց աննախադեպ քայլ՝ հայտարարելով Իրանում քրիստոնեության դավանման ազատության մասին, և առաջարկեց Իրան ուղարկել մշտական ներկայացուցչություն: Այն համընկավ Հռոմի Կղեմես VIII պապի նպատակների հետ, որով և իրականացավ Կարմեյան քահանաների մուտքն Իրան:

Սեփական հետաքրքրություններն ու շահերը պարսից կառավարող շրջաններին հնարավորություն տվեցին Իրանի «հյուրընկալ դռները» պատրաստակամորեն բացելու Կարմեյան հայրերի և ընդհանրապես կաթոլիկ այլ քարոզիչների ու առևտրականների առջև:

Իրան ժամանած կրոնավոր քարոզիչների ընտրությունը պատահական չէր կատարվում, քանի որ նրանք պետք է հավաստի տեղեկություններ հաղորդեին երկրի տնտեսական, քաղաքական իրավիճակի, օտարերկրյա պետությունների հետ Իրանի ունեցած հարաբերությունների, պարսից արքունիքի մասին և այլն: Հարկ եղած դեպքում Կարմեյանների՝ Իրան ուղարկված առանձին խմբերում ընդգրկվում էին նաև տարբեր մասնագիտությունների տեր աշխարհիկ մարդիկ: Այսպես՝ արագոնացի Ֆրանցիսկո Ռիդոլիդը Կղեմես VIII-ի հանձնարարականով մեկնել էր Իրան, որպեսզի ճշտեր, թե արդյոք որքանով է նպատակահարմար ռազմական գործիչներ Իրան ուղարկելը օսմանցիների դեմ կռիվող լավ զինվորներ մարզելու համար:

Պարսից շահերին ու Հռոմի պապերին հատկապես մերժեցնում էր Օսմանյան կայսրության դեմ տարածաշրջանում հզոր դաշնակից ձևոր բերելու և միասնական հաղթանակ տանելու գաղափարը: Սակայն շահ Աբբասի հետնորդները համոզվեցին, որ Վատիկանը հապաղում է իր խոստումներն իրագործելու հարցում, հետևաբար հրաժարվեցին առաջ քաշված գաղափարից: Քարոզիչների հաղորդած տեղեկությունների միջոցով Հռոմը, ինչպես նաև Եվրոպական այլ տերություններ ճշգրտում էին իրենց ծրագրերը.

կյանքի կոչում մտադրությունները կամ հրաժարվում դրանցից: Օրինակ՝ Պ. Մայմընը հակաօսմանյան դաշինքին վերաբերող իր բազմաթիվ նամակներից մեկում հաղորդում է շահ Աբբաս Ա-ի հզորության և օսմանցիներին մեծ-մեծակ կործանելու կարողության մասին և կարևորում է մտերմության հաստատումը շահի հետ: Կամ, օրինակ, հայտնում է տեսակետ, որ հեշտ կլիմի կործանել Օսմանյան կայսրությունը, քանի որ բոլոր քրիստոնյաները պատրաստ են աջակցելու:

Իրանի և՛ կառավարող շրջանները, և՛ ժողովուրդը թեև արտաքուստ ցուցաբերում էին որոշակի բարյացակամ վերաբերմունք Իրան ժամանած և այնտեղ հաստատված կրոնավորների նկատմամբ, այնուամենայնիվ, ներքուստ որոշակի հակակրանք ունեին նրանց հանդեպ և հարկ եղած դեպքում բացահայտորեն արտահայտում էին այն: Համոզվում ենք, որ Կարմեյան միաբանների ու պարսից շահերի միջև հաստատված հարաբերությունները պայմանավորված էին նրանց իսկ կենսական շահերով: Հայտնի է, որ պարսից շահերն ամեն գնով ցանկանում էին հայերին գերծ պահել եվրոպական պետությունների և մասնավորապես կաթոլիկ Հռոմի ազդեցությունից: Նրանք գիտակցում էին, որ եթե հայ լուսավորչական եկեղեցին Հռոմին ենթարկվի, ապա իրենք կզրկվեն երկրի սոցիալ-տնտեսական կյանքում մեծ դեր խաղացող իրանահայերից, հատկապես ջողահայերից: Սակայն ստիպված էին թույլ տալ քարոզիչների գործունեությունն Իրանում, քանի որ նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքը կհանգեցներ Իրանի համար անչափ կարևոր արտաքին առևտրի հիմքերի խախտմանը: Ինչ վերաբերում է կաթոլիկ քարոզիչներին, ապա վերջիններս պետք է գզուշորեն գործեին Իրանից վտարվելու առիթ շտախտ համար:

Կարմեյանների, ինչպես նաև շատ այլ միաբանությունների հայտնվելն Իրանում անմիջականորեն պայմանավորված էր արևմտաեվրոպական երկրների գաղութարարական տարածապաշտությանը, իսկ քարոզչությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ներքափանցման միջոց այդ քաղաքականության իրականացման համար:

Ուսումնասիրելով Կարմեյանների երկդարյա գործունեությունն Իրանում, վերլուծելով և պատմագիտական

որոշակի համադրության ենթարկելով նրանց հաղորդած տեղեկությունները՝ համոզմունք ենք հայտնում, որ Կարմեյանների իրանական առաքելությունը և՛ դիվանագիտական էր, և՛ քարոզչական: Իրանում «ճերմակ» վանականների հայտնվելը և գործունեություն ծավալելը, ըստ էության, հատուկ մշակված ծրագիր էր՝ «ճշմարիտ կրոնի լույսի սփռման շղարշի ներքո»:

Այնուամենայնիվ, առաքելության հիմնական նպատակներին զուգահեռ Կարմեյանները ծավալեցին նաև կրթական, լուսավորչական գործունեություն, որը, իսկապես, կարևոր ներդրում էր Իրանի բնակչության և հատկապես իրանահայերի համար:

"The Chronicle of the Carmelites" as a Historical Source of the 17th and the 18th Centuries of Iran

SUMMARY

The late Middle Ages and particularly the 17th and the 18th centuries are considered as one of the eras satiated with stormy events in the millennial history of Iran that is marked with the geoterritorial and military-political events being elaborated on the new bases, as well as with the reevaluations of the political and economic relations between Europe and the East. In the historical studies there are numerous and various scientific fundamental works dedicated to this historical period of Iran analyzing historical, political, economic, public, religious, cultural and other facts. The main issue was European (catholic) world, particularly the discovery of the field of interrelations between Rome and Iran.

In the 17th and in the 18th centuries the establishment and the active visits of various Catholic Orders (Dominicans, Augustines, Jesuits and others) in Iran and the "works" being realized by them were aimed to promote the orientation of the State of Safavid towards Europe. In that case the Shah's government was getting the support of Europe and Rome against the military threat of the Ottoman Empire, yet at the same time it was losing its positions in the international trade which was realized mainly by the Iranian Armenian commercial companies or/and individuals possessing huge capitals. The most active advocates for the activities of the Catholic missions were mainly the Carmelite friars whose primary task was the spreading of Catholicism in Iran. In consequence of it, the positions of the Armenian Apostolic (Lusavorchakan) Church would weaken in the Iranian Armenian community, the European orientation of the rich Armenians would strengthen and their extended money and goods turnover would be directed to Europe.

The research titled "The Chronicle of the Carmelites" as a historical source of the 17th and the 18th centuries of Iran" is an attempt to introduce as comprehensively as possible the Catholic orders appeared with the historical, political and economic new formations in the 17th and the 18th centuries and among them particularly the main reasons of the

activities of the Carmelites, the process and the long-range aims and consequences of their active work. It is not a secret that their activities had a particular influence not only on the outer and inner coordination of Iran but it also included the national minorities that lived and functioned in the Iranian environment and especially the Armenians.

The diary records concerning the activities of the Carmelites, the letter-reports and analytical reviews directed to Vatican and other documents contain substantial information for this research. The combination of the latter with other histographical sources and professional debates gives an opportunity to reevaluate some aspects of the Iranian history of the 17th and the 18th centuries that have not been completely examined as well as to touch upon some new viewpoints that can greatly contribute to the Armenian History Studies of the time. As a matter of fact, this work is an attempt of histographical analyses. A two-volume collection of documents "A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, Vol. I-II, London, 1939" that served as the main source for the research was subjected to historical comparison and analysis.

The penetration of the Carmelite monks into Iran was realized in from the perspectives and expectations of the political and economical merging of Iran and Rome. Aiming to deepen the further relations with Europe Shah Abbas I made an unprecedented step announcing about the freedom of Christian belief in Iran and offered to send a permanent representation to Iran. This coincided with the purpose of the Roman Pope Clement VIII and the entry of the Carmelite monks into Iran was realized.

The Iranian governors' own gains and interests gave an opportunity to willingly open "the hospitable doors" of Iran to the Carmelite fathers and other Catholic preachers and merchants in general. The choice of religious preachers who had arrived in Iran had not been made randomly as they had to give accurate information about the economic, political situation of the country, the relations of Iran with foreign countries, royal court, etc. Upon necessity, secular people with different specializations were involved in the Carmelite groups heading to Iran.

The idea that particularly united the Iranian Shahs and Roman Popes was the acquisition of powerfull ally in the region and the perspective of

joint victory. However, the descendants of Shah Abbas realized that Vatican was slow in carrying out its promises, hence they renounced the proposed idea. Through the information provided by the preachers, Rome as well as other European countries specified their plans, realized the intentions or waived them. Although both the governors and the people of Iran outwardly treated the clergymen who had arrived and were living in Iran kindly, yet inwardly they had antipathy to them and in case of need apparently displayed it.


Surely, the established relations between the Carmelite monks and the Persian shahs were established according to their own vital interests. It is known that in every possible way the Persian shahs wanted to keep the Armenians far from the influence of the European countries and mainly Catholic Rome. They realized that if the Armenian Apostolic Church obeyed Rome, they would lose the Iranian Armenians, particularly the Armenians of Jugha who played a great role in the social-economic life of the country.

However they had to allow the activities of the preachers in Iran, as the negative attitude towards them would shatter the basis of foreign trade that was so important for Iran. As to the Catholic preachers, they had to act cautiously not to give a reason to be moved out from Iran. The presence of the Carmelites as well as many other orders in Iran was conditioned by the colonialist land worship of West-European countries and the preaching was a means of penetration for the realization of that policy. Studying the Carmelites' bicentennial activity in Iran, analyzing and making some historical comparison of the information given by them, we express conviction that the Carmelites' Iranian mission was both diplomatic and preaching. Actually, the appearance and then activity of the "white" clergymen in Iran was a special worked out plan "under the veil of spreading the light of the true religion".

Nevertheless parallel to the main purposes of the mission, the Carmelites implemented educational, illuminative activity which was really an important contribution to the people of Iran and particularly to the Iranian Armenians.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՏՊԱԳԻՐ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

 հայերեն

1. Ալիշան Ղ., Սիսական, տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, ի Մխիթարաց Վանս, ի Ս. Ղազար, 1893:
2. Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ Յարընչությունը Հայոց եւ Վենետաց Ի ԺԳ-Դ եւ Ի ԺԵ-Ձ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896:
3. Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ - Ս. Ղազար, 1901:
4. Դարլիժեցի Ա., Գիրք պատմութեանց (Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի), Ե., 1990:
5. Դիւան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, Մասն Ա, Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705թթ.), Անթիլիաս, 2003:
6. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Ե., 1990:
7. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, Ե., 1956:
8. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երկրորդ (1601- 1650), Ե., 1959:
9. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), Ե., 2005:
10. Ջուղայեցի Խ., Պատմություն Պարսից (ԺԸ դար), Վաղարշապատ, 1905:
11. Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբո, Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Աթոռի և նրա հարակից վանքերի, Ե., 2003:

📖 ռուսերեն

12. Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 гг., составленное секретарем посольства **Адамом Олеарием**, Москва, 1870.

📖 անգլերեն

13. **A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries**, v. I, II, London, 1939.
14. **Krusinski J. T.**, The History of the Late Revolutions of Persia, v. I and II, N. Y., 1973.

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

📖 հայերեն

15. **Արգարեան Տ.**, Նոր-Ջուղայի դպրոցները, Նոր-Ջուղա, 1914:
16. **Արրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Ե., 1964:
17. **Ալպոյաճեան Ա.**, Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, Գահիրե, 1961:
18. **Աճառյան Հր.**, Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Ե., 2004:
19. **Աճեմյան Հ.**, Պատմական Թավրիզի հին հայությունը, Գիվան Ատրպատականի հին հայոց պատմության, հ. I, Բեյրութ, 1980:
20. **Առաքելեան Հ.**, Պարսկաստանի հայերը, նրանց անցեալը, ներկան եւ ապագան, Վիեննա, 1911:
21. **Բայրուրյան Վ.**, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996:
22. **Բայրուրյան Վ.**, Իրանն այսօր, Ե., ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1999:
23. **Բայրուրյան Վ.**, Իրանի պատմություն, Ե., 2005:
24. **Բայրուրյան Վ.**, Նոր Ջուղա, Ե., 2007:
25. **Բայրուրյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011:

26. **Դանեղյան Լ. Գ.**, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դ. պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978:
27. **Զամինյան Ա.**, Հայոց եկեղեցու պատմություն, Բ մաս, Նոր Նախիջևան, 1909:
28. **Զուլայան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա., Ե., 1990:
29. **Զուլայան Մ. Կ.**, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII), Ե., 1966:
30. **Ըստկարեան Վ.**, Եկեղեցական պատմություն հանդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ բարձրագոյն դպրոցաց եւ վարժարանաց համար, Վիեննա, Մխիթարեանց տպարան, 1872:
31. **Թաղիադյան Մ.**, Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846:
32. **Լեռ**, Երկերի ժողովածու, գիրք I, հ. III, Ե., 1969:
33. **Լեռ**, Երկերի ժողովածու, հ. V, Ե., 1986:
34. **Լեօ**, Հայկական տպագրութիւն, Հայերը նոր պատմութեան մեջ.- պատմական - գրական տեսութիւն, հ. I, XVI-XVII դդ., Թիֆլիս, 1904:
35. **Լեռ**, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Ե., 1934:
36. **Խաչիկյան Շ. Լ.**, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Ե., 1988:
37. **Կյուլպենկյան Ռ.**, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Ե., 1986:
38. **Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա.**, Հայերեն Զեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620), հ. Ա, Ե., 1974:
39. **Հայ ժողովրդի պատմություն**, հ. IV, Ե., 1972:
40. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, 1959:
41. **Մինասյան Լ. Գ.**, Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Ն. Օ., 1983:

42. Նաջարյան Հ. Խ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Ե., 1961:
43. Չալըմյան Ն., Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ, Ե., 2003:
44. Միմեն դարի Լեհացիոյ Ուղեգրութիւն Տարեգրութիւն և Յիշատակարանք. Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս, Վ. Ակինեան, Վիեննայ, 1936, 493:
45. Ստեփանյան Ա., Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, Իրանահայ գաղթօջախի 17-18-րդ դդ. արհեստագործության պատմությունից, Ե., 2000:
46. Տէր Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա., Նոր Ջուղա, 1880:
47. Տէր Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Բ., Նոր Ջուղա, 1881:
48. Ուղորդեան Մ., Պատմութիւն Հայոց գաղթականութեան եի շինութեան եկեղեցոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի, Վենետիկ, 1891:
49. Քիլիսեան, Յ., Նյութեր հայ վաճառականութեան պատմութեան համար, Հում մետաքսի վաճառականութիւնը եւ հայերը, առանձնատիպ:
50. Օրմանեան Մ., Ազգապատում, մասն Բ., ԿՊ, 1914:
51. Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, ԿՊ, 1911:

📖 նույնին

52. Аннинский А., История Армянской церкви, Кишинев, 1900.
53. Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейский политических и экономический связях), Е., 1969.
54. Беляев Е. А., Иран в средние века, М., 1941.
55. Библиотека иностранных писателей о России, т.1, Спб., 1836.
56. Босворг К. Э., Мусульманские династии, М., 1971.

57. Бушев П. П., История посольств и дипломатических отношений Русского и Иранского государств в 1586-1612гг. (по русским архивам), М., 1976.
58. Васильев Л. С., История Востока, т. I, М., 2003.
59. Всемирная история, период английского завоевания, Минск, том XIV, Москва, 2000.
60. Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, М., 1961.
61. Зулялян М. К., Армения в первой половине XVI в., М., 1971.
62. Иванов М. С., Очерк Истории Ирана, М., 1952.
63. История религии, т. II (под общей редакцией И. Н. Яблокова), М., 2004.
64. История средних веков, Раннее новое время (под ред. С. П. Карпова), т. II, М., 2003.
65. История Ирана с древнейших времен до конца XVIII века, Л., 1958.
66. История дипломатии, М., 2005.
67. Лозинский С. Г., История Папства, М., 1986.
68. Лысцов В. П., Персидский поход Петра I, 1722-1723гг., М., 1951.
69. Новичев А. Д., Турция, краткая история, М., 1965.
70. Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIX вв., Л., 1949.
71. Рудных С., Иран, М., 1940.
72. Тер-Аветисян С. В., Город Джуга, материалы по истории торговых сношений джюльфинских купцов XV-XVII вв., Тбилиси, 1937.
73. Чулков М. В., Историческое описание Российской коммерции при всех портах и границах от древнейших времен до ныне настоящего и всех преимущественных узаконений по опой Государя Император Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Екатерины Великой, т. II, кн. II, СПб., 1785.
74. Шейнман М. М., Ватикан и католицизм на службе международной реакции, М., 1954.

75. **Эзов Г. А.**, Сношения Петра Великого с армянским народом, /документы/, СПб, 1898.
76. **Фехнер М. В.**, Торговля Русского Государства со странами Востока в XVI веке, М., 1956.

📖 անգլերեն

77. **Armajani Yahya**, Middle East , Past and Present, N. J., 1970.
78. **Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries**, English East India Company Sources, ed. by V. Baladouni and M. Makepeace, Philadelphia, 1998.
79. **Baibourtian V.**, International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.
80. **Carswell J.**, New Julfa-The Armenian Churches and other buildings, Oxford, 1968.
81. **Chougassian V.**, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, University of Pennsylvania, Armenian Texts and Studies 14, Atlanta, Georgia, 1998.
82. **Missionary Researches in Armenia**, London, 1834.
83. Persia by Brigadier-General, sir **Percy Sykes**, Oxford, 1922.
84. **Savory R.**, Iran under the Safavids, Cambridge, 1980.
85. **Sykes P.** , A History of Persia, v. II, London, 1951.
86. **The Cambridge Medieval History**, v. VI, Cambridge, 1936.
87. **The Contribution of the Armenian Church to the Christian Witness in the Middle East**, ed. by S. Dadoyan, Arm. Catholicosate of Cilicia, Antelias-Lebanon, 2001.
88. **Waddington R. G.**, History of the Church from the Earliest Ages to the Reformation, London, Baldwin and Cradock, Paternoster Row, MDCCCXXXIII.
89. **William S. Haas**, Iran, N. York, 1946.
90. **Wilson T.**, The Persian Gulf, London, 1959.

91. اسکندر بیک ترکمان(منشی) تاریخ عالم آرای عباسی جلد ۱ تهران ۱۳۳۴.
92. تاریخ ایران (از صفویه تا حوران معاصر) جلد ۲، تهران ۱۳۷۷.
93. تاریخ ایران دوره صفویان پژوهش از دانشگاه کمبریج، تهران ۱۳۸۰.
94. عبدالحسین نوائی روابط سیاسی ایران و اروپا در عصر صفوی تهران ۱۳۷۲.
95. دکتر مریم میراممدی دین و دولت در عصر صفوی تهران ۱۳۶۹.
96. دکتر لطف الله هنرفر آشنایی با شهر تاریخی اصفهان اصفهان ۱۳۷۳.
97. راجر سیوری ایران عصر صفوی تهران ۱۳۷۲.
98. نصرالله فلسفی زندگانی شاه عباس اول جلد ۱-۲ تهران ۱۳۷۱.
99. نصرالله فلسفی زندگانی شاه عباس اول جلد ۳، تهران ۱۳۷۱.
100. جدالعظیم رضایی تاریخ ده هزا ساله ایران جلد سوم تهران ۱۳۷۳.

ՀՈՂՎԱԾՆԵՐ

հայերեն

101. Ալիմնեան Հ., Մովսես Գ. Տաբևացի կաթողիկոս, կյանքն եւ գործունեութիւնը, Հանդէս ամսօրեայ հայագիտական ուսումնաթերթ, քիւ 11,12, նոյեմբեր-դեկտեմբեր, Վիեննա:
102. Բայբուրդյան Վ. Ա., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, «Տեղեկագիր», Ե., 1964, N9:
103. Բայբուրդյան Վ. Ա., Հայաստանի ազատագրման խնդիրը և ջուղայահայ առևտրական բուրժուազիան XVI – XVII դարերում, XVI – XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հողվածների ժողովածու) Ե., 1989:
104. Բայբուրդյան Վ. Ա., Նոր Ջուղայի վաճառականությունը և արևմտակրոնական կապիտալի տնտեսական էքսպանսիան Իրանում, Պատմա-բանասիրական հանդես, 1966, N0 3(34):
105. Բայբուրդյան Վ. Ա., Իրանահայերի մասնակցությունը իրանակրոնական հակաբուրքական դաշինք ստեղծելու փորձերում (XVI-XVII դդ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, N 9 (501):

106. **Քայրուրդյան Վ.**, Հայերը և Լևանտյան առևտուրը XVII դարում, Պատմա-բանասիրական հանդես, N 2(109), Ե., 1985:
107. **Քայրուրդյան Ա.**, XVII դ. Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, 1(124), Ե., 1989:
108. **Քայրուրդյան Ա.**, Կարմեյանների միաբանության միսիոներների գործունեությունն իրանահայության շրջանում (XVII դ.), Լրաբեր հասարակական գիտությունների, 11(551), Ե., 1988, մոյեմբեր:
109. **Դանեղյան Լ Գ.**, Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. IV, Իրան, Ե., 1969:
110. **Ջեքիյան Պ. Լ.**, Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1(100), Ե., 1983:
111. **Ջուլյան Մ.**, Հայոց պատմության հարցերը իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալլեի աշխատություններում, Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Ե., 2005:
112. **Կարապետյան Մ. Մ.**, «Իման Ջաֆարի» օրենքը և արևելահայերը /XVII-XVIII դդ./, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, Ե., 1988:
113. **Կարապետյան Մ., Թաջիրյան Է.**, Էջեր XVII դ. վերջի Նոր Ջուղայի պատմությունից, Բանբեր Երևանի համալս., N2(95) Ե., 1998:
114. **Կոստիկյան Զ.**, Սեֆյան շահեր Սուլեյմանի, Սուլթան Հուսեյնի և Թահմասպ II-ի՝ Երևանի մատենադարանում պահվող հրովարտակները, Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), Ե., 2002:
115. **Կոստիկյան Զ.**, Կաթոլիկական քարոզությունը Իրանում և հայ իրականությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXI, Ե., 2002:
116. **Հակոբյան Տ. Հ.**, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIIIդդ.), Արևելագիտական ժողովածու, հ. I, Ե., 1960:
117. **Մարտոյան Թ.**, Կարմեյան միաբանության ներթափանցումն Իրան, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Ե., 2004:

118. **Չոբանյան Պ.**, Հայ-ջենովական հարաբերությունների պատմությունից (Նոր վավերագրեր), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Ե., ՀՀ ԳԱԱ, 1998, հ. XVII:

119. **Փափազյան Հ.**, Մեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, թիվ 3, Ե., 1956:

ռուսերեն

120. **Байбуртян В. А.**, Посредническая роль новоджувльфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII в., “Краткие сообщения Института Народов Азии АН СССР”, М., N 77, 1964.

121. **Семенова Л. А.**, Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, М., 1962, Ближний и Средний Восток, сборник статей, М., 1962.

122. **Курбанова Ч.**, О роли кармелитов в установлении дипломатических отношений сефевидского государства с западными странами в период правления шаха Аббаса I, Известия Академии наук Азербайджанской ССР, Серия истории, философии и права, Баку, 1974.

անգլերեն

123. **E. Groseclose**: The Carmelite, The Middle East Journal, v. 9, N 4, Washington, 1955.

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐ

հայերեն

124. **Բայրուրյան Վ., Հարությունյան Մ.**, Նոր Ջուղա, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Ե., 1982:

📖 **ռուսերէն**

125. Советский энциклопедический словарь, М., 1989.

📖 **անգլերէն**

126. Encyclopaedia Britannica, v. IV, Chicago, London, Toronto, 1961.

127. Encyclopaedia Iranica, v. I, London, Boston, Henley, 1985.

128. Encyclopaedia Iranica, v. VIII, London, Boston, Henley, 1998.

129. The new Encyclopaedia Britannica, v. VI, Chicago, 1984.

ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

130. Apostolic Presentation, St. Joseph OCDS Community, Clayton, Missouri, June 20, 2001, <http://www.ourgardenofcarmel.org/stlocds.htm>

131. Charles L. Souvay, The Encyclopedia, v. V, <http://www.newadvent.org/cathen/05381b.htm>

132. Loughlin J. F., Pope Paul V, The catholic encyclopedia, v. XI, 1911, <http://www.newadvent.org/cathen/11581b.htm>

133. Moriones, Theresian Carmel, Pages of history, Rome, 1978, p. 2, <http://www.ocd.pen.net/histo-1.htm>

134. The Carmelite Order, The Catholic Encyclopedia, v. III, <http://carmelnet.org/chas/rule.htm>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆ ԲԱՐԵՄՒՏ ԸՆԹԵՐՅՈՂԻՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԸ ՇԱՀ ԱՔԲԱՍ Ա-Ի ՕՐՈՔ

1. Սեֆյան շահ Աքբաս Ա-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Իրանա-եվրոպական բանակցային գործընթացն ու կաթոլիկ քարոզչությունը..... 12
2. Կարմեյան միաբանությունն ու նրա հետաքրքրություններն Իրանի նկատմամբ: Իրան ներթափանցման սկիզբը..... 31

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ

1. Շահ Աքբաս Ա-ի կառավարման շրջանն ըստ «Կարմեյանների տարեգրության»: Հայր Ջոն Թադդեոսի գործունեությունը..... 52
2. Կարմեյան միաբաններն ու իրանահայ գաղութը: Հայերի հայտնվելն Իրանում և գաղթօջախի հիմնումն ըստ «Կարմեյանների տարեգրության»..... 65

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍ 18-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶՔ ԸՆԿԱՏ ԺԱՍՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

1. Շահ Աքբաս Ա-ի հետնորդների (Սաֆի Ա, Աքբաս Բ, Սուլեյման Ա (Սաֆի Բ), Սուլթան Հուսեյն) գործունեությունն ըստ «Կարմեյանների տարեգրության»..... 83
2. Կարմեյանների գործունեության ավարտն Իրանում..... 116

ԱՄՓՈՓՈՒՄ 126

SUMMARY 129

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԳՔՅՈՒՐՆԵՐԻ

ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՄՆԿ 132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ

**«ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ
17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ**

ՄՐԱԳԻՐ՝ ԱՆԺԵԼԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:
Ֆորմատ՝ 70x100 1/16, թուղթ՝ օֆսեթ, N 1:
Ծավալ՝ 9 տպ. մանուլ:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Պուշկին 40, տարածք 76, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am

ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ



FL0316460

ՀՀ ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ
Մեծ Բրնձի փողոց, 10
Երևան, Հայաստան
2 001017 816012
ՀՀ ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ
2500 00 01

A 11
100099

